



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՂԱՏՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 105 2018

ՀՀ ԴԱՏԱԽԱՂԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան Հայաստանի Հանրապետության ատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 17.05.2018թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,5 պայմ. մասով
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Տպագրված է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հոփսիմե Խաչատրյան Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների սոցիալ-ժողովրդագրական քննությամբ	3
Հայկ Մկրտչյան Անձի անվտանգության պաշտպանության քրեաիրավական ասպեկտները գլոբալացման պայմաններում	8

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գայանե Մելիքյան Մրցակցությունը՝ դատական քննության ընթացքում	12
Ջորայր Հարությունյան Համացանցում տեղակայված տեղեկատվությունը հավաքելու դատավարական առանձնահատկությունները	18

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լուսինե Բարսեղյան Երկրի պաշտպանության խնդրի (նպատակի) լուծման կառուցակարգի հնարավոր սահմանադրական ուղիները: Պաշտպանության գործառնյթ, թե՛ պաշտպանության սկզբունք	23
Մարտին Մանուկյան Խորհրդարանական փոքրամասնության իրավունքների ընդլայնումը՝ ըստ 2015թ. սահմանադրական փոփոխությունների	31
Հայկ Հարությունյան Պետական կառավարման ձևը որպես ազգային անվտանգության հիմնախնդիր	34
Գոռ Հովհաննիսյան Կուսակցությունների գործունեության կասեցումն ու արգելումը	40

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աննա Հակոբյան Նախադեպային իրավունքը անգլոսաքսոնական իրավական համակարգում պատմաիրավական տեսանկյունից	51
---	----

ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Սիմոնյան Սուպրանացիոնալիստական կազմակերպությունների կողմից մշակված իրավական ակտերի ինկորպորացիան և գործադիր իշխանությունը	56
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	61
-----------------------------------	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	72
--	----

ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱԼ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի
և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս,
ոստիկանության մայոր,
Երևանի պետական համալսարանի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԽՄԲԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՆՁԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Անչափահասների խմբային հանցավորության և առհասարակ անչափահասների հանցավորության քրեաբանական բնութագրի բացահայտումը չի կարող լիարժեք լինել առանց հանցանք կատարած անչափահասի անձի ուսումնասիրության:

Ինչպես նշում է Յու. Անտոնյանը. «Հանցագործությունների կանխարգելման հաջողության կարելի է հասնել, եթե ուշադրությունը կենտրոնացված լինի հանցագործի անհատականության վրա, քանի որ վերջինս է հանցագործությունների կատարման պատճառների կրողը: Նման վարքագիծ ծնող նրա առանձնահատկությունները պետք է լինեն կանխարգելիչ ներգործության անմիջական օբյեկտ»¹:

Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի անձի անհատականությունը նման կատեգորիայի անձանց շրջանում առավել տարածված հատկանիշների ամբողջությունն է: Այդ հատկանիշները, որոնք կազմում են անձի բնութագիրը՝ սեռը, տարիքը, գիտակցական և կամային ունակությունները, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները և այլն, բնութագրական են ցանկացած անհատի: Դրա հետ մեկտեղ, ի հայտ բերելով հանցանք կատարած անձանց մեջ որոշակի հատկանիշների դրսևորման հարաբերականորեն բարձր հաճախություն, կարելի է վերլուծել խմբի կազմում

հանցագործություն կատարած անչափահասների անհատականությունը²:

Անհատականության հասարակական վտանգավորությունը ձևավորվում է մինչև հանցանք կատարելը և դրսևորվում է նախահանցավորային վարքագծի առանձնահատկություններում, երբ հավանականություն կա կանխարգելիչ ներգործության արդյունավետ իրականացման համար:

Առավել հաճախ հանցագործի անհատականության ուսումնասիրման համար օգտագործում են սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական, ինչպես նաև քրեաիրավական հատկանիշները³:

Հաշվի առնելով դիտարկվող հիմնախնդրի բարդությունը՝ այս աշխատանքի շրջանակում մենք կներկայացնենք միայն խմբի կազմում հանցանք կատարած անձանց բնութագրի վերլուծությունն ըստ սոցիալ-ժողովրդագրական հատկանիշի:

Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները կազմում են հանցագործի անհատականության ուսումնասիրման հիմքը, ուստի դրանք պետք է ուսումնասիրվեն առաջին հերթին: Տարիքը, սեռը, կրթությունը, ընտանեկան և սոցիալական կարգավիճակը անձի բնութագրման առաջին ցուցանիշներն են, ուստի դիտարկվում են որպես անհատի օբյեկտիվ բնու-

¹ Տե՛ս Անտոնյան Յու.Մ. Криминология. Избранные лекции.– М.: «Логос», 2004, էջ 74:
² Տե՛ս Курганов СИ. Теоретические вопросы изучения личности преступника //Личность преступника и предупреждение преступлений: Сборник научных трудов – М, 1987.– էջ 26-34:
³ Տե՛ս Криминология: Учебник, под ред. В.Н. Кудрявцева и В.Е. Эминова – 3-е изд., перераб. и доп.– М., «ЮристЪ», 2007, էջ 155-165, Криминология: Учебник, для вузов, Под ред. проф.В.Д. Малкова.– 3-е изд., перераб. и доп.– М., : ЗАО «Юстицинформ», 2008, էջ 84-91, Сорокотягин И.Н. Социально-психологическая характеристика личности несовершеннолетнего обвиняемого и ее установление в следственной практике, Вопросы совершенствования борьбы с преступностью несовершеннолетних: Межвузовский научный сборник.– Уфа, 1983.– էջ 39-42:

թագրիչ: Դա, իր հերթին, անհատի սոցիալական դերի մակարդակն է⁴:

Մենք հետազոտությունն իրականացրել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 24.06.2016 թվականին ստացված ՀՀ դատական դեպարտամենտի Ե-4102 գրությամբ տրամադրված 2010-2015 թվականների քրեական գործերի ցանկի հիման վրա www.datalex.am կայքից վերցրած փորձառնական նյութերի տվյալների ուսումնասիրությամբ:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է 2010-2015թթ. ժամանակահատվածում անչափահասների հանցավոր խմբի կազմում հանցանք կատարած 394 անչափահասի անհատականություն: Ըստ վերոնշյալ տարիների՝ հանցանք կատարած անչափահասների քանակական բնութագիրն ունի հետևյալ պատկերը (տես աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Տարի	2010	2011	2012	2013	2014	2015	Ընդամենը
Խմբի կազմում հանցանք կատարած անչափահաս. քանակ	58	98	42	66	75	55	394

Առաջին հատկանիշը, որով կսկսենք մեր վերլուծությունը, **տարիքն է**: Տարիքը կարևոր ցուցանիշ է ուսումնասիրվող կատեգորիայի անձանց քրեաձին ակտիվությունը բացահայտելու համար:

Մենք առանձնացրել ենք տարիքային չորս

խմբեր՝ 14 տարեկաններ, 15 տարեկաններ, 16 տարեկաններ և 17 տարեկաններ: Ըստ տարիքային չափանիշի խմբի՝ կազմում հանցանք կատարած անչափահասներն ունեն հետևյալ պատկերը (տես աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Տարի	Տարիքային խմբերի տեսակարար կշիռը ըստ տարիների՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների ընդհանուր քանակում						
	2010	2011	2012	2013	2014	2015	միջինացված ցուցանիշ
14 տարեկան	5,2%	11,2%	9,5%	9,1%	8,0%	12,7%	9,3%
15 տարեկան	5,2%	22,5%	14,3%	21,2%	16,0%	32,7%	21,8%
16 տարեկան	29,3%	30,6%	42,9%	30,3%	25,3%	30,9%	31,6%
17 տարեկան	41,4%	35,7%	33,3%	39,4%	50,7%	23,7%	37,3%

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ նշված ժամանակահատվածում խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների մեջ ըստ միջինացված ցուցանիշի գերակշռում են 17 տարեկանները, այնուհետև՝ 16 տարեկանները, 15 տարեկանները և 14 տարեկանները: Չնայած այն հանգամանքին, որ 14 տարեկան անչափահասների տեսակարար կշիռը նշված ժամանակահատվածում միջին հաշվարկով կազմում է 9,3%, սակայն նկատվում է

նրանց քրեական ակտիվության մակարդակի բարձրացման միտում, քանի որ 2010թ. խմբի կազմում հանցանք կատարած 14 տարեկան անչափահասների տեսակարար կշիռը կազմում է 5,2%, որը մինչև 2015թ. ընկած ժամանակահատվածում աճել է ավելի քան կրկնակի անգամ և կազմում է 12,7%: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել կանխարգելման միջոցներ մշակելիս:

Խմբի կազմում հանցագործություն կատա-

⁴ Տես Игнатов А.Н. Социально-демографическая и уголовно-правовая характеристика личности современного насильственного преступника // Криминология: вчера, сегодня, завтра. 2015. №4 (39). URL: <https://cyberleninka.ru/article/n/sotsialno-demograficheskaya-i-ugolovno-pravovaya-harakteristika-lichnosti-sovremennogo-nasilstvennogo-prestupnika> (дата обращения: 23.03.2018).

րած 15 տարեկան անչափահասների տեսակարար կշիռը նշված ժամանակահատվածում միջին հաշվարկով կազմում է 21,8%: Այստեղ ևս ուշագրավ է այն հանգամանքը, որ 2015թ. ընթացքում, 2014թ. համեմատ, խմբի կազմում հանցանք կատարած 15 տարեկան անչափահասների տեսակարար կշիռը կրկնակի անգամ աճել է: Խմբի կազմում հանցագործություն կատարած 16 տարեկան անչափահասների տեսակարար կշիռը նշված ժամանակահատվածում միջին հաշվարկով կազմում է 31,5%: Տարիքային այս խմբի հանցավոր ակտիվությունը բավականին բարձր է եղել 2012թ.՝ կազմելով խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 42,9%, այնուհետև նվազել է: Սակայն այստեղ ևս 2015թ. ընթացքում, 2014թ. համեմատ, խմբի կազմում հանցանք կատարած 16 տարեկան անչափահասների տեսակարար կշիռը 5,6%-ով աճել է:

Ինչ վերաբերում է խմբի կազմում հան-

ցանք կատարած 17 տարեկան անչափահասներին՝ նրանց տեսակարար կշիռը կազմում է միջին հաշվարկով 37,4%: Այս տարիքային խմբի հանցավոր ակտիվությունը բավականին բարձր է եղել 2014թ.՝ կազմելով խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 50,7%, իսկ 2015թ. անկում է ապրել՝ կազմելով 23,7%:

Այսպիսով, ըստ տարիքային հատկանիշի՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների հանցավոր ակտիվությունը բարձր է 17 տարեկանների շրջանում, այնուհետև՝ 16 տարեկանների: Սակայն ուշագրավ է հատկապես 14 տարեկանների հանցավոր ակտիվության մակարդակի կրկնակի աճը:

Ըստ **սեռային** հատկանիշի՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի անձի բնութագիրն ունի հետևյալ պատկերը (տես աղյուսակ 3).

Աղյուսակ 3

Սեռ	Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների ընդհանուր քանակում ըստ սեռային հատկանիշի անչափահասների տեսակարար կշիռը					
	2010	2011	2012	2013	2014	2015
Տարի	2010	2011	2012	2013	2014	2015
Արական	100%	99,0%	95,2%	97,0%	97,3%	100%
Իգական	0%	1,0%	4,8%	3,0%	2,7%	0%
Ընդհանուր	58	98	42	66	75	55

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների մեջ գերակշռում են տղաները: Նշված ժամանակահատվածում խմբի կազմում հանցանք կատարած անչափահաս աղջիկների տեսակարար կշիռը միջին հաշվով կազմում է 1,9%: Այսինքն՝ աղջիկ անչափահասներին բնութագրական է հանցավոր ակտիվության ցածր մակարդակը և այն էլ բնորոշ է 16-17 տարեկաններին: Աղջիկ անչափահասները գործել են խառը խմբերի կազմում, արական սեռի ներկայացուցիչների հետ:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ նշված ժամանակահատվածում հանցանք կատարած անչափահասների մեջ օտարազգի ներկայացուցիչները չեն տուներ կազմում:

Նրանց տեսակարար կշիռն ընդհանուր թվում կազմում է ընդամենը 2,3%: Բոլորն էլ արական սեռի ներկայացուցիչներ են:

Առավել կարևոր նշանակություն ունի անչափահասների վերաբերմունքն ուսման նկատմամբ: Քրեաբանական բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասները գրեթե լիովին անտարբեր են ուսման նկատմամբ, ինչն էլ խոչընդոտում է նրանց զարգացումը, սոցիալիզացիան, հետաքրքրությունների լայն շրջանակի առաջացումը, կործանարար ազդեցություն է ունենում նրանց հանրորեն օգտակար վարքագծային ակտիվության, իրավագիտակցության կայացման վրա⁵:

Անձի սոցիալական կարգավիճակը նշա-

⁵ Տե՛ս Մարգարյան Ա.Ռ., Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի հիմնախնդիրները ՀՀ-ում, իրավ. գիտ. դոկտ. գիտ. աստ. հայցման ատենախոսություն, Երևան, 2017թ, էջ 62:

նակալից չափով պայմանավորված է կրթական մակարդակով:

Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների կրթական մակարդակը որոշակի չափով կարող է վկայել այս կատեգորիայի անձանց ինտելեկտուալ կարողությունների մասին, ինչը հարկավոր է հաշվի առնել հանցավորության կանխարգելման միջոցներ իրականացնելիս: Բազմաթիվ հետազոտություններով հաստատվել է հանցանք կատարած անձանց հարաբերականորեն ցածր կրթական մակար-

դակը: Այս օրինաչափությունը բնութագրական է նաև անչափահաս հանցանք կատարած անձանց համար: Ի դեպ, քրեաբանական գրականության մեջ նշվում է, որ իրենց օրինապահ հասակակիցներից հանցանք կատարած անչափահասները կրթական մակարդակով ետ են մնում մեկից երեք տարի⁶:

Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների կրթական մակարդակն ունի հետևյալ պատկերը (տես աղյուսակ 4).

Աղյուսակ 4

Տարի	2010	2011	2012	2013	2014	2015	Միջինացված ցուցանիշ
Մինչև 9-րդ դաս. կրթ.	38,2%	37,6%	24,4%	35,6%	13,5%	16,7%	27,7%
9-ամյա կրթությամբ	3,6%	8,6%	4,9%	10,2%	17,6%	20,4%	10,9%
Դպրոցի սովորող	25,4%	29,1%	36,5%	18,6%	24,3%	14,8%	24,8%
Միջնակարգ կրթությամբ	21,8%	11,8%	22,0%	23,7%	31,1%	25,9%	22,7%
Քոլեջի, ուսումնարանի սովորող	5,5%	8,6%	12,2%	8,5%	9,5%	14,8%	9,8%
Ուսանող	5,5%	4,3%	-	-	1,3%	1,9%	2,2%
Միջին մասնագիտ. կրթ.	-	-	-	3,4%	2,7%	5,5%	1,9%
Խմբի կազմում հանցանք կատարած անչափ. ընդհ. թիվը	58	98	42	66	75	55	394

Կատարված ուսումնասիրության արդյունքով կազմված աղյուսակից պարզ է դառնում, որ, ըստ կրթական մակարդակի նշված ժամանակահատվածում՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 27,7% ունեցել են մինչև 9-ամյա կրթություն: Չնայած խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների ընդհանուր թվի մեջ միջինացված ցուցանիշի բարձր մակարդակին, այս խմբում նկատվում է անչափահասների նվազում՝ 2010 թվականին ունենալով 38,2% տեսակարար կշիռ, 2015 թվականին կազմում է 16,7%: Սակայն այս ցուցանիշի նվազումը կատարվում է խմբի կազմում հանցանք կատարած, ուսումնական հաստատություններում սովորող անչափահասների քանակի ավելացման հաշվին: Այսպես՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 36,8% եղել են սովորողներ (դպրոցի, ուսում-

նարանի, քոլեջի և ԲՈՒՀ-ի): Ընդ որում՝ դպրոցում սովորողների տեսակարար կշիռը միջին հաշվարկով կազմում է 24,8%: Դպրոցում սովորողների քրեական ակտիվությունը բարձր է եղել 2012թ.՝ կազմելով 36,5%: Ընդհանուր առմամբ՝ նկատվում է դպրոցում սովորողների քրեական ակտիվության նվազում: Ի տարբերություն դպրոցում սովորողների՝ նկատվում է ուսումնարանի և քոլեջի սովորողների քրեական ակտիվության աճ: 2010թ. այս խմբի տեսակարար կշիռը կազմում էր 5,5%, իսկ մինչև 2015թ. ընկած ժամանակահատվածը որոշակի տատանումներով աճելով կազմում էր 14,8%: Այս հանգամանքը ևս կարևոր է և պետք է հաշվի առնել կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելիս: Ինչ վերաբերում է անչափահաս ուսանողներին՝ նրանց քրեական ակտիվությունը ցածր է, և նվազման միտում է նկատվում. նշված ժա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

⁶ Сեն Прокументов Л.М. Групповая преступность несовершеннолетних и ее предупреждение: дис.... докт. юрид. наук: 12.00.08.– Томск, 2001, էջ 122:

մանակահատվածի սկզբնական շրջանում կազմում է 5,5%, սակայն ընթացքում նվազում է և 2015թ. կազմում 2,2%: Եվ, ի տարբերություն ուսանող անչափահասների՝ 2013թ. սկսած՝ նկատվում է միջին մասնագիտական կրթություն ունեցող անչափահասների քրեական ակտիվության աճ՝ 3,4%-ից 2015թ. արդեն կազմելով 5,5%:

Այսպիսով, ըստ հետազոտության արդյունքների՝ մտահոգիչ է հատկապես 9-ամյա կրթություն ունեցող խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների խումբը, քանի որ, չչարունակելով կրթությունը և չունենալով աշխատանք, նրանք փաստորեն դուրս են մնում սոցիալական վերահսկողությունից: Անհանգստացնող է նաև ուսումնարանի կամ քոլեջի սովորողների քրեական ակտիվության աճը, քանի որ, ի տարբերություն դպրոցի սովորողների, երբ պատճառների հիմքում շատ հետազոտողներ դնում են դպրոցական դաստիարակության

թերությունները⁷, այստեղ անչափահասներն ստանում են նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն, հետևաբար՝ կարծում ենք, որ սոցիալական վերահսկողության թերություններին այստեղ գումարվում են նաև այս հաստատությունների սահմանափակ հնարավորություններն անձի անհատականության դրսևորման համար:

Մտահոգիչ է հատկապես չսովորող և չաշխատող խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների վիճակագրությունը: Հետազոտության արդյունքների համաձայն՝ նշված ժամանակահատվածում աշխատող անչափահասների տեսակարար կշիռը խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների ընդհանուր քանակում ունի հետևյալ պատկերը (տես աղյուսակ 5)։

Աղյուսակ 5

Սեռ	Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների ընդհանուր քանակում աշխատող անչափահասների տեսակարար կշիռը						
	2010	2011	2012	2013	2014	2015	միջինացված ցուցանիշ
Տարի							
Աշխատող անչափահասների տեսակարար կշիռը	0%	3,1%	0%	3,0%	10,7%	12,7%	4,9%
Ընդհանուր	58	98	42	66	75	55	394

Ինչպես տեսնում ենք՝ նշված ժամանակահատվածում խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների մեջ աշխատող անչափահասների տեսակարար կշիռը փոքր է: Ընդհանուր առմամբ՝ նկատվում է այս կատեգորիայի անչափահասների տեսակարար կշռի աճման միտում՝ 2010թ. լինելով 0%, մինչև 2015թ. աճելով կազմել է 12,7%, ինչը, կարծում ենք՝ հանցանք կատարած անձի անհատականության բնութագրի վատացման միտում է:

Այսպիսով՝ հետազոտությունը թույլ տվեց բացահայտել խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների սոցիալ-ժողովրդագրական բնութագրի առանձնահատկությունները և վատացման միտումները, որոնք մեծապես պայ-

մանավորված են անձի սոցիալականացման ինստիտուտների գործունեության թերություններով և անկատարությամբ: Հետևաբար՝ հանցավորության, մասնավորապես՝ անչափահասների հանցավորության, կանխարգելման միջոցներ մշակելիս հարկավոր է թիրախավորել անչափահասների հանգստի, ուսման, աշխատանքի կազմակերպման պայմանները, այդ թվում՝ իրավական ակտերի փոփոխման, համապատասխան հաստատությունների նյութատեխնիկական հնարավորությունների բարելավման, կադրային քաղաքականության ու կառավարման ոլորտների արդյունավետության բարձրացման միջոցով:

⁷ Տես նույն աշխատությունը, էջ 120:

ՀԱՅԿ ՄԿՐՏՉԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ ԳՈՐԲԱԼԱՋՄԱՆ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գլոբալիզացիան դառնում է արդի ժամանակների հիմնական թեմաներից մեկը: Սա հիմնարար խնդիր է, որն արտահայտում է մարդկային քաղաքակրթության զարգացման գլխավոր ուղղությունը և նոր հազարամյակի հիմնական հակասությունը: 20-րդ դարի հիմնական խնդիրը երկու համաշխարհային համակարգերի հակասությունն էր: Ժամանակակից պայմաններում դա դառնում է «չորրորդ սերնդի քաղաքակրթության փոխազդեցությունը գլոբալիզացիայի արագացող գործընթացի պայմաններում»:¹

Գլոբալիզացիան բազմամակարդակ գործընթաց է, դրա հետևանքները միատեսակ չեն և անկանխատեսելի են:

Գլոբալացումը առաջացնում է ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային նշանակություն ունեցող բազմաթիվ քրեագիտական առումով նշանակալից հետևանքներ: Տեղի ունեցող գլոբալ փոփոխություններն աշխարհում ստեղծում են կյանքի սպառնալիք ինչպես առանձին անձանց և սոցիալական արժեքների, այնպես էլ կենդանի բնության համար:

Այս համայնապատկերի վրա մարդու, հասարակության ու պետության անվտանգության ժամանակին ապահովումը դառնում է համաշխարհային և ազգային մասշտաբի հիմնարար խնդիր:

Հանցավորության դեմ պայքարի ոլորտում արժեքային-նորմատիվ գերակայությունների փոփոխությունները, որպես բարձրագույն սոցիալական արժեքի պահպանության հոչակում, ունեն հիմնարար նշանակություն ժամանակակից քրեական քաղաքականության համար: Սա-

կայն ՀՀ Սահմանադրությունում չի նշվում մարդու և քաղաքացու անվտանգության մասին: Ինչպես արդարացիորեն նշում էր պրոֆեսոր Ա. Ա. Տեր-Ակոպովը. «Մարդու անվտանգությունը չի վերաբերում միայն նրա իրավունքներին ու ազատություններին, դա ավելի մեծ երևույթ է, քան կյանքի իրավունքը, որը դարձնում է կյանքն անհատի անձնական գործ, իրականում մարդու անվտանգությունն ամբողջ հասարակության գործն է»:²

Ավանդապես, քաղաքացու, հասարակության անվտանգություն ասելով, հասկանում ենք արտաքին անվտանգությունը, քանի որ տասնամյակներ շարունակ մեր գիտակցության մեջ արմատացել է արտաքին թշնամու կերպարը: Որպես դրա հետևանք՝ ներքին անվտանգության խնդիրները՝ հանցավորություն, էկոլոգիական, տեղեկատվական, հոգևոր և այլ տեսակի անվտանգություն, մնում էին ստվերում:

Մեր կարծիքով՝ նպատակահարմար կլիներ ու ճիշտ Սահմանադրությունում մատնանշել մարդու, հասարակության, պետության ազգային անվտանգության ապահովումը որպես քաղաքական, սոցիալական, տնտեսական, տեխնիկական, էկոլոգիական, այնպես էլ այլ բնույթի արտաքին ու ներքին սպառնալիքներից՝ նկատի ունենալով հանցավորությունը: Այս գործառույթի իրականացումը պետք է դրվի պետության վրա: Ազգային անվտանգության ապահովումը, որը Տեր-Ակոպովը առաջարկում է նշանակել սոցիալական անվտանգություն միասնական եզրույթով, պետք է ներկայացվի եղած տարբեր ներուժի և հնարավորությունների հաշվառմամբ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

¹ Стен Харабет К.В. Вызовы и угрозы криминальной безопасности человека и государства в России в свете проблем глобализации. В кн.: Криминальная безопасность человека: угрозы и пути их преодоления: Сб. науч. тр.//Науч. ред. К. В. Харабет, М., Изд-во МНЭПУ, 2003, էջ 6:

² Стен Тер-Акопов А.А. Безопасность человека, теоретические основы социально-правовой концепции, М. МНЭПУ, 1998, էջ 5:

Տվյալ դրույթները դարձել են իրավական հենք Հայաստանի ազգային անվտանգության նոր դոկտրինի մշակման համար, այդ թվում նաև՝ հանցավորության դեմ պայքարի ոլորտում:

Անվտանգության համակարգի ժամանակակից հասկացության կատեգորիալ ապարատը բավականին հարուստ է: Պետք է ներկայացնել անվտանգության հետևյալ սահմանումը. «Անվտանգությունը ներքին ու արտաքին սպառնալիքներից սոցիումի և նրա կառուցվածքների կենսակարևոր շահերի պաշտպանվածության զարգացման միտման վիճակ է»:³

Մարդու անվտանգության ապահովման խնդրի լուծման համար բացառիկ նշանակություն կունենա ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նոր հայեցակարգի մշակումը, որում պետք է սահմանվեն անձի, հասարակության և պետության՝ արտաքին ու ներքին սպառնալիքներից պետության, հասարակության, անձի անվտանգության ապահովման առավել ընդհանուր ուղիները:

Սահմանադրությունում մարդու հիմնական իրավունքերի և ազատությունների ամրագրումն անվտանգության ապահովման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Պետության խնդիրը պետք է կայանա մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանվածության, գնահատման ու ժամանակին բացահայտման, ինչպես նաև համապատասխան սպառնալիքների վերացման ու սպառնալիքների հնարավոր աղբյուրների կանխարգելման մեջ: Այդ նպատակով էլ մարդու իրավունքների ու ազատությունների սահմանադրական կարգավորման արդյունավետությունը պետք է արտահայտվի ոչ միայն անձի ազատության չափի ամրագրման, այլ նաև կամայականությունից ու անօրինականությունից նրա պաշտպանվածության մեջ: Այս խնդրի իրացման գործում կարևոր տեղ է տրվում պետության քրեական քաղաքականությանը:

Մարդու անվտանգության ապահովումը պետք է դիտարկել որպես քրեական քաղաքականության նոր ուղղություն: Այսպիսի եզրակացությունը բխում է մի շարք սահմանադրա-

կան նորմերից: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն. «1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անբալկտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

ՀՀ Քրեական օրենսգրքում տվյալ սահմանադրական դրույթները պետք է կոնկրետացվեն քրեական իրավունքի առանձին սկզբունքների տեսքով: Քրեական քաղաքականության ժամանակակից տեսության, գործող քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանցագործ միջամտություններից քրեական-իրավական պաշտպանության օբյեկտների նշված եղանակի անվտանգության առավելագույն ապահովումը քրեական քաղաքականության գերակայություններից մեկն է, որոնք հաշվարկված են ժամանակի ներկայիս շրջանի և ապագայի համար: Այս գերակայությունն իր որոշակի մարմնավորումը գտել է ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի համապատասխան նորմերում: Քանի որ անվտանգության ապահովումը պետության լիազորությունն է, իսկ պետությունը գործում է՝ կիրառելով կառավարման իշխանական-իրավական մեխանիզմը, ուստի պարզորոշ է, որ իրավաբանական ոլորտն զբաղեցնում է կարևոր տեղ կենսական շահերի և ազգային արժեքների անվտանգության համակարգում: Հիմնարար մարդկային ազատությունների անվտանգության իրավաբանական ապահովումն ունի բազմաթիվ ուղղություններ: Այս ուղղությունների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում քրեական քաղաքականության ապահովումը:

Պրոֆ. Տեր-Ակոպովը նշում է. «Մարդու անվտանգության խնդիրները ձևավորում են քրեական քաղաքականության հիմքն իր բոլոր

³ Стів Экономическая и национальная безопасность. Учебник /под ред. Е.А. Олейникова, М., Изд.-во Экзамен, 2005, էջ 14:

ուղղություններում՝ քրեական-իրավական, քրեական-դատավարական, քրեական-գործադիր, քրեագիտական, քրեաբանական, իրավապահ և այլն»:⁴ Բոլոր ուղղությունները պետք է առանձնացնեն մարդու անվտանգության խնդիրը և դարձնեն գերակա քրեական քաղաքականության կառուցվածքում:

Քրեական քաղաքականության խնդիրն այն է, որ գնահատի մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանվածության վիճակը քրեական-իրավական և այլ միջոցներով, վերացնի համապատասխան սպառնալիքները և կանխարգելի հնարավոր ոտնձգությունները: Մարդու անվտանգության պատշաճ ապահովումը հնարավոր է մարդու անվտանգության հատուկ տարատեսակի՝ իրավական անվտանգության համակարգի առանձնացման միջոցով: Այդ նպատակով էլ քրեական իրավունքի և քրեական օրենսդրության հիմնարար խնդիրները պետք է հետազոտվեն մարդու իրավաբանական անվտանգության ապահովման ենթատեսքստում և հաշվի առնելով այն, որ քրեական օրենսդրությունը կազմում է պետության քրեական քաղաքականության իրավական հիմքը:

Անցումը դեպի ժողովրդավարական հասարակություն և իրավական պետության ձևավորումը բարձրացնում է իրավաբանական գործոնի դերը հասարակությունում: Իրավաբանական գործոնի ուժեղացումը ծնում է մարդու կախվածություն իրավական կարգավորման ծավալից ու որակից, իրավակիրառ մարմինների գործունեության որակից: Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ցածր մակարդակը, որն արտահայտվում է իրավական համակարգի հակասականության, բացթողումների, չինովնիկների անգործության, ոչ պրոֆեսիոնալիզմի մեջ, առաջացնում է իրավունքի ու պետության հանդեպ անվստահություն, ստիպում է դիմել ստվերային «արդարադատության», կամայականության ու բռնության:

Առաջին անգամ՝ 20-րդ դարի 90-ական թթ. սկզբներին, մարդու անվտանգության խնդիրն անդրադարձել է պրոֆեսոր Ա. Ա. Տեր-

Ակոպովը, ով ներկայացրեց մարդու անվտանգության, այդ թվում՝ իրավաբանական անվտանգության համալիր բազմակողմանի սոցիալ-իրավական հիմնադրույթը: Գիտնականն առաջին անգամ պրակտիկներին ու տեսաբաններին առաջարկեց հետազոտել մարդու անվտանգության արդիական խնդիրը, հիմնավորեց վտանգավոր վիճակը, որում գտնվում է մարդը, բացահայտեց նրա կենսակարևոր շահերի սպառնալիքները և դրանց վերացման հիմնական ուղղությունները: Հեղինակը նոր գիտական ուղղության մակարդակում սահմանեց անվտանգության հասկացությունը, էությունը, բովանդակությունը և հնարավոր զարգացումները, առանձնացրեց ու դիտարկեց այդ հասկացության կարևորագույն իրավաբանական ոլորտը որպես յուրահատուկ իրավահարաբերություն, որը ներառում է որպես անվտանգության իրավունքի հիմնական տարր, անցկացրեց անվտանգության՝ գիտական և գործնական հարաբերության մեջ արդի տեսակների վերլուծություն:⁵

Մարդու իրավական անվտանգությունն ասելով՝ հասկանում ենք մարդու կենսական կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ՝ նրա՝ իրավական հարաբերությունների ոլորտ ներառվելու հետ կապված: Պաշտպանության առարկա են կյանքը, առողջությունը, իրավունքներն ու օրինական շահերը, որոնք բխում են սովյալ հարաբերություններից: Այս վիճակը բնութագրվում է իրավունքի որակով և դատական իշխանության ու իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությամբ: Իրավական անվտանգության աղբյուրներ են տարբեր երևույթները, գործոնները, հանգամանքները՝ իրավական նորմերի ու իրավական ինստիտուտների անլիարժեքությունը և անարդյունավետությունը, որոնք կարգավորում են հարաբերությունների կոնկրետ ոլորտ, դրանց տնտեսական անապահովվածությունը, իրավապահ մարմինների, դատարանների գործունեության թերությունները և այլն: Բոսխուլովը համարում է, որ դրա պատճառը սահմանադրական օրինականության ու ամբողջ սահմանադրական-իրավական համակարգի խոր ճգնաժամն է,

⁴ Տե՛ս Тер-Акопов А.А. Уголовная политика Российской Федерации. Учебное пособие. М. Изд-во МНОПУ, 1999, էջ 48:

⁵ Տե՛ս Тер-Акопов А. А. Безопасность человека, социальные и правовые основы. М., Норма, 2005, էջ 192:

որը քաղաքացիների իրավունքների ու ազատությունների, Ռուսաստանի պետականության գոյության համար սպառնալիք է:⁶ Առավել վտանգավոր իրավիճակներն առաջանում են քրեական դատավարության ոլորտում:

ՀՀ քրեական օրենսդրությունը կոչված է առավելագույնս օգնելու այդ ոլորտում օրինականության, իրավակարգի, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների հաստատմանը, որոնք վերաբերում են մարդու անվտանգությանը և ազատությանը: Մեր երկրի գործող քրեական օրենսդրությունը, որը կազմում է քրեական քաղաքականության հիմքը, ուժեղացրել է ուշադրությունը մարդու անվտանգության ապահովման հանդեպ: Մարդու անվտանգու-

թյան ապահովումը ձևավորում է քրեական իրավունքում հումանիզմի սկզբունքի էությունը (ՀՀ ՔՕ 10-րդ հոդված): Հետևաբար՝ ցանկացած քրեական-իրավական հարց լուծելիս օրենսդիրը, հետաքննչական մարմինները և դատարանները պետք է առավելագույնս ապահովեն մարդու անվտանգությունը, նրա կենսակարևոր շահերը: Հայաստանի քրեական օրենսդրության բարեփոխումը դեռևս գտնվում է մշակման փուլում, և հիմքում դրված են սկզբունքորեն կարևոր սահմանադրական դրույթներ, որոնք վկայում են տվյալ նորարարությունների մասին և հաստատում մեծ ուշադրությունը մարդու անվտանգության ապահովման հանդեպ:



⁶ Տե՛ս Босхолов С.С. Основы уголовной политики, Конституционный, криминологический, уголовно-правовой и информационный аспекты, М., Учебно-консультационный центр «ЮрИнфо», 1999, էջ 11:

ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության մագիստրոս,
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

ՄՐՃԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱԳՔՈՒՄ

Գործի դատական քննության ընթացքում պաշտպանը պաշտպանության կողմի առանցքային մասնակիցներից մեկն է: Նա կոչված է իրականացնելու պաշտպանության գործառույթը, որն ունի միակողմանի (միայն հօգուտ պաշտպանյալի) բնույթ և արտահայտվում է մեղադրյալին օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրավաբանական օգնություն տրամադրելու ձևով՝ նպատակ հետապնդելով բացահայտել վերջինիս արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները:

Իրավաբանական օգնություն ստանալու՝ անձի սահմանադրական իրավունքի ապահովումը քրեական դատավարության առանցքային սկզբունքներից մեկն է: Քրեական դատավարության մրցակցային բնույթը ենթադրում է քրեական վարույթում մեղադրյալի հայտնվելու պահից պաշտպանի պարտադիր մասնակցությունը¹:

Կատարված վերլուծության շնորհիվ հանգելով այն եզրակացության, որ մրցակցության սկզբունքը մինչդատական փուլում ունի սահմանափակ կիրառություն և իր ողջ էությունը դրսևորվում է դատական քննության փուլում, փորձենք վեր հանել, թե ինչ երաշխիքներ են գործում այս փուլում իր ապահովման համար:

Քր. դատ. օր.-ի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանը դատական քննությանը մասնակցելիս օգտվում է մեղադրողի հետ հավասար իրավունքներից:

Նույն օրենսգրքի 304-րդ և 306-րդ հոդվածների համաձայն՝ պաշտպանի/դատախազի չներկայանալու և նրան այլ պաշտպանով/դատախազով փոխարինելու անհնարինության դեպքում գործի քննությունը հետաձգվում է:

Դատարանն իր հերթին դատական քննության ընթացքում պետք է ապահովի հավասար հնարավորություններ կողմերի համար: Քրեա-

կան գործի քննությունն առանց պաշտպանի մասնակցության, երբ նրա մասնակցությունն օրենքով նախատեսված դեպքերում պարտադիր է, կամ նրա իրավունքների սահմանափակումը դատական քննության ընթացքում համարվում է քրեադատավարական օրենքի խախտում, որը հանգեցնում է դատական ակտի բեկանման:

Դատական քննության ընթացքում մրցակցությունը ենթադրում է պաշտպանի ակտիվ մասնակցություն ապացույցների հետազոտման գործընթացին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախաքննության փուլում նրա հնարավորությունները եղել են սահմանափակ, պաշտպանը պետք է օգտագործի դատաքննության ընթացքում իրեն ընձեռված հնարավորություններն այդ անհամաչափությունը վերացնելու համար: Եվ հիմնական ձևերից մեկը պաշտպանի կողմից մեղադրանքի կողմի ներկայացրած ապացույցների մանրամասն հետազոտումն է, դրանց գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության տեսանկյունից:

Այստեղ կցանկանայինք անդրադառնալ քր. դատ. օր.-ի 105-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված այն դրույթին, որի համաձայն՝ մեղադրանքի կողմի թույլ տված քրեադատավարական օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը պաշտպանության կողմի միջնորդությամբ կարող է թույլատրվել որպես ապացույց: Այդպիսի ապացույցը թույլատրվում է միայն համապատասխան կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ:

Նման կարգավորման վերաբերյալ գրականության մեջ առկա մոտեցումները միատեսակ չեն: Որոշ հեղինակներ հակված են կարծելու, թե օրենքի խախտմամբ ձեռք բերված ա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 105 2018

¹ Միայն եթե պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

պացույցները չպետք է համարվեն թույլատրելի անկախ այն հանգամանքից, որ ունեն մեղադրյալին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող բնույթ²: Հեղինակների մեկ այլ խմբի կարծիքով՝ եթե մեղադրանքի կողմից օրենքի խախտմամբ ձեռք են բերվել մեղադրյալին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ, ապա դրանք պետք է համարվեն թույլատրելի, քանի որ պաշտպանության կողմը չպետք է կրի վարույթն իրականացնող մարմինների անփորձառության կամ, որն ավելի վատ է՝ լիազորությունների չարաշահման բացասական հետևանքները³:

Մենք առավել հակված ենք երկրորդ տեսակետին և կարծում ենք, որ, հաշվի առնելով մինչդատական վարույթում մեղադրանքի կողմի անսահմանափակ հնարավորությունները՝ քրեական օրենսգիրքը պարունակում է որոշ դրույթներ, որոնք ուղղված են մեղմելու նախաքննության ընթացքում կողմերի միջև այդ անհավասարությունը: Այդպիսի դրույթներից է ի թիվս իր, ամուսնու, մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք չտալու, անմեղության կանխավարկածի, նաև ապացույցների ասիմետրիան: Հետևաբար՝ պաշտպանները պետք է օգտվեն այդ հնարավորությունից և յուրաքանչյուր հնարավոր դեպքում միջնորդեն այդ ապացույցները գործում թողնելու վերաբերյալ, եթե դրանք կարող են դրական ազդեցություն ունենալ մեղադրյալի համար:

Մեղադրանքի կողմին հակադարձելու կարևոր ձևերից մեկն էլ պաշտպանի կողմից միջնորդությունների ներկայացումն է: Շատ հաճախ պաշտպանները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրենց կողմից ձեռք բերված նյութերը գործին կցելը կախված է վարույթն իրականացնող մարմինների հայեցողությունից, անմիջապես դատարանին են ներկայացնում իրենց կողմից նախաքննության ընթացքում կատարված քննության արդյունքները՝ հուսալով դատարանի անկողմնակալության և անաչա-

ռության վրա: Այս առումով նշենք, որ, ի տարբերություն ՀՀ քր. դատ. օր.-ի՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 271-րդ հոդվածը որպես նախաքննության ընթացքում թույլ տրված անհավասարության վերացում նախատեսում է դատարանի կողմից պարտադիր բավարարել դատավարության կողմերի ներկայացրած անձանց որպես վկա կամ փորձագետ հարցաքննության ենթարկելու միջնորդությունները⁴: Նման կարգավորումը գուցե և դրական արդյունք ունենա պաշտպանության կողմի համար, սակայն ՌԴ օրենսդիրը, նման կարգավորում սահմանելով, հավանաբար, առաջնորդվել է կողմերի մասնագիտացվածության և բարեխղճության կանխավարկածով, ինչը ոչ միշտ է գործում և, մեր կարծիքով՝ կարող է հանգեցնել չարաշահումների:

Դատաքննության ընթացքում պաշտպանի պասիվությունն անթույլատրելի է: Հաճախ լինում են իրավիճակներ, երբ թեև պաշտպանը մասնակցում է դատաքննությանը, բայց պաշտպանյալը, ըստ էության, անպաշտպան է: Նման իրավիճակների պատճառներից մեկը պաշտպանների կողմից պաշտպանությանը պատշաճ կերպով չպատրաստվելն է: Այնինչ՝ մինչև դատաքննությունը պաշտպանն արդեն պետք է մշակած լինի մեղադրանքի վերաբերյալ իր դիրքորոշումը, մեղադրյալից պարզի՝ արդյոք կամ և՛ ապացույցներ, որոնք այս կամ այն պատճառով չեն հայտնվել գործում, քննարկի իր պաշտպանյալի հետ, թե ինչպիսի միջնորդություններ խելամիտ կլինի ներկայացնել դատական քննության ընթացքում, ընդհանուր գծերով պատկերացում ձևավորի նաև պաշտպանության մարտավարության վերաբերյալ:

Դատաքննության ընթացքում պաշտպանը պետք է դատարանին այնպիսի ապացույցներ ներկայացնի և այնպիսի հերթականությամբ, որոնք կհիմնավորեն իր ընտրած պաշտպանական գիծը: Եղանակներից մեկը տարբեր դատավարական գործողություններ կատարելու միջնորդությունների ներկայացումն է,

² Տե՛ս М.А.Верещагина, Асимметрия правил о допустимости доказательств. <https://cyberleninka.ru/article/v/asimetriya-pravil-o-dopustimosti-dokazatelstv>:

³ Տե՛ս Карякин Е.А. Реализация принципа состязательности в уголовном судопроизводстве (вопросы теории и практики): монография.– Оренбург: ГОУ ОГУ, 2005.– էջ 19:

⁴ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 271-րդ հոդված, (ընդունվել է 2001 թվականի դեկտեմբերի 18-ին):

ինչպիսիք են, օրինակ՝ լրացուցիչ վկաների հարցաքննությունը, փորձաքննությունների նշանակումը, ներկայացված առարկաները որպես իրեղեն ապացույց ճանաչելը և գործին կցելը, որոշ փաստաթղթեր որպես այլ փաստաթուղթ ճանաչելը, և այդ գործողությունների հիմնական արդյունքը պետք է լինի դատարանի մեջ այդ գործողությունների կատարման անհրաժեշտության վերաբերյալ համոզմունք առաջացնելը, դրանց արդյունքներն էլ կամրապնդեն պաշտպանության կողմի դիրքորոշումը: Հետևաբար՝ պաշտպանի կողմից գործի քննության այս փուլում պասիվության դրսևորումն անթույլատրելի է:

Հաշվի առնելով այս փուլում պաշտպանի մասնակցության կարևորությունը՝ ՀՀ Սահմանադրական դատարանը, իր 2018թ. փետրվարի 13-ի թիվ ՍԴՈ-1403 որոշման մեջ վերլուծելով օրենքով նախատեսված՝ պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը, պաշտպանության իրավունքից հրաժարվելու համատեքստում հանգել է այն եզրակացության, որ իրավունքի պաշտպանության և իրավունքի իրացումից հրաժարվելու ինստիտուտների կիրառման համատեքստում պետք է ապահովվել համաչափություն, իսկ առանց վերապահումների իրավունքից հրաժարվելու ինստիտուտի կիրառումը կարող է հանգեցնել իրավունքի խախտման: Իրավունքի իրացումից հրաժարվելու ինստիտուտը չի կարող հանգեցնել պետության կողմից արդարադատության շահի և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ իր վրա դրված պոզիտիվ պարտավորություններից հրաժարվելու պահանջի: Այդպիսի իրավիճակում պետությունն առաջնորդվում է մարդու իրավունքներով՝ ոչ միայն որպես անձի կողմից իր վարքագծի ընտրության հնարավորություն, այլև՝ որպես բարձրագույն արժեք⁵:

Սակայն կցանկանայինք նշել, որ միայն պաշտպանի մասնակցությամբ հնարավոր չէ դատաքննության ընթացքում ապահովել մրցակցություն, և այդ սկզբունքի ապահովման գործում չափազանց կարևոր դերակատարություն ունեն դատարանն ու դատաքննության ընթացքում վերջինիս վերապահված հնարավորությունների շրջանակը:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագծում ամրագրվել են որոշ դրույթներ, որոնք բարձրացնում են դատարանի անկողմնակալությունն ու ակտիվությունը:

Այսպես, օրինակ՝ Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

- Արդարադատություն իրականացնելիս կամ դատական այլ երաշխիքներ ապահովելիս դատավորը պարտավոր է լինել և երևալ անկողմնակալ (Նախագծի 15 հոդվածի 3-րդ մաս): Ի տարբերություն գործող օրենսդրության՝ կարևորվել է դատարանի անկախության արտաքին դրսևորումը, քանի որ դատարանը, որպես արդարադատություն իրականացնող անկախ մարմին, կարող է արդյունավետ կերպով գործել միայն այն պարագայում, եթե որպես այդպիսին դիտարկվի և ընկալվի հասարակության կողմից:

- Դատավճիռ կայացնելիս պետք է հաշվի առնել անհրաժեշտ և հնարավոր ապացույցների բացակայությունը (Նախագծի 22 հոդվածի 3-րդ մաս): Այսինքն՝ ի տարբերություն գործող օրենսգրքի, երբ դատավճիռը հիմնվում է միայն առկա ապացույցների գնահատման վրա, նախագիծը պարտադրում է ապացույցները գնահատելիս նաև հաշվի առնել այն հնարավոր ապացույցները, որոնք կարող էին, բայց ձեռք չեն բերվել քրեական հետապնդման մարմինների կողմից, ինչպես նաև այն ապացույցների բացակայությունը, որոնք օբյեկտիվորեն հնարավոր չի եղել ձեռք բերել:

- Մեղադրյալի դատապարտումը չի կարող միայն կամ առավելապես հիմնվել այնպիսի անձի ցուցմունքի վրա, ում հակընդդեմ հարցման հնարավորություն տվյալ մեղադրյալը կամ նրա պաշտպանը կամ ներկայացուցիչը չեն ունեցել (Նախագծի 22 հոդվածի 7-րդ մաս): Սա ուղղակիորեն բխում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի վերաբերյալ Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքից և այլն:

Կամ, օրինակ՝ Նախագծի 334-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ այն դեպքում, երբ հետազոտման ենթական ապացույցների ծավալը լրացնելու միջնորդություն չի հարուցվում կամ որոշմամբ մերժվում է, դատարանն

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2018 թվականի փետրվարի 13-ի ՍԴՈ-1403 որոշման 7-րդ կետը:

իրավասու է իր նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկելու հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելու համար, եթե համարում է, որ դա չանելը կարող է կասկածի տակ դնել վարույթի արդարացիությունը:

Եթե նշված կարգավորումները մեր կարծիքով, կնպաստեն դատարանների անկողմնակալության ու մրցակցության խթանմանը, ապա նույնը չենք կարող ասել նախագծում ամրագրված այն կարգավորման մասին, ըստ որի մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը, հաշվի առնելով մեղադրյալին արդարացնելու վերաբերյալ հանրային մեղադրողի միջնորդության հիմքը, հիմնավորումները և ծավալը, ինչպես նաև լսելով դրա վերաբերյալ վարույթի մյուս մասնակիցների կարծիքը, իրավասու է եզրափակիչ դատական ակտում բավարարելու կամ մերժելու միջնորդությունը:

Հայտնի է, որ մրցակցային դատավարության ընթացքում դատարանի կարգավիճակի բնութագրական կողմերից մեկն այն է, որ, որպես քրեական գործը քննող անկախ և անկողմնակալ մարմին, դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահը: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար պետք է ստեղծի գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ՝ դրանով իսկ ապահովելով մրցակցության սկզբունքի կենսագործումը և հասնելով քրեական դատավարության առջև դրված խնդիրների իրագործմանը:

Հետևաբար, մեր համոզմամբ՝ նման կարգավորումը հակասում է մրցակցային դատավարության էությանը: Թեև ենթադրվում է, թե դատարանը կարող է օգտվել նման իրավունքից այն դեպքերում, երբ բացահայտ անհամապատասխանություն է նկատում, կամ երբ իր մեջ արդեն հետազոտված ապացույցների հիման վրա ձևավորվել է ներքին համոզմունք, և նա ողջամիտ է համարում շարունակել դատաքննությունը վեր հանված հակասությունները վերացնելու նպատակով, կամ երբ դա պայմանավորված է տուժողի գերակա շահով և

այլն, այնուամենայնիվ, դատարանի նման վարքագիծը կհակասի մրցակցության էությանը, որին համապատասխան՝ դատարանը պետք է հանդես գա առավելապես հետազոտված ապացույցները գնահատողի դերում: Մրցակցային դատավարությունը հենց այնքանով է տարբերվում ինկվիզիցիոն դատավարությունից, որ իր հիմնական նպատակը ոչ թե օբյեկտիվ ճշմարտության բացահայտումն է, այլ՝ դատավարության կողմերին հավասար հնարավորություններով օժտելը: Նման դատավարության ընթացքում պետք է հաղթող դուրս գա այն կողմը, որի փաստարկներն ու ապացույցներն ավելի համոզիչ են եղել: Իսկ Նախագծով առաջարկվող կարգավորումների պարագայում, փաստորեն, դատարանը, համոզվելով, որ մեղադրանքի կողմը չի կարողանում հիմնավորել իր մեղադրանքը, ինքն է անցնում մեղադրանքի գործառույթների իրականացմանը՝ դրանով խախտելով մրցակցության եռանդամ կառուցվածքի պարտադիր պահանջը:

Եվրոպայի խորհրդի 2000թ. հոկտեմբերի 6-ի հանձնարարականը, անդրադառնալով քրեական դատավարությունում դատախազի դերին, նշում է, որ հանրային մեղադրողի գործառույթը քրեական արդարադատության եվրոպական համակարգերում հանգում է մեղադրանքի ներկայացմանը, քրեական հետապնդման դադարեցմանը, դատարանում մեղադրանքի պաշտպանությանը, դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկմանը: Որոշ դեպքերում նրա գործառույթներն ընդգրկում են նաև մինչդատական վարույթի նկատմամբ հսկողության իրականացումը, տուժողների իրավունքների պաշտպանությունը, պաշտպանական միջոցների տրամադրումը: Անդրադառնալով դատախազության և դատարանի փոխհարաբերակցության հարցին՝ հանձնարարականն ամրագրում է. պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի դատախազների իրավական կարգավիճակը, նրանց իրավասությունները, դատարանում նրանց կարգավիճակը ամրագրված լինեն օրենքով այնպես, որ դատավորների անկախության և անաչառության նկատմամբ չառաջանա ոչ մի օրինական կասկած: Մասնավորապես՝ պետությունը պարտավոր է ապահովել, որ նույն անձը միևնույն

ժամանակ հանդես չգա մեղադրողի և դատավորի դերում⁶:

Ozerov v Russia գործով Եվրոպական դատարանը որպես կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում է գնահատել հետևյալ իրավիճակը. դատաքննությանը դատախազի պարտադիր մասնակցության դեպքում վերջինս չէր ներկայացել դատաքննությանը: Դատարանը, պարզելով ներկաներից, որ նրանք չեն առարկում առանց դատախազի մասնակցության դատաքննություն անցկացնելու վերաբերյալ, որոշում է կայացնում դատաքննությունն առանց դատախազի անցկացնելու մասին: Դատաքննության ընթացքում դատարանը, հետազոտելով գործում եղած ապացույցները, իր նախաձեռնությամբ ձեռք է բերում նաև այլ ապացույցներ՝ հարցաքննության ենթարկելով նոր վկաների: Դատավճիռ կայացնելիս դատարանը դրա հիմքում դնում է ոչ միայն գործում եղած ապացույցները այլև այն ապացույցները, որոնք ձեռք էր բերել սեփական նախաձեռնությամբ:

Եվրոպական դատարանը, վերահաստատելով ՌԴ Սահմանադրական դատարանի որոշումը, եզրակացրել է, որ քրեական հետապնդման հարուցումը, մեղադրանքի ձևավորումը և դատարանում պաշտպանությունը մեղադրողին բնորոշ գործառույթներ են, որոնք այս կամ այն ձևով դատարանի կողմից իրականացվելու դեպքում կխախտեն դատարանի դերը, որը անկողմնակալ և անկախ ձևով արդարադատության իրականացման մեջ է, ինչպես ամրագրված է կոնվենցիայի 6-րդ հոդվածում:

Տվյալ գործով դատարանն ընթերցել է մեղադրական եզրակացությունը, հետազոտել մեղադրանքում եղած ապացույցները, իր նախաձեռնությամբ ձեռք բերել նոր ապացույցներ, անթույլատրելի ճանաչել վարույթն իրականացնող մարմինների կողմից ձեռք բերված որոշ ապացույցներ և հանել դրանք գործից: Եվ այս ամենն արվել է դատաքննությանն առանց դատախազի մասնակցության: Եվրոպական դատարանը նշում է, որ, այս հանգամանքները

հաշվի առնելով՝ չի կարող համաձայնել Կառավարության այն պնդմանը, թե դատարանը չի արել ոչ մի այլ բան, քան գործում առկա ապացույցները հետազոտելը:

Դատարանը եզրակացնում է, որ դատաքննությանը դատախազի ներկա լինելու դեպքում, վերջինս կմասնակցեր ապացույցների հետազոտմանը և կաներ առաջարկություններ: Դատախազի բացառիկ դերը կլիներ այն, որ վերջինս կամ կպաշտպաներ մեղադրանքը՝ հենվելով իր ապացույցների վրա՝ հասնելով անձի դատապարտման, կամ, դրանք անբավարար համարելով՝ կիրառարվեր մեղադրանքից: Դատարանը որոշում է, որ տվյալ պարագայում կարևոր է այն հանգամանքը, որ դատարանը, գործն առանց մեղադրողի մասնակցության քննելով, համատեղել է դատարանի և մեղադրանքի կողմի գործառույթները, ինչն օրինական կասկածի հիմք է տալիս դատարանի անկողմնակալության վերաբերյալ: Դատարանը որոշում է, որ առկա է խախտում, քանի որ համատեղվել են ապացույցներ ձեռք բերողի և գործը լուծողի գործառույթները⁷:

Հիմք ընդունելով վերը ներկայացվածը՝ կարծում ենք, որ Նախագծով առաջարկվող կարգավորման պարագայում կհամատեղվեն մեղադրանքի և գործն ըստ էության լուծող մարմինների լիազորությունները, ինչն անթույլատրելի է մրցակցության պարագայում: Իսկ եթե նույնիսկ համարենք, թե առաջարկվող կարգավորման պարագայում դատարանը չի կարող ձեռք բերել նոր ապացույցներ, այլ պետք է շարունակի գործի քննությունն արդեն եղած ապացույցների շրջանակներում, ապա կստացվի, որ դատարանը մեղադրողի հրաժարվելուց հետո, չհամաձայնվելով նրա հետ, ցույց է տալիս, որ գործում եղած ապացույցները բավարար են անձին դատապարտելու համար: Ըստ էության՝ տվյալ վիճակը նույնանում է այն կարգավորման հետ, որը դեռևս 2007 թ. հուլիսի 24 որոշմամբ ճանաչվել է Սահմանադրությանը հակասող գործող օրենսգրքում, ըստ որի՝ դատարանը լրացուցիչ նախաքննության է ուղարկում

⁶ Տե՛ս (Recommendation Rec(2000)19) adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 6 October 2000, 2, 3 պարագրաֆներ:

⁷ Տե՛ս Եվրոպական դատարանի Ozerov V Russia գործով 2010 թվականի մայիսի 18-ի վճիռ, գանգատ թիվ 64962/01 50-55 կետերը:

գործ, եթե նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատաքննության ընթացքում: Կամ, օրինակ՝ մեղադրողի կողմից մեղադրանքի փոփոխման հիմքերի առկայության դեպքում, եթե նա չօգտվի այդ հնարավորությունից, դատարանն իր վրա վերցնի մեղադրողի գործառույթները և դուրս գա առաջադրված մեղադրանքի սահմաններից, ինչպիսի իրավիճակն անթույլատրելի է ճանաչվել Վճռաբեկ դատարանի որոշմամբ⁸:

Ամփոփելով՝ կցանկանայինք անդրադառնալ Նախագծով առաջարկվող մեկ այլ նոր կարգավորման ևս, ըստ որի՝ սահմանվում է դատական ակտի կայացման և հրապարակման երկփուլ կարգ: Մասնավորապես՝ առաջին փուլում (հիմնական դատախոսների փուլ) կողմերի և դատարանի համար քննարկման առարկա է դառնում միայն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը, որի արդյունքով դատարանի կողմից կայացվում է արդարացման կամ մեղադրական վերդիկտ: Վերջինիս հիման վրա երկրորդ փուլում (լրացուցիչ դատախոսների փուլ) որոշվում են դատավճռի կոնկրետ տեսակից օրգանապես և տրամաբանորեն բխող մյուս հարցերը: Նման

կարգավորման պարագայում, փաստորեն, պաշտպանության կողմը հնարավորություն կստանա, նախ՝ պնդելու իր անմեղությունը, իսկ մեղադրական վճիռ կայացվելու դեպքում նոր՝ անդրադառնալու մեղմացնող հանգամանքերին և պահանջելու մեղմ պատիժ՝ ի տարբերություն ներկայիս կարգավորման, ըստ որի՝ պաշտպանության կողմն ստիպված է լինում, մեղադրյալին արդարացնելու հետ միաժամանակ, խնդրել դատարանին նշանակել մեղմ պատիժ, եթե վերջինս գտնի, որ իր պաշտպանյալը մեղավոր է, ինչը, անշուշտ, բացասական է անդրադառնում պաշտպանության կողմի՝ իր դիրքորոշման մեջ համոզվածության և հիմնավորվածության վրա:

Ամփոփելով՝ նշենք, որ Նախագիծը, ի տարբերություն գործող օրենսդրության, պարունակում է այնպիսի կարգավորումներ, որոնք միտված են մեղմելու մինչդատական վարույթում առկա կողմերի անհավասարությունը և հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու դատական քննության փուլում: Այնուամենայնիվ, Նախագծով առաջարկվող որոշ կարգավորումներ, մեր կարծիքով, կարող են բացասաբար անդրադառնալ մրցակցության ապահովման գործընթացի վրա, և այդ հարցերի կապակցությամբ առավել ընդունելի են թվում գործող օրենսդրությամբ առկա կարգավորումները:



⁸ Տե՛ս Ա.Բաբայանի և Ս. Թումանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 23-րդ կետը:

ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի
Քրեական և քրեադատավարական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՀԱՄԱՅԱՆՅՈՒՄ ՏԵՂԵԿԱՅՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և տեղեկատվական հասարակության ձևավորումը, ի թիվս այլնի, նպաստել է նաև հեռահաղորդակցման և կապի նոր տեխնոլոգիական հնարավորությունների, համաշխարհային տեղեկատվական ցանցերի ստեղծմանը: Կարծում ենք՝ առանձնահատուկ ուշադրության է արժանի համացանցում զետեղված տեղեկատվության իրավական կարգավիճակի և այդպիսին քրեական գործի շրջանակներում որպես ապացույց ձեռք բերելու հնարավորության վերաբերյալ հարցերը:

Հարկավոր է նշել, որ ցանցում առկա յուրաքանչյուր տեղեկատվական օբյեկտ ներկայացված է թվային տեսքով: Համակարգչի լեզուն կազմված է թվային հետևողական հաջորդականություններից: Ամեն օբյեկտ (ձայն, տեքստ, գրաֆիկական պատկեր) թվերի հաջորդականություն է: Թվային սարքավորումները թույլ են տալիս թվային այդպիսի հաջորդականությունը ներկայացնել մարդու ընկալման համար հասկանալի, սովորական ձևով: Նշվածը հանգեցնում է տեղեկատվության թղթային օրինակների ստեղծման և պահպանման անհրաժեշտության վերացմանը: Տեղեկատվության ներկայացման թվային տարբերակը թույլ է տալիս հեշտ և չնչին ռեսուրսների օգտագործմամբ կրկնօրինակել, վերարտադրել և տարածել այդ տեղեկատվությունը:

Թվային ձևով ներկայացվող տեղեկատվության նշված յուրահատկությունը կանխորոշել է այն իրավական խնդիրները, որոնք առաջանում են համակարգչային ցանցերի միջոցով իրագործվող հարաբերությունների նկատմամբ արդեն ձևավորված իրավական մեխանիզմներ-

րի կիրառմամբ: Տեղեկատվությունն այն հիմնական օբյեկտն է, որի շուրջ ծագում են ցանցի մասնակիցների միջև հարաբերությունները¹:

Ներկայումս համաշխարհային տեղեկատվական ցանցը հասարակության կյանքի անբաժանելի բարդ սոցիալական, տեղեկատվական և իրավական երևույթ է: Համացանցում կենտրոնանում է ահռելի քանակությամբ տարաբնույթ տեղեկատվություն, որը կարելի գտնել և օգտագործել այս կամ այն նպատակով: Համացանցում կարելի է տեղադրել ամեն տեսակի տեղեկատվություն, այդ թվում նաև՝ քաղաքական, կոմերցիոն, նեղ անձնական բնույթի:

Սակայն գործարար կամ այլ նպատակներով համացանցի օգտագործումը, այդ թվում նաև՝ էլեկտրոնային փոստի օգտագործումը, ոչ միայն հեշտացնում է անձանց միջև համագործակցությունը, կապի պաշտպանումը, այլ նաև առաջացնում է մի շարք իրավական և էթիկական խնդիրներ, որոնք պահանջում են օրենսդրական բարեփոխումներ ենթադրող լուծումներ: Այդպիսի խնդիրներից է էլեկտրոնային փաստաթուղթ չհանդիսացող, սակայն ապացուցողական նշանակություն ունեցող և համացանցում տեղակայված թվային տեղեկատվությունը հավաքելու հնարավորությունը և դրա դատավարական առանձնահատկությունները: Նշված խնդիրներին անդրադարձ կատարելուց առաջ անհրաժեշտ ենք համարում, նախ, ուսումնասիրել համաշխարհային տեղեկատվական ցանցերը շահագործելիս օգտագործվող եզրույթները:

Այսպես՝ համացանց եզրույթի սահմանումը տրվում է օտարերկրյա բառերի նոր կարճ բառարանում, որի համաձայն՝ համացանցը (անգլ.՝ Internet) համաշխարհային համակարգ-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 105 2018

¹ Տե՛ս А.А. Савинова. Защита объектов интеллектуальной собственности в глобальных информационных сетях по российскому гражданскому законодательству: дисс. на соискание научной академической степени канд. юрид. наук., М., 2005. С. 3-4.

չային ցանց է, որը ապահովում է ժամանակակից հաղորդակցության միջոցների օգնությամբ միացված կայքերում զետեղված տեղեկատվության հասանելիությունը²:

Համացանց հասկացության առավել ընդգրկուն սահմանումը տեղ է գտել մասնագիտական գրականության մեջ, որի համաձայն՝ համացանցը կարելի է սահմանել որպես փոխկապակցված ցանցերի ունիվերսալ համակարգ, որը թույլ է տալիս տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գործարկման միջոցով միացնել ցանկացած ծավալով տեղեկատվություն օգտատիրոջը ներկայացնելու, տեղեկատվական և այլ ծառայություններ մատուցելու, ինչպես նաև մի շարք քաղաքացիաիրավական գործարքներ կատարելու համար³:

Թվային տեղեկատվության անհատականացման հնարավորությունն օգտագործելով որպես էլեկտրոնային ապացույցների դասակարգման չափանիշ՝ դրանք կարելի է պայմանականորեն բաժանել երկու հիմնական խմբի՝ էլեկտրոնային փաստաթղթեր և այլ թվային տեղեկատվություն: Էլեկտրոնային փաստաթղթի յուրահատկությունն այն է, որ փաստաթուղթը կազմող անձին հնարավոր է անհատականացնել, իսկ դրանում առկա տեղեկատվությունը հաստատվում է էլեկտրոնային փաստաթուղթը կազմող անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Այլ թվային տեղեկատվության ենթախմբում կարելի է ընդգրկել այն ամբողջ թվային տեղեկատվությունը, որը չի համապատասխանում էլեկտրոնային փաստաթղթին ներկայացվող պահանջներին:

ՌԴ Գերագույն դատարանի պլենումի ուղեցույցի ընդհանուր դրույթներն ուսումնասիրելով՝ կարելի է հանգել հետևության, որ համացանցից ստացված տեղեկատվությունն ընդհանուր իրավասության դատարանների կողմից պետք է ճանաչվի որպես թույլատրելի ապացույց և գնահատվի դատարանների կողմից վերաբերելիության, բավարարության և հավաստիության տեսանկյուններից: Բնականաբար, պետք է հաշվի առնվեն նաև համացանցում տեղակայված տեղեկատվության առանձնահատկությունները:

Հարկավոր ենք համարում ուսումնասիրու-

թյան առարկա դարձնել այն հիմնական հարցը, թե կարող է արդյոք համացանցում տեղակայված թվային տեղեկատվությունը որպես ապացույց ձեռք բերվել զննում կատարելով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ պարագայում տեղեկատվության քննարկվող տեսակն ընդհանրապես զուրկ է նյութական կրիչից:

Այսպես՝ Օրենսգրքի 217-րդ հոդվածի համաձայն.

«Հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելու, հանցագործության դեպքը, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով քննիչը կատարում է տեղանքի, շինությունների, առարկաների, փաստաթղթերի, կենդանիների, մարդու կամ կենդանու դիակի զննում»:

Մեջբերված իրավադրույթի ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել հետևության, որ քննիչն իրավասու չէ կատարելու համացանցում տեղակայված թվային տեղեկատվության զննում, քանի որ առկա է զննման օբյեկտների սպառիչ օրենսդրական ցանկ, որում օբյեկտներն բացակայում է համացանցի վերաբերյալ որևէ հիշատակում:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 226-րդ հոդվածում ամրագրված զննման օբյեկտների ցանկը լրացվել է, և էլեկտրոնային կամ մագնիսական կրիչի բովանդակությունը նախատեսվել է՝ որպես զննման օբյեկտ: Սակայն միանշանակ է նաև այն, որ թվային տեղեկատվության քննարկվող տեսակը չի կարող դիտարկվել որպես էլեկտրոնային, կամ մագնիսական կրիչի բովանդակություն: Միանշանակ է նաև, որ համացանցում տեղակայված թվային տեղեկատվությունը որոշ դեպքերում չի կարող մեկնաբանվել որպես փաստաթղթի տարատեսակ՝ էլեկտրոնային փաստաթուղթ, հետևապես՝ քննարկվող տեղեկատվության տեսակը չի կարող ուսումնասիրվել զննման օբյեկտներից փաստաթղթի կարգավիճակի շրջանակներում:

Այս առումով, կարծում ենք՝ պետք է ուսումնասիրության առարկա դարձնել զննման օբյեկտ-

² Слов Новый краткий словарь иностранных слов / отв. ред. Н.М.Семенова. М.: Русский язык медиа. 2005. С. 214.

³ Слов Бачило И.Л. Интернет как явление для системы права: Проблемы информатизации. М., 2000. Вып. 3. С.4.

ներից տեղանքի հասկացությունը և սահմանները, ինչպես նաև համացանցի միջավայր և վիրտուալ տարածություն հասկացությունները: Նշված հասկացությունների վերլուծությունը և դրանց հարաբերակցության հարցի պարզաբանումն էական նշանակություն կունենան ինչպես պրակտիկայի, այնպես էլ տեսության համար:

Տեղանք եզրույթի վերաբերյալ խոսելիս հարկավոր է նշել, որ դրա սահմանումն ամրագրված չէ գործող օրենսդրությամբ, ուստի անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել եզրույթը լեզվաբանական և տեսաիրավական տեսանկյուններից:

Այսպես՝ տեղանքը ժամանակակից բառարաններում բացատրվում է որպես Երկրի մակերևույթի մի առանձին մաս, որոշակի տարածություն՝ տեղ՝ վայր Երկրի վրա⁴:

Տեղանքի գննությունը կատարվում է որոշակի տարածքի կամ ջրային տարածության ուսումնասիրության համար՝ այն պայմանով, որ գննվող տեղանքը հանցագործության կատարման վայր չէ: Տեղանքի գննություն կատարելու ընթացքում քննիչն իրավունք ունի գննելու նաև պահեստարաններ, հայտնաբերված առարկաներ կամ փաստաթղթեր, որոնք, դատելով իրադրությունից, կարող են իրենց վրա պահպանել հանցագործության հետքեր կամ կապ ունենալ դրա հետ: Ընդհանուր կանոնի համաձայն՝ տեղանքի գննության ընթացքում հայտնաբերված առարկաների (փաստաթղթերի) կամ կենդանիների գննությունը կատարվում է անմիջականորեն նույն տեղում, իսկ դրա արդյունքները ներմուծվում են համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ⁵:

Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ, քրեադատավարական օրենսդրության իմաստով՝ տեղանք է այն տարածությունը, որտեղ կարող են պահպանված լինել հանցագործության հետ որևէ անմիջական կապ ունեցող հետքեր, առարկաներ (փաստաթղթեր) կամ կենդանիներ: Ընդ որում՝ թեև բացատրական բառարաններում տեղանք եզրույթը հիմնականում բացատրվում է որպես ցամաքային տարածություն, կարծում

ենք, որ քրեադատավարական իրավունքի տիրույթում այս եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել ավելի լայն իմաստով, քանի որ քրեական գործերի քննության ընթացքում հնարավոր են դեպքեր, երբ առաջանա ջրային տարածության (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 249-րդ հոդվածով հարուցված քրեական գործի քննության ընթացքում կարող է առաջանալ ջրային տարածության գննում) գննում կատարելու անհրաժեշտություն: Նմանօրինակ իրավիճակ կարող է ստեղծվել նաև համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված որևէ հանցագործության վերաբերյալ իրականացվող քրեական վարույթի ընթացքում, երբ առաջանա վիրտուալ տարածությունը գննության ենթարկելու անհրաժեշտություն: Կարծում ենք, որ անհրաժեշտ է վիրտուալ տարածությունը ևս դիտարկել որպես ընդհանրապես տարածության և, հետևապես՝ քրեադատավարական օրենսդրության իմաստով՝ տեղանքի տարատեսակ: Նշվածը հնարավորություն կընձեռի քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում կատարելու որևէ կայքէջի գննում: Տեղանք հասկացության սահմաններում նաև վիրտուալ տարածությունն ընդգրկելու հնարավորության վերաբերյալ վերջնական գնահատական տալու համար հարկ ենք համարում առանձին ուսումնասիրել վիրտուալ տարածություն հասկացությունը և առանձնահատկությունները:

Այսպես՝ Ռ.Վ. Շագինան նշում է, որ տեղեկատվական հասարակությունը բնութագրվում է երկու աշխարհի միաժամանակյա գոյությամբ՝ բոլորի համար սովորական ֆիզիկական աշխարհի և վիրտուալ աշխարհի, որն ստեղծված է մարդու կողմից և գոյություն ունի արհեստական համակարգչային միջավայրում⁶: Վիրտուալ աշխարհը, ըստ վերջինիս, ֆիզիկական աշխարհի մասնակի արտացոլանք է:

Վիրտուալ տարածության մասին խոսելիս հարկ է նշել, որ տարաբնույթ էլեկտրոնային սարքավորումների օգտագործման հետևանքով ծագող հասարակական հարաբերությունների

⁴ Տե՛ս <http://bararanonline.com/%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B6%D6%84> (18.02.2018)

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս – Երևանի պետ. համալս.– Եր., Երևանի համալս. իրատ., 2003: էջ 140-141:

⁶ Տե՛ս Шагиева Р.В. Концепция правовой деятельности в современном обществе.– Казань, 2005. С. 266.

բնորոշման նպատակով ժամանակակից գիտության մեջ կիրառվում են մի շարք եզրույթներ, ինչպիսիք են, օրինակ՝ «կիբեռտարածություն», «ցանցային տարածություն», «համացանցի միջավայր», «վիրտուալ տարածություն» և այլն: Ժամանակակից գիտության մեջ վիրտուալության և վիրտուալ տարածության երևույթները բազմակողմանիորեն ուսումնասիրված են առավելապես փիլիսոփայական և քաղաքագիտական տեսանկյուններից: Վիրտուալ տարածության երևույթի տեսաիրավական հետազոտման կարևորությունը գնահատելով՝ վերջին ժամանակաշրջանում դրա առանձին տարրերն ուսումնասիրության առարկա են դարձվում տեղեկատվական անվտանգության, հակաիրավական վարքագծի դեմ պայքարի, հեղինակային իրավունքների պաշտպանության և այլ տեսանկյուններից:

Հարաբերականորեն նոր լինելու պատճառով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հասկացությունները դեռևս կայացած չեն անգամ հատուկ գիտություններում և չունեն հստակ ամրագրում: Նշվածը հանգեցնում է իրավունքի ոլորտում քննարկվող երևույթների ուսումնասիրության բարդեցմանը, քանի որ իրավագիտությունը պահանջում է հստակ և միանշանակ հասկացությունների և դրանց սահմանումների օգտագործում:

Վերը հիշատակված եզրույթների լեզվաբանական և ծագումնաբանական վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն հետևության, որ նախընտրելին «վիրտուալ տարածություն» եզրույթն է, որը գրականության մեջ տեղ գտած եզրույթներից առավել չեզոքը և հստակն է: Տարածություն բառը գիտական գրականության և օրենսդրության մեջ հիմնականում օգտագործվում է տեսանելի սահմաններով չսահմանափակված, յուրահատուկ որակներով օժտված այն միջակայքը մատնանշելու նպատակով, որում ծագում են յուրահատուկ հասարակական հարաբերություններ: Տարածությունը որպես ֆիզիկական կատեգորիա հստակ սահմանելու համար պահանջվում է որոշակի հավելում, օրինակ՝ ջրային տարածություն, օդային տարա-

ծություն և այլն: Նշվածից կարելի է եզրակացնել, որ տարածությունը մատերիայի այնպիսի վիճակն է, որը բնութագրվում է որոշակի երկարության և ծավալի առկայությամբ և կարող է որևէ բան տեղավորել իր մեջ:

ՄԱԿ գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) տեղեկատվական հասարակության իրավական հարցերով փորձագետ Տ.Ֆուենտես-Կամաչոն նշում է, որ կիբեռտարածությունը նոր մարդկային և տեխնոլոգիական միջավայր է, որը ներառում է ինչպես մարդկանց, ովքեր ներկայացնում կամ հայցում են տեղեկատվություն, այնպես էլ համակարգիչների համաշխարհային ցանցը, որն ապահովում է տեղեկատվության թվային վերամշակումը և փոխանցումը⁷:

ԱՄՆ Գերագույն դատարանը սահմանել է կիբեռտարածությունը որպես յուրահատուկ կրիչ, որը չի գտնվում որևէ կոնկրետ տարածությունում, սակայն համացանցի միջոցով հասանելի է յուրաքանչյուր անձի՝ աշխարհի ցանկացած կետից⁸:

Համակարծիք ենք Ի.Մ. Ռասսոլովի այն տեսակետին, որի համաձայն՝ անհրաժեշտ է կիբեռտարածություն և վիրտուալ տարածություն եզրույթները դիտարկել որպես, ըստ էության, նույնաբովանդակ և հոմանիշ հասկացություններ: Վերջինս բնորոշում է վիրտուալ տարածությունը որպես համաշխարհային տեղեկատվական սարդոստայնում, ինչպես նաև տեղեկատվական-հեռահաղորդակցական այլ ցանցերում հասարակական գործունեության ոլորտ, որը կապված է տեղեկատվության շրջանառության հետ⁹:

Տ.Տրոպինան սահմանում է վիրտուալ տարածությունը որպես տեղեկատվական տարածություն, որը պարունակում է մաթեմատիկական, նիշային կամ որևէ այլ կերպ ներկայացվող և լրկալ կամ համաշխարհային համակարգչային ցանցերում շարժման մեջ գտնվող անձանց, առարկաների, փաստերի, դեպքերի, երևույթների և գործընթացների մասին տվյալների համակցություն, կամ տվյալների, որոնք

⁷ Stú The International Dimensions of Cyberspace Law. Edited by Teresa Fuentes-Camacho. Aldershot, England; Burlington VT: UNESCO Publishing, 2000.– P. 1.

⁸ Stú Darrel Menche, Jurisdiction in Cyberspace: A theory of International Spaces 4 Mich.Tel.Tech.LRev.3 (18.02.2018) // <https://repository.law.umich.edu/cgi/viewcontent.cgi?article=1163&context=mttlr>

⁹ Stú И.М.Рассолов Право и Интернет. Теоретические проблемы.– М., 2009. С. 6.

պահվում են նյութական կամ վիրտուալ կրիչի, կամ դրանց պահպանման, վերամշակման և փոխանցման համար նախատեսված որևէ այլ կրիչի վրա¹⁰:

Ռ.Վ. Շագինյան նշում է, որ վիրտուալ տարածությունը տեղեկատվական-հեռահաղորդակցման համակարգերի համակարգիչների հիշողության մեջ ֆիզիկական աշխարհի օբյեկտների, երևույթների, գործընթացների և կապերի համակցության արտացոլումն է¹¹:

Ն.Ն. Տելեշինյան շարադրված սահմանումների վերլուծության արդյունքներով առանձնացնում է վիրտուալ տարածության բովանդակային երեք հիմնական բաղադրիչ: Առաջինը վիրտուալ տարածության տեղեկատվական բազան է, այսինքն՝ բազմաթիվ տեղեկատվական հոսանքները, տեղեկատվության շարժի և վերամշակման գործընթացը, դրա առաջացման և տարածման մեխանիզմները: Երկրորդը հասարակական բաղադրիչն է, որը համակարգչային տեխնիկայի միջոցով մշակվող տեղեկատվության վերաբերյալ համացանցի և այլ ցանցերի օգտագործման ընթացքում ծագող հասարակական հարաբերությունների համակցության մեջ է: Երրորդը վիրտուալ տարածության տեխնիկական և տեխնոլոգիական բաղադրիչն է՝ հաշվի առնելով, որ վիրտուալ տարածությունը բարդ էլեկտրոնային համակարգի, տեխնիկական և ծրագրային միջոցների, ինովացիոն գործընթացների համակցություն է: Նա համարում է նաև, որ բոլոր երեք բաղադրիչը պետք է իրավական կարգավորման օբյեկտ դարձվեն:

Նշվածը հաշվի առնելով՝ նա սահմանում է վիրտուալ տարածությունը որպես տեխնիկական, տեխնոլոգիական և հասարակական հարաբերությունների ոլորտ, որն առաջանում, փոփոխվում և դադարում է տեղեկատվության, տեղեկատվական աղբյուրների, տեղեկատվական ծառայությունների և կապի միջոցների առթիվ համակարգչային կամ այլ էլեկտրոնային տեխնիկական ցանցի օգտագործման ընթացքում¹²:

Վիրտուալ տարածության հասկացության և առանձնահատկությունների վերաբերյալ վերոնշյալ վերլուծությունների ուսումնասիրության արդյունքով կարելի է հանգել, Ռ.Վ. Շագինյանի զուգահեռ ֆիզիկական և վիրտուալ աշխարհների գոյության մասին տեղեկատվական հասարակության բնորոշման արդարացիության մասին եզրահանգման:

Քննարկվող խնդիրների լուծման նպատակով հարկավոր է, վիրտուալ տարածությունից բացի՝ սահմանել նաև վիրտուալ տեղանք հասկացությունը: Այսպես, մեր կարծիքով՝ վիրտուալ տեղանքը վիրտուալ տարածության այն կտրվածքն է, որը պարունակում է այնպիսի թվային տեղեկատվություն կամ էլեկտրոնային փաստաթղթեր, որոնք, դատելով իրադրությունից, ողջամտորեն կարող էին իրենց վրա պահպանել հանցագործության հետքեր կամ կապ ունենալ հանցագործության հետ:

Կարծում ենք, որ շարադրվածը վկայում է այն մասին, որ ժամանակակից իրավահարաբերությունները պահանջում են հաշվի նստել վիրտուալ աշխարհի գոյության և վիրտուալ տարածության սահմաններում ապացուցողական նշանակություն ունեցող տվյալների պահպանման փաստի հետ, հետևապես՝ կարծում ենք, որ զննում կատարելու իրավահարաբերությունները կարգավորող վկայակոչված իրավադրույթում տեղ գտած տեղանք եզրույթին անհրաժեշտ է տալ տարածական մեկնաբանություն՝ դրա սահմանների մեջ ներառելով վիրտուալ տեղանքը որպես տեղանքի տարատեսակ:

Տեղանք եզրույթի նման մեկնաբանությունը թույլ կտա քրեական վարույթ իրականացնող մարմիններին անհրաժեշտության դեպքում զննում կատարելու եղանակով ինքնուրույն ձեռք բերել այնպիսի թվային տեղեկատվություն, որը արձանագրված է համացանցում կամ այլ տեղեկատվական ցանցում՝ դարձնելով վիրտուալ տարածության անհրաժեշտ կտրվածքը զննության պատշաճ օբյեկտ:

¹⁰ Տե՛ս Т.Тропина Киберпреступность и кибертерроризм // компьютерная преступность и кибертерроризм: Сборник научных статей / Под ред. В.А.Голубева, Н.А.Ахтырской.– Запорожье, 2004.– Вып. 1 – С. 76-81.

¹¹ Տե՛ս Шагиева Р.В. Концепция правовой деятельности в современном обществе.– Казань, 2005. С. 266.

¹² Տե՛ս Н.Н.Телешина Виртуальное пространство как новая юридическая конструкция: к постановке проблемы. <https://cyberleninka.ru/article/v/virtualnoe-prostranstvo-kak-novaya-yuridicheskaya-konstruktsiya-k-postanovke-problemy> (18.02.2018)

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ Կառավարման ակադեմիայի
գիտական աստիճանի հայցորդ

ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ (ՆՊԱՏԱԿԻ) ԼՈՒԾՄԱՆ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ: ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ, ԹԵ՛ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Սեփական կենսագոյության տարածքի արտաքին պաշտպանության խնդիրը գոյություն է ունեցել նաև մինչպետական հասարակության մեջ: Պետության առաջացման պատճառներից մեկն էլ երկրագնդի վրա բնակչության աճի ու ցամաքային տարածքի յուրացմանը զուգընթաց գործող արտաքին պաշտպանական օրինաչափությունն է՝ որը ներառում է օբյեկտիվորեն ընթացող մի քանի գործընթացների շղթայական հաջորդականություն՝ «տարածքի պաշտպանության կազմակերպման անհրաժեշտություն – պաշտպանական և նվաճողական պատերազմներ – աշխարհագրային կամ մշտական բանակի կազմավորում»²: Որոշ ժողովուրդների շրջանում պատերազմների ու նվաճումների դերն այնքան մեծ էր պետության առաջացման գործընթացում, որ հիմք տվեց մի շարք մտածողների՝ առաջ քաշել պետության առաջացման բռնության (պատերազմական) տեսությունը³: Պետության առաջացման մարքսիստական տեսությունը, սկզբունքորեն քննադատելով բռնության հայեցակար-

գը, ընդունում էր պատերազմի և բռնության որպես էական գործոնների դերը պետության կազմավորման գործընթացում, բայց ընդամենը որպես գործոնի, այլ ոչ թե՛ պատճառի:

Արտաքին պաշտպանական օրինաչափությունը ընկած լինելով պետության առաջացման հիմքում, չի դադարում գործել պետության գոյության ու զարգացման ընթացքում: Այս հետևության տեսական ամփոփման շնորհիվ՝ շատ պետականագետներ արտաքին պաշտպանական խնդիրը համարում են պետության գոյության ու գործողության **գլխավոր նպատակներից** մեկը⁴: Այս մոտեցումը գերիշխել է և՛ միջնադարում, և՛ նոր շրջանի ծաղկում ապրող պետաիրավական ուսմունքներում: Այսպես՝ ազատական հեղափոխությունների շրջանում «բնական իրավունքի» գաղափարի շրջանակներում պետության իրական դերի հիմնավորումը տվեց շոտլանդացի փիլիսոփա և տնտեսագետ Ա. Սմիթը՝ հայտարարելով, որ պետությունը պետք է ազատել, «մասնավոր անձանց աշխատանքը

¹ Պետության առաջացումն ունի բազմաթիվ պատճառներ ու գործոններ, մասնավորապես՝ տնտեսական, քաղաքական, գաղափարական և հոգեբանական: Օրինակ՝ պետության առաջացման տնտեսական պատճառի հիմքում ընկած են այնպիսի գործոններ, ինչպիսիք են դեմոգրաֆիան, կլիման, պատահականությունը, անհատների մտավոր ունակությունը և այլն (այդ մասին մանրամասն տես Кашанина Т.В., Происхождение государства и права. Современные трактовки и новые подходы.– М.: Юрист, 1999, էջ 33-39):

² Տեն Վադարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ (ԵՊՀ.– Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 50):

³ Տեն Каутский К., Материалистическое понимание истории, Т. 2, М., 1931, էջ 77, ինչպես նաև Дюринг Е., Ценность жизни. СПб., 1894:

⁴ Սակայն պետք է նկատի ունենալ, որ մեր հանրապետությունում, խորհրդային շրջանից ձևավորված տեսական ավանդության համաձայն՝ պետականագիտության մեջ արտաքին պաշտպանական հարցի հանգուցալուծումը տրվում է հասարակության և պետության առջև կանգնած խնդիր, խնդրի լուծմանն ուղղված գործառույթ, գործառույթի իրականացման ձևեր և մեթոդներ տեսական կատեգորիաների շղթայի միջոցով: Եթե խորհրդային և հետխորհրդային իրավագիտության մեջ պետության գործառույթները բաժանվում են ներքինի և արտաքինի, ապա եվրոպական պետականագիտության մեջ «պետության գործառույթների հարցը գործնականում չի քննարկվում: Որպես կանոն՝ այստեղ խոսքը պետության խնդիրների ու նպատակների մասին է» (տես Общая теория права и государства /под ред. В.В. Лозарева.– М.: Юрист, 1994, էջ 239-240):

ղեկավարելու պարտականությունից և ուղղորդել հասարակական շահերին ամենից համապատասխանող զբաղմունքներին»: Նրա կարծիքով՝ պետությունը կրում է երեք սկզբունքային պարտականություն՝ ա) պաշտպանություն, այսինքն՝ ռազմական՝ «պարտականությունը զերծ պահել հասարակությանն այլ անկախ հասարակությունների բռնություններից ու ներխուժումներից», բ) քաղաքացիների ազատության պաշտպանությունը, գ) հանրորեն անհրաժեշտ ծառայությունների կազմակերպումը⁵:

Այս միտքը հետագա շրջանում զարգացրեցին այլ մտածողներ, մասնավորապես՝ Գ. Հելինեկը⁶: Նա, մշակելով պետության նպատակների ուսմունքը, կառուցել է պետության նպատակների որոշակի հայեցակարգ: Ըստ նրա. «Պետությանը պատկանող գործունեության ոլորտն ինչպես դրա պատմական զարգացման տեսանկյունից, այնպես էլ այն նպատակները ճիշտ հասկանալու, որոնք հոգալու համար կոչված է, բաժանվում է երկու մեծ խմբի՝ գործառույթներ, որոնք պատկանում են բացառապես նրան, և գործառույթներ, որոնք անհատական և սոցիալական են, պետությունն ընդամենը միանում է դրանց՝ միայն կարգավորելով, օգնելով, խթանելով կամ արգելելով»⁷: Ըստ Գ. Հելինեկի. «Բացառապես պետությանն են պատկանում հասարակության և նրա անդամների պաշտպանությունը, դրա հետ մեկտեղ՝ իր տարածքը՝ արտաքին ներխուժումներից: Այս գործառույթը և դրան համապատասխանող նպատակը երբեք չի բացակայել պետության մեջ, նույնիսկ դրա սաղմնային վիճակում»⁸: Հելինեկը պաշտպանության գործառույթում տեսնում էր երկու կողմ՝ արտաքին և ներքին (պետության, նրա իշխա-

նության անձեռնմխելիության պահպանումը): Հելինեկն այս նպատակը համարում էր ամենից առաջինը, որի կատարումն ընդհանրապես պայման է պետական պտղաբեր գործունեության համար: Գ. Հելինեկն այս առաջնային գործառույթի կողքին ճանաչում էր բացառությամբ պետությանը պատկանող երկու հիմնական նպատակ-գործառույթներ, մասնավորապես՝ «իրավակարգի զարգացումը և պահպանությունը» և «մշակութային շահերին օժանդակելը»⁹:

Գ. Հելինեկի այս մոտեցման մեջ մեզ հետաքրքրում է նրա այն միտքը, որ. «Ինքնապահպանությունը և իր սեփական գոյության ու սեփական պատվի մասին հոգսը որպես պետության նպատակ առաջինն ու մերձական է, դրա կատարումը որոշակի սահմաններում ընդհանրապես պետության պտղաբեր գործունեության պայմանն է»: Երկրորդ և ամենահետաքրքիր միտքը, որ ունի Հելինեկն այս կապակցությամբ, այն է, որ. «Իրավական նպատակի իրականացման եղանակն ամեն մի պետության մեջ պայմանավորված է ժողովրդի ընդհանուր կացությամբ և նրա միջազգային դրությամբ»¹⁰:

Այսպիսով՝ քաղաքագիտական, պետականագիտական, ինչպես նաև իրավական ուսմունքներում ամեն մի հասարակության, և տրամաբանորեն հետևում է նաև պետության առաջին և գլխավոր «նպատակը», «խնդիրը», «գործառույթը» համարում են արտաքին պաշտպանականը¹¹: Այս հարցն առավել կարևորություն է ձեռք բերում ազգային պետություններում: Սակայն այդ նպատակի, խնդրի լուծման ճանապարհը, ուղին, եղանակը և պատմականորեն, և արդի շրջանում աչքի են ընկնում ապահովման տարբեր կառուցակարգերով՝ տեղի և ժա-

⁵ Հղումն ըստ Оскамытний В.В. Общая теория государства и права. М.: ЮНИТИ-ДАНА, 2011, էջ 153-154:

⁶ Գ. Հելինեկը (1851-1911 թթ.) գերմանացի ականավոր գիտնական էր, գերմանական իրավունքի սոցիոլոգիայի հիմնադիրը: Նրա աշխատությունները նվիրված են իրավունքի փիլիսոփայությանը, քաղաքական ուսմունքների պատմությանը, իրավունքի և միջազգային իրավունքի պատմությանը: Սակայն նրա հիմնական նվաճումները կապված են պետական իրավունքի հետ:

⁷ Տեն Елинек Г. Общее учение о государстве.– СПб.: из-во Юридический центр пресс, 2004, էջ 259:

⁸ Տեն նույն տեղը:

⁹ Այս մեթոդաբանական դիրքերից Գ. Հելինեկը, ներկա պետության նպատակային (թելեոլոգիական) հիմնավորման տեսանկյունից՝ պետությունը բնորոշում էր որպես «գերիշխող, ժողովրդի միության իրավաբանական անձ, որը պլանային, կենտրոնացված և արտաքին միջոցների օգնության դիմելու ճանապարհով բավարարում է անհատական, ազգային և համամարդկային համերաշխ շահերը՝ հասարակության առաջադիմական զարգացման ուղղությամբ» (տես Елинек Г. Общее учение о государстве.– СПб.: из-во Юридический центр пресс, 2004, էջ 259-268):

¹⁰ Տեն Елинек Г. Общее учение о государстве.– СПб.: из-во Юридический центр пресс, 2004, էջ 260, 261:

¹¹ Պետաիրավական ուսմունքներում, երևի թե, բացառություն են բնական-իրավական հայեցակարգերը, որոնց կարևոր են ներկայացուցիչները, կարծես թե, անտեսել են արտաքին պաշտպանական խնդիրը: Այդ տեսական անտե-

մանակի, կոնկրետ հանրության առջև դրված խնդիրների առանձնահատկություններով պայմանավորված: Ընդ որում՝ պատմականորեն եթե դիտարկենք այդ նպատակի լուծման եղանակները, ապա կտեսնենք, որ, պատմական զարգացմանը զուգընթաց՝ պետության այդ հիմնական նպատակի կենսագործման եղանակների բազմազանությունը զիջում է միօրինականությանը: Այս հանգամանքը պայմանավորված է պետականության պատմական զարգացման մեկ այլ օրինաչափությամբ, որն անվանում են պետության տեսլականի (մոդելի) միասնականացման միտում¹²: Մի կողմ թողնելով հիմնահարցի պատմական համատեքստը՝ փորձենք գնահատել դրա արդի տեսական և իրական սահմանադրական կարգավորման վիճակը: Արդի շրջանում հայոց պետության ձևավորման և զարգացման էությունը հանգում է այն արդյունքին, որ XX դարավերջին Խորհրդային Միության փլուզման պայմաններում պետականակերտության համար ընդօրինակելի տեսլական վերցրեցինք Արևմուտքում ձևավորված և մոդեռնիզացիայի ու համամիասնականացման հետևանքով տարածված սոցիալ-իրավական, ժողովրդավարական պետության տեսլականը: Որպես արդյունք մենք մեխանիկորեն ռեցեպցիայի ենթարկեցինք արտաքին պաշտպանական խնդրի (նպատակի) լուծման մի եղանակ, որը բնութագրական է եվրոպական պետություններին կամ էլ տեխնիկայի ու տեխնոլոգիայի վերջին նվաճումներով զինված գերտերություններին (ՌԴ, ԱՄՆ):

Եվրոպական տարածաշրջանի աշխարհաքաղաքական վիճակը, արտաքին անվտանգության ու երկրի պաշտպանության խնդիրները, սակայն, լրիվ այլ առանձնահատկություններ ունեն: Եվրոպական իրավիճակում սոցիալ-իրավական պետությունը կարող է բարեհաջող կերպով կատարել արտաքին պաշտպանական

խնդրի լուծումը: Գերտերությունները, որոնք ունեն միջուկային զենք և տեխնիկայի վերջին նվաճումներով զինված բանակ, աշխարհի այլ մասերից, ըստ էության, չունեն լուրջ սպառնալիքներ անվտանգության ու պաշտպանության ոլորտում՝ բացի միմյանցից սպասվող վտանգները: Հետևաբար՝ նրանց համար ևս ընդունելի է սոցիալ-իրավական պետության միջոցով երկրի պաշտպանության խնդրի լուծումը, պաշտպանական սովորական գործառույթի իրականացումը:

Այսպիսով՝ երկրի պաշտպանության հարցում և՛ տնտեսականորեն, և՛ արդի սահմանադրական կարգավորման առանձնահատկությունների տեսանկյունից՝ ներկայումս տարածված լուծումը համարվում է «գործառութային» անվանակոչված մոտեցումը: Այդ մոտեցման առանձնահատկությունը հետևյալն է. պետությունը հանրային քաղաքական իշխանության իրականացման իրավական ձև է, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն: Այդ կառույցը գոյություն ունի հանրության առջև դրված նպատակները-խնդիրները լուծելու համար: Դրանցից մեկն էլ երկրի անվտանգության ապահովման ու պաշտպանության խնդիրն է, որի իրականացման համար սոցիալ-իրավական պետությունը կատարում է պաշտպանական գործառույթ (նաև՝ անվտանգության ապահովման):

Երկրի պաշտպանության գործառութային մոտեցման կողմնակից տեսաբանների մեծագույն մասը, պետությունը համարելով որպես հասարակության արդյունք, եզրակացնում են, որ պետությունը «դառնում է հասարակության կառավարող համակարգը, գործուն ուժը, որն ազդում է այդտեղ տեղի ունեցող բոլոր կարևոր գործընթացների վրա... Այդ ակտիվ գործուն սկզբնահիմքը պետության գոյության եղանակն է: Դա տրված է պետության բուն բնույթով, նրա էությամբ»¹³:

տումը պայմանավորված է բնական իրավական հայեցակարգերի ներպետական ուղղվածությամբ, պետաիրավական ներքին հիմնահարցերի վրա կենտրոնանալով: Այդ անտեսումը չի նշանակում, թե երկրի պաշտպանությունն էական խնդիր չէ բնական-իրավական դիրքերից: Օրինակ՝ Ջոն Լոքը այնքան էր կարևորում պետության արտաքին գործունեությունը, որ օրենսդիր, գործադիր իշխանությունների կողքին առաջարկում էր 3-րդ՝ ֆեդերատիվ իշխանությունը: Հ. Գրոտիոսը բնական իրավական գաղափարները տարածեց արտաքին-միջպետական հարաբերությունների ոլորտի վրա:

¹² Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 222:

¹³ Տե՛ս Комаров С.А. Общая теория государства и права.– М., Юрайт, 1997, էջ 79:

Ս.Ա. Կոմարովն այս հիմքով պետության գործառույթները բնորոշում է որպես. «Պետության առջև կանգնած խնդիրների կենսագործմանն ուղղված գործունեության հիմնական (զխավոր) ուղղություններ (կողմեր, տեսակներ), որոնք միտված են որոշակի նպատակների հասնելուն, պայմանավորված են պետության էությանը և սոցիալական առաքելությանը»¹⁴:

Այսպիսով՝ պետության գործառույթավորման ընթացքը տեղի է ունենում «նպատակ» – «խնդիր» – «գործառույթ» – «գործառույթի իրականացման կառուցակարգ» (Մորոզովա Լ.Ա.) – «գործառույթին բնորոշ իրականացման ձևեր և մեթոդներ» շղթայով: Պետության նպատակներին հասնելու համար օբյեկտիվորեն անհրաժեշտ է լուծել կոնկրետ խնդիրներ, ինչն էլ, իր հերթին, պայմանավորված է համապատասխան խնդրի իրականացմամբ: Այսպես՝ եթե Հելինեկի խոսքերով ձևակերպենք, ապա պետության նպատակն է ինքնապահպանությունը, որից նրա առջև ծառանում է երկրի արտաքին պաշտպանության խնդիրը, իսկ այդ խնդրի լուծման համար իրականացվում է երկրի պաշտպանության գործառույթ¹⁵: Առանց գործառույթի իրականացման՝ խնդիրը կմնա չլուծված, չիրականացված, հետևաբար՝ խնդիրն առաջնային է գործառույթից: Խնդիրները, իրենց հերթին, ծագում են պետության գոյության ներքին և արտաքին օբյեկտիվ պայմաններից ու պահանջմունքներից, իսկ դրանք ամեն մի երկրում յուրահատուկ ազգային, պատմական երանգ ու պայմանավորվածություն ունեն: «Պետության գործառույթները և դրանք կատարող սուբյեկտները տեղայնացված են հատուկ իշխանական մարմիններում, հիմնարկներում, պետական

կազմակերպություններում: Արդի պետություններում պետության այդ իշխանական մարմինների կազմավորման ու գործունեության կարգը, կառուցվածքը, իրավունքներն ու պարտականությունները սահմանված են և ամրագրված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով»¹⁶:

Պետության արտաքին գործառույթներից առաջին տեղում միշտ դրվում է երկրի պաշտպանության գործառույթը: Վ.Ն. Խրոպանյուկի մեկնաբանմամբ. «Երկրի պաշտպանության գործառույթն իրականացվում է տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և ռազմական միջոցներով: Խաղաղ ժամանակներում դա երկրի բազմակողմանի պատրաստվելն է դրսի հնարավոր հարձակումներին դիմագրավելու համար: Պատերազմի ժամանակ այդ գործառույթն ընդունում է հակառակորդի դեմ զինված պայքարի ձև, որի ընթացքում տեղի է ունենում երկրի բոլոր ուժերի միավորում՝ հաղթանակի հասնելու համար... Երկրի պաշտպանության գործառույթ հասկացությունը տարողունակ է և բազմակողմ, ընդգրկում է պետության միջոցառումների ամբողջ համակարգը երկրի պաշտպանունակության ամրապնդման, ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ զինված ուժերի ռազմական հզորության ապահովման գործում»¹⁷:

Պետության պաշտպանական գործունեությունը հիմնվում է նրա ռազմական դոկտրինի (ուսմունքի) վրա և բաղկացած է հինգ հիմնական ուղղությունից՝ 1) երկրի պաշտպանական հզորության ամրապնդում, որի երաշխիքը զարգացած, արդյունավետ, գիտահենք տնտեսությունն է: Սա էլ, իր հերթին, նախադրյալ է ռազ-

¹⁴ Տեն Комаров С.А. Общая теория государства и права.– М., Юрайт, 1997, էջ 84: Այլ հեղինակների կողմից պետության գործառույթներին տրվող բնորոշումներն իրենց հիմնական գծերով համընկնում են այս բնորոշման հետ: Տարբերությունները հանգում են ոչ սկզբունքային պահերի: Լ.Ա. Մորոզովան առաջարկում է պետության գործառույթները մեկնաբանել ոչ միայն որպես դրա գործունեության հիմնական ուղղություն, այլև հասարակական հարաբերությունների վրա պետական ներգործության կառուցակարգ՝ հիմնավորելով, որ, կատարելով ինչ-որ գործառույթ, պետությունը միաժամանակ բարեփոխումների, վերակազմավորումների, իրավական կարգավորման միջոցով ներգործում է հասարակական գործընթացների կացության վրա (տես Морозова Л.А. Функции Российского государства на современном этапе. // Государство и право, 1993, ном. 6, էջ 98):

¹⁵ Պետք է նկատի ունենալ Ս.Ա. Կոմարովի այն միտքը, որ «գործառույթը» և «խնդիրն» անբաժան են, և պատահական չէ, որ պետության խնդիրների համապատասխանությունը կազմում է «պետության գործառույթ» կատեգորիայի էական հատկանիշը, ընդ որում՝ երբեմն որոշ խնդիրների և գործառույթների անվանումների ձևակերպումները համընկնում կամ համարյա համընկնում են (տես Комаров С.А. Общая теория государства и права.– М. Юрайт, 1997, էջ 87): Օրինակ՝ երկրի պաշտպանության խնդիրն համապատասխանում է համանուն գործառույթը:

¹⁶ Տեն Гомеров И.Н., Государство и государственная власть: предпосылки, особенности, структура.– М.: 2002, էջ 582:

¹⁷ Տեն Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, «Գոշ» հրատ., էջ 199-200:

մական արդյունաբերության զարգացման ապահովման համար, **2)** զինված ուժերի կատարելագործում, նրանց մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացում, **3)** պետական սահմանների պաշտպանություն, որը, որպես կանոն, իրականացնում են մասնագիտացված ստորաբաժանումները և սահմանապահ զորքերը, **4)** քաղաքացիական պաշտպանության կազմակերպում, **5)** զինված ուժերի պահեստայինների ռազմական ուսուցում¹⁸:

Երկրի պաշտպանությունն արտաքին ուժերից և այլ պետություններից՝ նպատակ – խնդիր – գործառույթ – գործառույթի իրականացման ձև և մեթոդ հաջորդական շղթայի մեջ կարևոր է նաև գործառույթների իրականացման իրավական (իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան) և կազմակերպական (կարգավորիչ, տնտեսական, գաղափարական) ձևերի հարաբերակցության հարցը¹⁹: Գործառույթի արդյունավետությունը ենթադրում է բոլոր ձևերի հավասարակշռված իրականացում, դրանց փոխադասարկվածություն, համագործակցություն: Հակառակ դեպքում անհնարին է գործառույթի պատշաճ իրականացումը: Եթե օրենսդրական ձևն առաջ է ընկել, սակայն չկա համապատասխան իրավակիրառում, ապա գործառույթը մնում է թղթի վրա: Եթե գործառույթն ապահովված չէ գաղափարական աշխատանքով, ապա հնարավոր է դրա ձախողում և ավելի շատ հարկադրական, քան համոզման մեթոդների կիրառում: Այնինչ՝ ճիշտ կառավարումը կգերադասեր հակառակը:

Արված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ արդի պետականագիտության, սահմանադրական իրավունքի տեսության մեջ երկրի պաշտպանության խնդրի լուծման տեսական կառույցը մեծ մասամբ կառուցված է գործառույթային մոտեցման հիման վրա, այսինքն՝ պետությունն իրականացնում է մի շարք արտաքին ու ներքին գործառույթներ, որոնցից մեկն էլ առաջնային նշանակություն ունեցող և

երկրի պաշտպանությանն ուղղված գործունեությունն է: Սակայն այսպիսի տեսական մեկնաբանությունը հետևողական, համակարգային տեսական մեթոդաբանության հիմքերով վերլուծելիս առաջացնում է մի շարք հիմնախնդիրներ, որոնցից կարելի է նշել հատկապես հետևյալները:

Առաջին՝ պատմական փորձը հաստատում է, որ գործառույթային տեսամեթոդական հիմքերով կառուցված պաշտպանական համակարգերը միշտ չէ, որ արդարացնում են իրենց կամ հաջողությամբ կատարում իրենց առջև դրված պաշտպանական խնդիրը: Դրա վառ օրինակն են Հայաստանի Առաջին հանրապետության պաշտպանական քաղաքականության դասերը²⁰, Երկրորդ աշխարհամարտի փորձը, երբ հիտլերյան Գերմանիայի ռազմական հարվածներին չկարողացան դիմակայել եվրոպական երկրները, նույնիսկ ռազմականացված կառավարման գծեր ունեցող Խորհրդային պետությունը: Պարտության պատճառներից մեկն էլ տեսության թերություններն են: Հետևաբար՝ պետք է կատարել տեսական արդիւններ և հայտնագործել կամ ստեղծել խնդրի նոր գիտական տեսլական:

Երկրորդ՝ եթե երկրի, հասարակության արտաքին պաշտպանությունը համարվում է պետության գլխավոր և առաջնակարգ նպատակը, խնդիրը (Ա. Սմիթ, Գ. Հելինեկ և այլք), ուրեմն՝ պետության էության բաղադրիչներից է և պետք է վերածվի այդ էության դրսևորման կազմակերպական կառուցակարգի, այդ կառույցին բնութագրական սկզբունքի: Ընդունված է ժամանակակից քաղաքակիրթ պետությունը համարել ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն: Պետության այդ բնութագրիչներից յուրաքանչյուրն արտահայտում է ինչ-որ նպատակ-խնդիր, որոնք համապատասխանաբար կարող ենք անվանել ժողովրդաիշխանություն, իրավականություն, սոցիալականություն: «Ցանկացած նպատակ, որ

¹⁸ Այս բաղադրատարրի մասին մանրամասն տե՛ս И.В. Дойников, Теория государства и права. ЮНИТА 2. Государственный аппарат. Типы и формы государства. Государство в политической системе общества. Правовое государство. Гипертекст, Современный гуманитарный университет, М., 1999, էջ 34-35, Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, «Գոշ» հրատ., էջ 200-202:

¹⁹ Այդ ձևերի մասին մանրամասն տե՛ս Теория государства и права, курс лекций /под ред. Н.И. Матузова и А.В. Малько.- М., 2012, էջ 33:

²⁰ Տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի Առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ.- ԵՊՀ, 2012, էջ 231-241:

դրվում է պետական կառավարման մեջ, պետք է գնահատվի իրավական պահանջներին համապատասխանելու տեսանկյունից, ամրագրվի օրենսդրորեն և կենսագործվի կյանքում՝ հենվելով օրենքների ուժի և վերջինների իրականացման պետական կառուցակարգերի վրա: Այդ ժամանակ կարող ենք հուսալ, որ պետական կառավարման նպատակները չեն մնա թղթի վրա կամ առաջնորդների ելույթներում, այլ գոնե իրավական հնարավորությունների սահմաններում գործնականում կիրականացվեն»²¹:

Որպեսզի պետությունն իրականում լինի ժողովրդավարական, իրավական և սոցիալական, այդ նպատակները վերածվում են պետության կազմակերպման ու գործունեության սկզբունքների մի շարք մակարդակներով՝ ա) հիմնարար սկզբունքներ, բ) ընդհանուր սկզբունքներ, գ) պետական իշխանության ամեն մի ճյուղին բնորոշ սկզբունքներ, դ) կոնկրետ պետական մարմնին բնորոշ սկզբունքներ²²: Սկզբունքների այդ համակարգը ստորակարգային է և, կառուցելով պետությունը դրանց համապատասխան ներքևից վերև, ապահովվում են հիմնարար սկզբունքների կենսագործումը և պետության վերածումն իրավականի, սոցիալականի, ժողովրդավարականի: Եթե պետությունը հոչակվում է իրավական, առանց դրա պահանջները կոնկրետ սկզբունքներում ամրագրված ելակետային դրույթների և դրանցից բխող մանրամասն կարգավորիչ նորմերի սահմանման, ապա պետությունը չի կարող ունենալ իրավական որակներ: Որակի առկայությունը կախված է նպատակադրված կարգավորման համակարգի հիմնադրումից, որը կատարվում է իրավաստեղծագործությամբ գիտության մշակած սկզբունքները մանրամասն նորմերի վերածելու և համապատասխան պետաիրավական ինստիտուտներ ստեղծելու միջոցով:

Պետականակերտության ընթացքում նպատակ-խնդիրը չպետք է մնա որպես գաղափար կամ հրապարակախոսություն: Գաղափարն իրականություն վերածելու ճանապարհն անցնում է իրավական կարգավորման համակարգով: Մեզ հետաքրքրող՝ երկրի պաշտպանության

նպատակ-խնդիրը, լինելով առաջնային, նույնքան արժանի է վերածվելու պետության կառուցման ու գործունեության սկզբունքի, որքան իրավականությունը և սոցիալականությունը:

Երրորդ՝ մտքերի նման տրամաբանական շղթան կարող է առաջացնել հարցադրում. «Ի վերջո՞ ի՞նչ տարբերություն, նպատակ-խնդիրը վերածվել է սկզբունքի, թե՛ սոսկ գործառույթի»: Այս հարցադրմանը պետք է հակադրել պետականագիտության մեջ առկա մեթոդաբանական մոտեցումը, որ սկզբունքը և գործառույթն իրարից տարբերվող տեսական հասկացություններ են: Դրանք կապողը հասարակության առջև ծառայած խնդիր-նպատակն է: Հասարակության և պետության առջև կանգնած խնդիրը (երկրի պաշտպանությունը) կյանքում կենսագործվում է գործառույթի իրականացման միջոցով: Իրենց հերթին՝ պետության գործառույթները նրա խնդիրների կենսագործման, կատարման միջոցներն են: Սահմանադրության միջոցով կերտվում է կառույց, և նրան վերագրվում է խնդիրներից բխող գործառույթների կատարում: Պետության գործառույթներն իրենց հիմնական բովանդակությամբ չունեն սահմանադրական ամրագրում: Դրանց վերագրումը պետությանը և կարգավորումը կատարվում են ընթացիկ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով: Այս դեպքում, անշուշտ, կարգավորումը պետք է ապահովի գործառույթների և ստեղծվող կառույցի միջև համապատասխանությունը:

Այս օրինաչափությունը պետականագիտությունն անվանում է «սերտ փոխկապվածություն պետության գործառույթների և կառուցակարգի (մեխանիզմի) միջև»: «Պետության գործառույթներն իրենց իրական կենսագործումն են ձեռք բերում պետական կառուցակարգի օգնությամբ, պետական ապարատի՝ որպես պետական մարմինների ամբողջական համակարգի գործունեության միջոցով: Պետության գործառույթներն անմիջականորեն ազդում են պետական կառուցակարգի վրա: ...Գործառույթները նախորդում են պետության կառուցակարգի կոնֆիգուրացիան»²³: Տեսականորեն ճա-

²¹ Տե՛ս Атаманчук Г.В., Теория государственного управления. Курс лекции.– М. Юрид. лит., 1997, էջ 117:

²² Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.– Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 192:

²³ Տե՛ս Теория государства и права, курс лекций /под ред. Н.И. Матузова и А.В. Малько.– М., 2012, էջ 33:

նաչելով և ընդունելով փոխգործակցության այդ օրինաչափությունը՝ պետք է ընդունել նաև, որ մեր կողմից ընդօրինակված մոդելի կոնֆիգուրացիան նախապես որոշված էր՝ իրավական, ժողովրդավարական, սոցիալական:

Մյուս խնդիրն իրավական կարգավորման շղթայական տարրերի բազմազանությունն է, ինչն արհեստավարժության պակասի պատճառով կարող է հանգեցնել փոխկապվածության օրինաչափությունների անտեսման, ինչն ավելի հաճախ է տեղի ունենում: Իսկ սկզբունքների մեծ մասը, տվյալ դեպքում՝ պետության կառուցման ու գործունեության, իրենց իրավական վիճակով համարվում են սահմանադրական կարգի հիմունքներ, ներթափանցում են նրա բոլոր դրսևորումներում, ներառյալ՝ «բոլոր գործառույթներում, ակտիվ ներգործություն են թողնում դրանց զարգացման վրա, ընկած են դրանցից յուրաքանչյուրի կատարման հիմքերում»²⁴: Պետական ապարատի կազմակերպման ու գործունեության սկզբունքները ղեկավար, ուղղորդիչ նշանակություն ունեն նաև պետական ապարատի փաստական գործունեության համար: Իրենց այդ հատկության ուժով սկզբունքները պայմանավորում են պետական մարմինների գործառույթները, կառուցվածքը, ներհամակարգային օղակների փոխհարաբերությունների բնույթը, լիազորությունները, պետական ապարատի կազմակերպման և գործունեության այլ արմատական հարցերը²⁵:

Չորրորդ՝ պետության սահմանադրական տեսլականի ու գործառույթի, վերջինի բովանդակային կողմերի, ձևերի ու մեթոդների կարգավորիչ շղթայի ոչ անմիջական կապը կարող է հանգեցնել անհամապատասխանության: Գործառույթը վերագրվում է մի կառույցի, որն անընդունակ է (կամ էլ՝ ունակ չէ) դա կատարելու, կամ էլ՝ իր բնույթով հարմարեցված չէ այդ գործառույթին: «Պաշտպանունակության սկզբունքը պահանջում է այնպես կառուցել պետական ապարատը, որ վերջինս ունակ լինի արտակարգ և պատերազմական պայմաններում ի-

րականացնելու իր առջև դրված խնդիրները, արժանի հակահարված տալու հակառակորդին: Այդ ունակությունը մեքենայական հատկություն չէ, այլ պետք է դրսևորվի հատուկ պետաիրավական ինստիտուտների հիմնադրմամբ և կայացմամբ, որոնք էլ, որպես արդյունք՝ պետք է ունակ դարձնեն Հանրապետությանը ռազմական վիճակում արագ, օպերատիվ և արդյունավետ կատարելու կառավարչական բոլոր խնդիրները: Այդպիսի համակարգի ներդրումը պետական ապարատին կօժտի կայունությամբ, այսինքն՝ ընդունակությամբ պահպանել իր հիմնական բնութագրերը և կատարել իր առջև դրված խնդիրները, չնայած տարբեր տեսակի քայքայիչ ներգործությունների»²⁶:

Այս կապակցությամբ, երևի թե, տեղին են պետական կառավարման տեսաբաններից մեկի՝ Գ.Վ. Ատամանչուկի հետևյալ մտքերը, որոնք նա արտահայտել է մարդկային արարքների շուրջ, սակայն լիովին վերաբերելի է նաև պետությանը. «Հանրահայտ է, որ ամեն մի արարք սկսվում է ինչ-որ բան անելու ցանկությունից: Միաժամանակ, հանրահայտ է, որ քիչ է ցանկանալ, պետք է իմանալ, քիչ է իմանալ, պետք է կարողանալ, քիչ է կարողանալ, պետք է լինել ունակ (ունենալ ուժ, ռեսուրսներ), քիչ է ունակ լինել, անհրաժեշտ է իրապես անել, կենսագործել ցանկությունը, հետևաբար՝ խնդիրը հանգում է կառավարմանը, նաև՝ պետական կառավարմանը»²⁷:

Պետական կառավարման նպատակները (ցանկությունները) իրականության վերածելու գործընթացում շատ կարևոր են այդ նպատակների կենսագործման կառուցակարգերը, դրանց կազմակերպական իրավական ձևերը՝ պետական կառավարման ձևը, գործառույթի իրականացման բովանդակային տարրերն իշխանական մարմինների միջև բաշխելը և մի շարք այլ հարցեր:

Կառավարման գիտության մեջ հանրահայտ օրինաչափություն է ձևի և բովանդակության միջև կապը, դրանց փոխպայմանավորվածությունը: «Կառավարվող օբյեկտները բանական

²⁴ Стен Общая теория государства и права. Академический курс в трех томах /отв. ред. М.Н. Марченко.– 3-е изд., перераб. и доп.– М.: Норма, 2007, էջ 389:

²⁵ Стен Կաղարջյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.– Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 190-191:

²⁶ Стен նույն տեղը, էջ 205:

²⁷ Стен Атаманчук Г.В., Теория государственного управления. Курс лекции.– М. Юрид. лит., 1997, էջ 7:

և արդյունավետ գործում են միայն իրենց համապատասխանող կազմակերպական ձևերում: Կոոպերացված գործունեության ցանկացած տեսակ, ինչպես նաև սոցիալական դերերի կոլեկտիվ կատարումը պահանջում է իր կազմակերպությունը... Այս առումով՝ կառավարվող օբյեկտների համար ամենից բարդ և անհրաժեշտ գործը հանգում է այնպիսի կազմակերպական ձևերի ընտրությանը, որոնք կստեղծեն պայմաններ համապատասխան հասարակական հարաբերություններում, գործունեության տեսակներում, սոցիալական դերերում դրված հնարավորությունների լրիվ կենսագործման համար: Անհրաժեշտ է մշտապես հետևել բովանդակության ու ձևի միջև կախվածությանը և թույլ չտալ ձևին արգելակել նորացվող (զարգացող) բովանդակության կենսագործմանը»²⁸: Ասվածն անվերապահորեն ընդունելի է պաշտպանության խնդրի և դրա պետական կառավարման ձևի միջև կապին ու փոխապայմանավորվածությանը:

Կարելի է եզրակացնել, որ, եթե պետական կառույցի նպատակներ են հռչակված իրավականությունը, ժողովրդավարականությունը, սոցիալականությունը, սակայն նրա նպատակ-խնդիրների մեջ առաջին տեղում դրված է պաշտպանությունը, ապա ակնհայտ է անհամապատասխանությունը, հակասությունը կառույցի էության և նրա գործառույթային մասնագիտացման միջև: Այդ հակասության լուծման ուղին կառույցին նաև առաջնային նպատակին համապատասխանող որակներ, էություն և առաքելություն հաղորդելն է:

Հինգերորդ՝ սոցիալական-իրավական պետության միջոցով երկրի պաշտպանության գործառույթային մոտեցումը, որ վերցված է դրսից, չի համապատասխանում մեր հասարակության, ժողովրդի պահանջմունքներին և առանձնահատկություններին: Չէ որ ընտրության սկզբնական փուլում մենք չունեինք այլընտրանք, իսկ, մյուս կողմից՝ անկախացման քաղաքական գործընթացների արագ զարգացումը և հանրապետության արտակարգ իրավիճակը, ինչ-որ տեղ նաև՝ սուբյեկտիվ գործոնը, հնարավորություն չստեղծեցին կատարելու ընտրված տեսլականի տեղի և ժամանակի առանձնահատկություններից

բխող հարմարեցում, ստեղծագործական զարգացում: «Պետական կառավարման օբյեկտիվացումը բխում է աղբյուրների, դետերմինանտների և իմպուլսների համալիրից, հետևյալ ուղիներով՝ բնական-աշխարհագրական պայմաններից, բնական-հասարակական պայմաններից, մշակութային-պատմական ժառանգությունից, արտադրական բազայից, տնտեսական հարաբերությունների համակարգից, սոցիալական կյանքի ավանդույթներից ու կառուցվածքից, հոգևոր մշակույթից, գիտատեխնիկական առաջադիմությունից և, հավանաբար, այլոցից, որոնք կարող են հայտնաբերվել և առանձնացվել այդ հիմնահարցն ավելի խոր բացահայտելիս: Տրամաբանական է, որ այդ համալիրի յուրացումը կախված է, թե ինչպես է զարգացած և կազմակերպված սուբյեկտիվ գործոնը, և ինչպես է կապված պետական կառավարման հետ»²⁹:

Պետք է հաշվի առնել, որ. «Պետականությունն օժտված է ազգային-հոգևոր բնույթով, ազգային-մշակութային կողմնորոշմամբ, քանի որ արտացոլում է այդ ժողովրդի կուտակած հոգևոր և այլ սոցիալական արժեքները. ցանկացած պետականություն օժտված է յուրաքանչյուր ժողովրդի էթնոմշակութային յուրօրինակությանը համապատասխանող տիպաբանական առանձնահատկություններով: Ազգային-մշակութային առումների մոռացությունը կամ անտեսումը կարող են հանգեցնել հասարակության վերակառուցման ճանապարհների ու միջոցների սխալ ընտրության, նրա կենսագործունեության ապակազմակերպման, այլ վտանգավոր բացասական հետևանքների և, նույնիսկ՝ պետականության փլուզման, անկման»³⁰: Այսպիսով՝ տեսական միտքը ճանաչում է այն հանգամանքը, որ կառավարման ընդմիջտրված ու քարացած ձևեր գոյություն չունեն: Կառավարումը պետք է ելնի ու հարմարեցվի հասարակության պահանջմունքներին, հենվի դրանց վրա, զարգացնի և բավարարի դրանք, ընդունակ լինի տալու արդյունավետ լուծումներ: Այստեղ է, որ բարձրանում է սուբյեկտիվ գործոնի դերը կառավարման ռազմավարությունը և մարտավարությունը որոշելու հարցում:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 79:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 66:

³⁰ Տե՛ս Теория государства и права, курс лекций /под ред. Н.И. Матузова и А.В. Малько.– М., 2012, էջ 33:

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս, ամբիոնի հայցորդ

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԸՆԴԱՅՆՈՒՄԸ` ԸՍՏ 2015Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Կառավարման խորհրդարանական համակարգում հիմնական քաղաքական բաժանարար գիծը ոչ թե Կառավարության և խորհրդարանի, այլ՝ քաղաքական մեծամասնության և խորհրդարանական փոքրամասնության միջև է, ուստի Սահմանադրությունը խորհրդարանական փոքրամասնությանը վերապահել է իր դերին համարժեք իրավունքներ: Դրանք իրենց արտացոլում են գտել օրենսդրական գործընթացում, պետական մարմինների ձևավորման հարցում, Ազգային ժողովի մարմիններում ներկայացվածության մեջ, արտահերթ նիստեր և նստաշրջաններ հրավիրելու իրավունքում, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողության կարևորագույն գործիք հանդիսացող քննիչ հանձնաժողովների ձևավորման և գործունեության հարցում:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասը **ներմուծել է սահմանադրական (օրգանական) օրենքների ինստիտուտը** և սահմանել դրանց սպառիչ ցանկը: **Այդ օրենքները**, ի տարբերություն սովորական օրենքների, **պետք է ընդունվեն որակյալ մեծամասնությամբ՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:** Խոսքն այն օրենքների մասին է, որոնք անմիջականորեն ազդում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, ինչպես նաև պետական իշխանության կազմակերպման վրա, որտեղ ավելի մեծ կայունություն և համաձայնություն է պահանջվում, քան սովորական օրենքների դեպքում: Դրանց թվին են պատկանում **Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու**

իրավունքների պաշտպանի մասին օրենքը (հոդվ. 103, մաս 2-րդ):

Սահմանադրությունը կարևոր դերակատարում է ընձեռում խորհրդարանական փոքրամասնությանը Գլխավոր դատախազի (հոդվ. 177), Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (հոդվ. 195), Հաշվեքննիչ պալատի (գործող Վերահսկիչ պալատի) նախագահների և մյուս անդամների ընտրությունների (հոդվ. 199), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների (հոդվ. 197) և Կենտրոնական բանկի նախագահի (հոդվ. 201) ընտրության ժամանակ, ինչպես նաև դատական իշխանության մարմինների ձևավորման գործում՝ նախատեսելով համապատասխան պաշտոնատար անձանց ընտրություն **պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ով:** Նշենք, որ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում նման որակյալ մեծամասնություն նախատեսված էր միայն Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության համար:

Սահմանադրությունը նախատեսում է նաև Ազգային ժողովի մարմիններում ընդդիմության ներկայացուցչություն, մասնավորապես՝ **Ազգային ժողովի երեք փոխնախագահից մեկի պաշտոնի վերապահում քաղաքական փոքրամասնությանը** (հոդվ. 104, մաս 1):

Խորհրդարանական փոքրամասնությունների մյուս իրավունքները կարող են ամրագրվել Ազգային ժողովի **կանոնակարգում, որը նույնպես պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների երեք հինգերորդով:**

Սահմանադրությունը պահպանում է Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի իրավունքը՝ **օրենքների և այլ իրավական ակտերի սահմանադրականության հարցերով դիմելու Սահմանադրական դատարան:**

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 70-րդ հոդվածը արտահերթ նիստ կամ նստաշրջան հրավիրելու իրավունքը վերապահում էր պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդին: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասը, ընդլայնելով խորհրդարանական փոքրամասնության հնարավորությունները, այս իրավունքը վերապահել է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդին:

Քաղաքական փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի **քննիչ հանձնաժողովներ ստեղծելու և դրանք նախագահելու իրավունքը** (հոդվ. 108):

Խորհրդարանական կառավարման համակարգում քննիչ հանձնաժողովները պառլամենտի վերահսկողական գործառույթների մեջ կենտրոնական տեղ են զբաղեցնում՝ միաժամանակ **հանդիսանալով խորհրդարանական փոքրամասնության կարևորագույն իրավունք**: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը քննիչ հանձնաժողովի՝ որպես գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության գործիքի մասին հատուկ դրույթներ չէր պարունակում: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 73-րդ հոդվածը միայն նախատեսում էր, որ անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովում կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ՝ որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար: Այդ նպատակով պահանջվում էր Ազգային ժողովի մեծամասնության կողմից ընդունվող որոշում:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն առաջին անգամ առանձին ձևակերպմամբ ներմուծել է քննիչ հանձնաժողովների ինստիտուտը՝ 108-րդ հոդվածում մանրամասն ամրագրելով քննիչ հանձնաժողովների ստեղծման և գործունեության հիմնարար դրույթները:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասից հստակ երևում է, որ քննիչ հանձնաժողովը գործառությանի առումով **նախատեսված**

է որպես Ազգային ժողովի փոքրամասնության գործիք՝ ընդդեմ պառլամենտական մեծամասնության և կառավարության: Այդ իսկ պատճառով փոքրամասնության պաշտպանության պահանջները հաշվի են առնված հատկապես հանձնաժողով ստեղծելու, դրա կազմի, ապացույցներ պահանջելու հարցերում:

Վերը նշված տեսանկյունից կարևորագույն կարգավորում է նախ և առաջ այն, որ քննիչ հանձնաժողովն ստեղծվում է իրավունքի ուժով՝ պատգամավորների ընդհանուր թվի մեկ քառորդի պահանջով: Դա նշանակում է, որ, ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության կարգավորումների՝ այժմ **քննիչ հանձնաժողովի ստեղծումը պայմանավորված չէ Ազգային ժողովի որոշմամբ**: **Պառլամենտական մեծամասնությունը ոչ միայն չի կարող արգելք հանդիսանալ հանձնաժողովի ստեղծմանը, այլև փոխել քննիչ հանձնաժողովի մանդատի շրջանակը**: Քննիչ հանձնաժողովի ստեղծմանը հակակշռելու միակ կառուցակարգը (մեխանիզմը) Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հնարավորությունն է՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերով դիմելու Սահմանադրական դատարան¹:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասում հստակ ձևակերպված են քննիչ հանձնաժողովի սահմանադրաիրավական խնդիրն ու նպատակը, որոնք են՝ Ազգային ժողովի իրավասության մեջ ներառվող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելը և դրանք Ազգային ժողով ներկայացնելը: Քննիչ հանձնաժողով ստեղծելիս խիստ կարևոր է, որ վերջինիս քննության առարկան բավարար հստակությամբ սահմանվի: Խորհրդարանական քննիչ հանձնաժողովի մանդատի սահմանման համար 108-րդ հոդվածի 1-ին մասից ուղղակիորեն բխում են մի շարք նախապայմաններ, որոնք, միևնույն ժամանակ, Ազգային ժողովին ներկայացվող սահմանափակումներ են: Առաջին՝ քննիչ հանձնաժողովի իրավասության առարկա կարող է լինել միայն «փաստեր» պարզելը: Երկրորդ՝

¹ Այդ մասին տես Վ.Պողոսյան, Ն.Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ 105:

այդ փաստերը պարզելը պետք է նշանակալի հանրային հետաքրքրություն ներկայացնի, հակառակ դեպքում քննիչ հանձնաժողովի իրավասության տիրույթը կարող է դառնալ անսահման: Իհարկե, քննիչ հանձնաժողովի քննության առարկան չպետք է սահմանափակել միայն պետական իշխանության ոլորտով, և չպետք է բացառել նաև մասնավոր ոլորտը, եթե առկա է կապ, օրինակ, պետական մարմինների կողմից պատվիրակված լիազորությունների, մասնավոր կազմակերպություններին տրված արտոնությունների կամ այլ հատուկ պարտականությունների հետ: Երրորդ՝ բացի հանրային հետաքրքրության չափանիշից՝ սահմանադրական նորմը պարունակում է մեկ այլ սահմանափակում ևս. **քննության առարկան պետք է ներառվի Ազգային ժողովի իրավասության մեջ:** Ազգային ժողովի իրավասության շրջանակներն ուրվագծված են 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 88-րդ հոդվածում:

Քննիչ հանձնաժողովների գործունեության հիմնական ոլորտը, այդուհանդերձ, գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունն է²: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել, որ Ազգային ժողովի կողմից իր վերահսկողական լիազորություններն իրականացնելը չխախտի իշխանությունների բաժանման սկզբունքի պահանջները և չներթափանցի գործադիր իշխանության՝ սեփական պատասխանատվության կենտրոնական ոլորտ, կառավարության կամքի ձևավորման դաշտ՝ խոչընդոտելով կառավարությունն իր սահմանադրական գործառույթներն իրականացնելու հարցում³:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասից բխող սահմանափակումներից բացի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից կարելի է առանձնացնել նաև մեկ այլ նախապայման, որն զգալի նշանակություն

ունի քննիչ հանձնաժողովների մանդատի որոշակիացման հարցում: Այստեղ քննության առարկա կարող են լինել միմիայն այնպիսի փաստեր ու գործընթացներ, որոնք միանշանակ ավարտված են, այսինքն՝ դրանցով դատարանում կամ այլ պետական մարմնում քննության ընթացքի մեջ գտնվող գործ չկա⁴:

Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը: Դրանում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ (հոդվ. 108, մաս 2-րդ): Սահմանադրական նման կարգավորումը պայմանավորված է այն սկզբունքով, որ հանձնաժողովները, որպես կանոն, պետք է արտացոլեն խորհրդարանում կուսակցական ներկայացվածության հայելային պատկերը: Սակայն փոքրամասնության շահերի պաշտպանության համար սահմանադրական նորմը հանձնաժողովի կազմում ևս նախատեսում է երաշխիք. **հանձնաժողովը պետք է նախագահի պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը:**

Քննիչ հանձնաժողովին վերաբերող սահմանադրական կարգավորումն անդրադառնում է նաև հանձնաժողովի գործունեության արդյունավետության և գործիքակազմի երաշխիքներին: 108-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանադրական մակարդակով սահմանում է հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու մասին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց պարտականությունը: **Ապացույցներ պահանջելու գործընթացը պետք է կատարվի քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով:** Այս կարգավորումը ոչ միայն հաշվի է առնում փոքրամասնության շահերը, այլև կանխում է անհարկի ապացույցներ պահանջելու չարաշահումները:

² Տե՛ս նույն տեղում, էջ 106:

³ Այդ մասին է Սաքսոնիայի Սահմանադրական դատարանի դատավոր, Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Քրիստոֆ Դեգենհարթի՝ 2016 թ. օգոստոսին արտահայտված՝ «Պառլամենտի քննիչ հանձնաժողովներն ըստ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի, Պառլամենտական քննիչ հանձնաժողովների մասին օրենքի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (հրապարակված չէ)» կարծիքը:

⁴ Տե՛ս Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Օտտո Լուխթերհանդի՝ 2016 թ. օգոստոսին արտահայտված կարծիքը՝ Հայաստանի Հանրապետությունում պառլամենտական քննիչ հանձնաժողովի իրավական ինստիտուտի ներմուծման հայեցակարգի վերաբերյալ (հրապարակված չէ):

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵՎԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐ

Մի խումբ տեսաբանների կարծիքով՝ պետության բնույթով պայմանավորված, վերջինիս բնորոշ է քաղաքացիական հասարակության վերահսկողությունից դուրս գալու և ինքնաբավ ուժի վերածվելու, ըստ երևույթին, օբյեկտիվ հատկանիշ: Բացի այդ՝ պետության ձեռքում հանրային իշխանության առավելագույն կենտրոնացումը շատ հավանական է դարձնում ոչ միայն դրա ակնհայտ չարաշահումները, այլև թաքնված մանիպուլյացիաները, երբ պետական մարմինները և առանձին պաշտոնատար անձինք տարաբնույթ դրական նկատառումներով, այդ թվում՝ անվտանգության, կարող են խեղաթյուրել ազգային անվտանգության ելակետային գաղափարները՝ ի վնաս ժողովրդավարության և մարդու իրավունքների¹: Թերևս՝ հենց դրանով է պայմանավորված այն մտահոգությունը, որ պետական իշխանությունն իր կազմակերպվածքով և գործառնություններով հնքնին կարող է վտանգավոր լինել՝ ազգային անվտանգության շահերի ապահովման տեսանկյունից²: Դա պայմանավորված է նաև ազգային անվտանգության ապահովման հարցում պետության բացառիկ դերակատարությամբ:

«Ազգային անվտանգություն» եզրույթը անգլերեն «national security» բառակապակցության թարգմանությունն է: Հատկանշական է, որ Արևմուտքում «ազգային անվտանգությունը» նույնացվում է «պետական անվտանգության» հետ, սակայն, մեր կարծիքով՝ նշված հասկացությունների նույնացումը և փոխարինումը մե-

կը մյուսով անթույլատրելի է, քանի որ առաջին հասկացությունն առավել ընդհանուր է և լայն, իսկ երկրորդը՝ մասնավոր, տեսակային: Վ.Վ. Մամոնովի կարծիքով՝ այդպիսի մեկնաբանությունը ճիշտ չէ, քանի որ ազգային անվտանգությունը ենթադրում է եռամիասնական կառուցվածք, որի բաղադրատարրերից յուրաքանչյուրը հավասարապես կարևորվում է. **անձի, հասարակության և պետության անվտանգություն**³:

Հատկանշական է, որ ազգային անվտանգություն եզրույթը թեև հիշատակված էր ինչպես ՀՀ Սահմանադրության⁴ սկզբնական տեքստում, այնպես էլ բազմաթիվ նորմատիվ իրավական ակտերում⁵, սակայն դրա բովանդակությունն առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվել է «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-294 օրենքում, որի 1-ին հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության **այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը** (ընդգծումը մերն է՝ Հ.Հ.), երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատություն-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

¹ Տե՛ս, օրինակ. Голубев В.А. Правовое обеспечение безопасности высших органов исполнительной власти Российской Федерации. Дисс. канд. юрид. наук. М., 1999.
² Տե՛ս Идрисов Р.Ф. Теоретические и правовые проблемы обеспечения национальной безопасности Российской Федерации, Дисс. д-ра юрид. наук: 12.00.14. М., 2002, էջ 57:
³ Տե՛ս Мамонов В.В. Конституционные основы национальной безопасности России: Монография. Саратов. 2002, էջ 19:
⁴ Տե՛ս «ՀՀ Սահմանադրություն» (ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին), հոդ. 89: «ARLIS» (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1>)
⁵ Տե՛ս, օրինակ. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ 1996 թվականի դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-94 օրենքը («ՀՀ Ազգային ժողովի տեղեկագիր» («ՀՀԱԺՏ»), 1996, հմ. 23-24), հոդ. 9:

ների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Անձի շահերը ներառում են սահմանադրական իրավունքների և ազատությունների իրացումը, անձնական անվտանգության ապահովումը, կյանքի որակի և մակարդակի բարձրացումը, անձի և քաղաքացու ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացումը: Հասարակության շահերը հանգում են ժողովրդավարության ամրապնդմանը, իրավական, սոցիալական պետության կայացմանը և հասարակական համերաշխության պահպանությանը: Ժամանակակից իրավական պետության շահերը ելնում են սահմանադրական կարգի, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անձեռնմխելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության ապահովման, օրինականության անվերապահ ամրապնդման և իրավակարգի պահպանման, փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման պահանջներից⁶:

Պետական կառավարման ձևի գիտական բնորոշման տեսությունն ի հայտ է եկել պետական կազմակերպության աճին, դրա քաղաքական հասունացմանը, պետական գործառույթների ընդլայնմանը, պետության՝ որպես հասարակական ֆենոմենի ընկալմանը զուգընթաց:

Արդի ժամանակաշրջանում պետութենագիտության մեջ ընդունված տեսակետը⁷ հանգում է հետևյալին. պետության ձևը⁸ ներառում է իշխանության կազմակերպման երեք փոխկապված բաղադրատարեր՝ 1) պետական կա-

ռավարման ձևը, 2) պետական կառուցվածքի ձևը⁹, 3) պետահրավական ռեժիմը:

Ինչպես նշում է Ա.Վ. Վենգերովը՝ պետության տեսական բնորոշման մեջ հատուկ տեղ է զբաղեցնում կառավարման ձևը, քանի որ հենց դա է կանխորոշում՝ ո՛վ և ինչպե՛ս է իրականացնում պետական իշխանությունը պետականորեն կազմակերպված հասարակության մեջ¹⁰: Երկար ժամանակ կառավարման ձևը չէր առանձնացվում պետության ձևից. այդ հասկացությունները նույնացվում էին:

Պետական կառավարման ձևն ունի բազմաթիվ գիտական բնորոշումներ: Իրավունք գիտության մեջ պետական կառավարման ձևը, որպես կանոն, բնորոշվում է որպես պետության ձևի բաղադրատարր, որը վերջինս բնորոշում է պետության գլխի պաշտոնի զբաղեցման կարգի տեսանկյունից՝ կախված այն հանգամանքից, թե ինչ եղանակով է դա տեղի ունենում (ուղղակի ընտրությունների, խորհրդարանի կողմից, գահաժառանգության կարգով), տարբերակվում են հանրապետություններ և միապետություններ¹¹:

Պետական կառավարման ձևի ամենից տարածված սահմանման համաձայն՝ պետական կառավարման ձևը ցույց է տալիս գերագույն պետական իշխանության կազմակերպման եղանակը, պետական մարմինների ձևավորման կարգը, դրանց փոխգործությունը միմյանց միջև, բնակչության մասնակցության աստիճանը պետական մարմինների ձևավորմանը¹²: Ըստ այդմ՝ գոյություն ունեն պետական կառավարման երկու հիմնական ձևեր¹³՝ միապետություն և հանրապետություն:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 80:

⁷ Տե՛ս Վաղարշյան Ա.Գ. «Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության և անվտանգության պրոբլեմը», «Հայկական բանակ» հանդես, Երևան, 2016, հմ. 2 (88), էջ 46:

⁸ Պետության ձև ասելով՝ հասկանում ենք «նրա ներքին կազմակերպվածքը, պետական մարմինների և բնակչության փոխհարաբերությունների բնույթը, ինչպես նաև կազմակերպական ու կառավարչական գործունեության համար օգտագործվող մեթոդները, եղանակներն ու հնարները: Ավելի համառոտ կերպով պետության ձևը կարելի է սահմանել որպես պետական իշխանության կազմակերպման և իրականացման եղանակ»: (տե՛ս. Морозова Л.А.. Теория государства и права в вопросах и ответах. Изд. 2-е, переработанное и дополненное. М., 2009, էջ 52)

⁹ Պետական կառուցվածքի ձևը բնութագրում է պետական իշխանության տարածքային կազմակերպումը, տարածքի ներքին բաժանումը մասերի, պետության և նրա բաղկացուցիչ մասերի փոխհարաբերության բնույթը: Ըստ կառուցվածքի ձևի՝ պետությունները լինում են պարզ՝ միասնական (ունիտար), և բարդ՝ դաշնային (ֆեդերատիվ) կամ համադաշնային (կոնֆեդերատիվ) (այս մասին առավել մանրամասն տե՛ս. Վաղարշյան Ա.Գ. «Պետության և իրավունքի տեսություն-1»: Դասախոսություններ: ԵՊՀ.– Եր., 2016, էջ 151-152):

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 519:

¹¹ Տե՛ս Теория права и государства. Учебник/Под ред. В.В. Лазарева. М.: Право и закон, 2001., էջ 386:

¹² Տե՛ս Վաղարշյան Ա.Գ. «Պետության և իրավունքի տեսություն-1»: Դասախոսություններ: ԵՊՀ.– Եր., 2016, էջ 143-148:

¹³ Տե՛ս նույն տեղում:

տական) տեսակների¹⁶: Վ.Ս. Ներսեսյանցն իրավական չափանիշներին համապատասխան պետական-իրավական ռեժիմները բաժանում է երկու խմբի՝ ազատականների և ավտորիտարների¹⁷:

Մի կողմ թողնելով պետաիրավական ռեժիմների դասակարգման՝ սույն հետազոտության առարկան չկազմող հիմնախնդիրը՝ հարկ ենք համարում նշել միայն, որ եթե կառավարման ձևը պատասխանում է այն հարցին, թե ո՞վ և ինչպե՞ս է կառավարում¹⁸, ապա պետաիրավական ռեժիմը՝ ինչպե՞ս և ինչ եղանակով է իրականացվում պետական իշխանությունը: Այսինքն՝ եթե պետական կառավարման և կառուցվածքի ձևերը բնութագրում են պետության կազմակերպակառուցվածքային կողմերը, ապա պետաիրավական ռեժիմը՝ բովանդակությունը¹⁹: Պետության կառավարման ձևի և պետաիրավական ռեժիմի հարաբերակցության և փոխադարձ ազդեցության հիմնահարցն անցումային տիպի հասարակությունների համար չափազանց կարևոր է²⁰ և քննարկվում է գիտական և ուսումնական աշխատություններում²¹: Կարծում ենք, որ պետաիրավական ռեժիմը չի կարող դիտարկվել պետական իշխանության բարձրագույն մարմինների իրավական կարգավիճակից և գործունեությունից անջատ: Պետության կառավարման ձևը և պետաիրավական ռեժիմը փոխկապված են միմյանց, և չափազանց կարևոր է հասկանալ, որ պետական կառավարման հնարները, եղանակները և մեթոդները կախված են նաև պետական կառավարման ձևի սահմանադրաիրավական կարգավիճակից: Անվիճելի է, որ կառավարման ցանկացած ձևում կա որոշակի տար-

բերություն սահմանադրության և քաղաքական պրակտիկայի միջև, դրանով իսկ պայմանավորված համեմատաբար նման սահմանադրական կառույցներն իրականում առաջացնում են տարբեր քաղաքական պրակտիկաներ: Իհարկե, կառավարման ձևը միակ անփոփոխ մեծությունը չէ, որով բացատրվում է երկրի քաղաքական պրակտիկան: Մ. Դյուվերթեն նշում է, որ կառուցակարգված կուսակցական համակարգը և կայուն մեծամասնությունները խորհրդարանում հսկայական ազդեցություն են թողնում կառավարման համակարգի (հեղ.՝ պետաիրավական ռեժիմ) գործունեության վրա: Կարևոր գործոն են նաև քաղաքական մշակույթն ու ավանդույթները, որոնք իրենց ազդեցությունն են թողնում Նախագահի իմիջի վրա: Մյուս կողմից՝ քաղաքական հաստատություններն ինքնին որոշակի պարտադրանքներ են դնում քաղաքական դերակատարների վրա: Այսպիսով՝ քաղաքական հաստատությունները կարող են դիտարկվել ինչպես անկախ, այնպես էլ կախյալ մեծություններ: Կառավարման, ընտրական և կուսակցական համակարգերը պետք է քննարկվեն միասին՝ համապատասխան քաղաքական մշակույթի ենթատեքստում²²: Այս ձևով հասկանալի է դառնում, թե ինչու իրավաբանական հաստատություններով սահմանված միևնույն կառավարման ձևը կարող է գործել տարբեր պետաիրավական ռեժիմների շրջանակներում: Այլ կերպ ասած՝ կառավարման ձևը սահմանում է խաղի որոշակի կանոններ, որոնց շրջանակներում հնարավոր են խաղի տարբեր դրսևորումներ:

«Ազգային անվտանգության ռազմավարությունը»,²³ «Ազգային շահերը պետական

¹⁶ Տե՛ս Խրոպանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 152:

¹⁷ Տե՛ս Ներսեսյանց Վ.Ս. Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 2001, էջ 84-85:

¹⁸ Տե՛ս Венгеров А.Б. Теория государства и права: учебник [для юрид. вузов] / А.Б. Венгеров. 6-е изд., стер. М.: Изд-во «Омега-Л», 2009. էջ 122:

¹⁹ Տե՛ս Վաղարշյան Ա.Գ. Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության և անվտանգության պրոբլեմը, «Հայկական բանակ» հանդես, Երևան, 2016, հմ. 2 (88), էջ 46:

²⁰ Տե՛ս, Медушевский А.Н. Сравнительное конституционное право и политические институты: курс лекций.– М.: ГУ ВШЭ, 2002, էջ 190:

²¹ Տե՛ս օրինակ՝ Дибиров Н.З. Теоретические основы типологии политических режимов // Философские исследования. 2002. №2. էջ 26, Курскова Г.Ю. Политический режим Российской Федерации. Теоретико-правовой аспект: монография.– М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2008, էջ 195; Медушевский А.Н. Сравнительное конституционное право и политические институты: курс лекций.– М.: ГУ ВШЭ, 2002, էջ 190; Сафонов В.Н. Соотношение «форм правления» и «режимов правления»// Социально-политический журнал. 1998. №1. էջ 32.

²² Տե՛ս М. Duverger, Le systeme politique francais. Droit constitutionnel et Science politique, 21. edition, 1996, էջ 903:

²³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 2-ի «Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-ն իրամանագիրը («ՀՀՊՏ», 2007, հմ. 11(535)):

քաղաքականության մշակման և իրագործման հիմքում դնելուց զատ՝ սահմանում է դրանց համակարգը, բովանդակությունը և առաջնահերթությունները: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքներն են.

- Անկախությունը. Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

- Պետության և ժողովրդի պաշտպանվածությունը. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության ֆիզիկական գոյությունը:

- Խաղաղությունը և միջազգային համագործակցությունը. Հայաստանի Հանրապետությունը ձգտում է իր միջազգային ներգրավվածության աստիճանի բարձրացմանը, նպաստում տարածաշրջանում և աշխարհում խաղաղության և անվտանգության ապահովմանը:

- Հայապահպանությունը. Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը՝ Հայրենիքում և Սփյուռքում:

- Բարեկեցությունը. Հայաստանի Հանրապետությունը ձգտում է կայուն զարգացման միջոցով բնակչության համար ապահովել կյանքի բարձր որակ:

Քննարկելով պետական կառավարման ձևի հիմնախնդիրը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում՝ հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունն անտեսել է պետության բովանդակային կողմի (պետահրավական ռեժիմի) վրա կառավարման ձևի ազդեցության հետևանքով ազգային անվտանգության սպառնալիքներ-

րի առաջացման օբյեկտիվ հնարավորությունը և չի նախատեսել գործուն մեխանիզմներ դականխելու համար: Ռազմավարության հիմնարար արժեքների, դրանք ապահովող գործոնների և գործողությունների բովանդակային ուսումնասիրությունը և դրանց համադրումը պետահրավական ռեժիմի արդեն իսկ քննարկված հատկանիշների հետ հիմք է տալիս եզրակացնելու, որ ռազմավարությունը սահմանափակվել է միայն ժողովրդավարական պետահրավական ռեժիմի հաստատման համար անհրաժեշտ գործոնների ապահովմամբ՝ անտեսելով կառավարման ձևի հիմնախնդիրը: Կառավարման ձևի և պետության անվտանգության հարաբերակցության համատեքստում Ա.Գ. Վաղարշյանը իրավացիոեն նշում է, որ կառավարման մենիշխանական, անձնիշխանական, նախագահական կամ կիսանախագահական համակարգի պայմաններում «փափուկ ուժի»²⁴ գործոնը կարող է իշխանության բերել մի գործչի, ում կողմնորոշումը, այսպես ասած, հայամետ չէ: Արդի իրողությունների պայմաններում դա հնարավոր է այն պատճառով, որ ընտրական գործընթացները զուգակցվում են մի շարք բացասական միտումներով: Այսպիսին է հայ ժողովրդին «բաժին հասած դաժան իրողությունը», և այս պայմաններում պետության կառավարման համակարգի փոփոխությունը՝ անցումը կիսանախագահական մենիշխանությունից խորհրդարանական համակարգին, պետք է դիտվի որպես պետության պաշտպանության և անվտանգության, ազգային շահերի իրացման ապահովման միջոց²⁵:

Խնդրո առարկա հարցի համատեքստում անհրաժեշտ է միաժամանակ նկատի ունենալ, որ հավասարապես անընդունելի են ինչպես

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

²⁴ «Փափուկ ուժի» (soft power) հայեցակարգը զարգացրել է ամերիկացի գիտնական Ջոզեֆ Նայը: Նրա կարծիքով՝ արտաքին աշխարհի վրա «փափուկ ուժի» կիրառմամբ պետության գործած ազդեցությունը կարող է լինել ոչ պակաս, եթե ոչ ավելի, քան ռազմական կամ տնտեսական եղանակով ձեռնարկվածը: «Փափուկ ուժն» ընդունակություն է՝ համոզելու ուրիշներին անել այն, ինչ ուզում եք դուք (տես J. S. Nye. The Paradox of American Power: Why the World's Only Superpower Can't Go It Alone. New York, 2002): Որպեսզի դա տեղի ունենա, անհրաժեշտ է տվյալ առաջարկությունը հակընկերոջ համար դարձնել գրավիչ, նրան ընդգրկել համատեղ գործունեության մեջ: Իշխանության այդ տիպը հիմնվում է ոչ նյութական ռեսուրսների օգտագործման վրա, ինչպիսիք են մշակույթը, գաղափարախոսությունը, կրթությունը: «Փափուկ ուժի» ռեսուրսային շտեմարանում Ջ. Նայը ներառում է արտաքին քաղաքականությունը՝ այն դեպքում, եթե այլ պետությունները դա դիտարկում են որպես լեզհոտիմ և բարոյապես արդարացված (տես J. Nye. Public Diplomacy and soft power. «The ANNALS of the American Academy of Political and Social Science», March 2008, Vol. 616):

²⁵ Տես Վաղարշյան Ա.Գ. Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության և անվտանգության պրոբլեմը, «Հայկական բանակ» հանդես, Երևան, 2016, հմ. 2 (88), էջ 48:

պետության կառավարման ձևով պայմանավորված վտանգների անտեսումը, այնպես էլ դրանց բացարձակացումը: Կառավարման ձևի բացարձակացման օրինակ կարող է լինել, մասնավորապես, Ղազախստանի փորձը: Մասնավորապես՝ «Ղազախստանի Հանրապետության ազգային անվտանգության մասին» ՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը Ղազախստանի Հանրապետության սահմանադրական կարգի, այդ թվում՝ անկախության, ունիտարության և **կառավարման նախագահական ձևի** (ընդգծումը մերն է՝ Հ.Հ.), ամբողջականության, պետական սահմանի անձեռնմխելիությունը և պետության տարածքի անփոփոխելիությունը հռչակված են որպես Ղազախստանի Հանրապետության ազգային շահեր²⁶: Ակնհայտ է, որ կառավարման ձևով պայմանավորված վտանգների գիտակցումը ոչ թե այս կամ այն կառավարման ձևը որպես բացարձակ արժեք հռչակելն է, այլ՝ կառավարման ընտրված ձևի՝ որոշակի պայմաններում վտանգ-

ների առաջացնելու պոտենցիալի գիտակցումը և արդյունավետ իրավական կարգավորման միջոցով դրա չեզոքացումը: Պետության կառավարման ձևը քարացած չէ, այլ՝ բազմաթիվ գործոնների ազդեցությամբ ենթակա է փոփոխության և, ըստ էության՝ բնապատմական գործընթաց է: Իշխանության կազմակերպման կառուցվածքի պրոբլեմը հարաբերական խնդիր է, սակայն պետության պաշտպանության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև պետական իշխանության լեգիտիմության (իրավահեղինակության) պրոբլեմները բացարձակ են: Իշխանության կազմակերպվածքը կարող է լինել ամենատարբեր ձևերի: Սակայն գլխավորը դա չէ, այլ՝ պետության առջև կանգնած կենսական կարևորությամբ խնդիրների, մասնավորապես՝ ազգային անվտանգության արդյունավետ լուծումն է, դրանով իսկ իշխանության գոյության իմաստի, նրա իրավահեղինակության ապահովումը²⁷:



²⁶ Sեն Закон Республики Казахстан «О национальной безопасности Республики Казахстан» от 6 января 2012 года №527-IV, «Казахстанская правда» от 17.01.2012 г., №19-20 (26838-26839):

²⁷ Sեն Վաղարշյան Ա.Գ. Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության և անվտանգության պրոբլեմը, «Հայկական քանակ» հանդես, Երևան, 2016, հմ. 2 (88), էջ 47:

ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆ

Հագենի համալսարանի Գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Բեռլինի Տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի Ոստիկանության և անվտանգության կառավարման բաժնի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր

ԿՈՒՍԱԿԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄՆ ՈՒ ԱՐԳԵԼՈՒՄԸ

I. Կուսակցությունների արգելումը

1. Կուսակցությունների արգելման իմաստն ու նպատակը

«Սահմանադրության 8-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչում է կուսակցություններին իբրև ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման ու արտահայտման անհրաժեշտ գործիքներ և բարձրացնում է նրանց սահմանադրական կառույցի մակարդակի: 8-րդ հոդվածի 2-րդ մասը պաշտպանում է կուսակցություններ հիմնադրելու և նրանց գործունեության ազատությունը, որը ներառում է նաև կազմակերպահրավական ձևի ընտրության ազատությունը: Թե քաղաքական կուսակցության ծրագիրն ինչ արժեք ունի, ինչպես նաև, թե ինչքանով կարող է այս կամ այն կուսակցությունը մասնակցել պետական կամքի ձևավորմանը, 8-րդ հոդվածն սկզբունքորեն թողնում է ընտրողների որոշմանը:

Միաժամանակ, ժողովրդավարության երկարատև պահպանումը, այնուամենայնիվ, պահանջում է, որ ցանկացած քաղաքական գաղափարի հիման վրա կուսակցություններ հիմնելու ազատությունը սահմանափակված լինի ազատախոհ ժողովրդավարության հիմնարար սկզբունքների ճանաչմամբ: Կուսակցությունների գործունեության կասեցման կամ արգելման՝ «Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասում և 168-րդ հոդվածի 12-րդ կետում նախատեսված վարույթը հենց նպատակ ունի դիմագրավելու այն վտանգներին, որոնք բխում են հակասահմանադրական միտումներ ունեցող կուսակցությունից: Կուսակցությունն ար-

գելելու սահմանադրական դրույթն այսպես կոչված *մարտնչող ժողովրդավարության* արտահայտություն է,¹ այսինքն՝ մի ժողովրդավարության, որն իր քաղաքական թշնամիներին հաղթում է իրավական միջոցներով:²

Արգելման հնարավորությունը վերաբերում է **կուսակցությանը**՝ իբրև մի կազմակերպված խմբի, որը պետականությանն սպառնացող կարծիքների կրող է: Հակասահմանադրական կուսակցություններին հեռացնելու համար նախատեսված վարույթն առաջարկում է իրավական պետությունում անհրաժեշտ երաշխիքներ ընդդեմ այդ հնարավորության չարաշահման և այդ պատճառով արդարացված է սահմանադրաիրավական տեսանկյունից: Կուսակցությունը հակասահմանադրական ճանաչելու՝ «Սահմանադրական դատարանի սահմանադրական մենաշնորհին ամբողջովին բացառում է ազատախոհ ժողովրդավարական հասարակական կարգի հանդեպ թշնամական վերաբերմունք ունեցող քաղաքական կուսակցության դեմ վարչական որևէ միջոց ձեռնարկելու հնարավորությունը: Մինչև սահմանադրական դատարանի որոշումը՝ ոչ ոք չի կարող իրավականորեն հղում անել կուսակցության հակասահմանադրականությանը և դրանից այդ կուսակցության համար բացասական հետևանքներ արտածել: Այդ պատճառով սահմանադրական դատարանի այդ որոշումն ունի ոչ թե դեկլարատիվ, այլ՝ կոնստիտուտիվ բնույթ: Այն միավորումների համար, որոնք ունեն քաղաքական կուսակցության բնույթ, «Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասը *lex specialis* է 45-րդ հոդվածի 4-րդ մասի

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

¹ BVerfG 5, 85, 139; 40, 287, 291; Morlok, in: Dreier/Bauer (Hrsg.), Grundgesetz, Kommentar, ³2015, Art. 21 Rn. 144.

² Kluth, in: Axer/Epping/Hillgruber (Hrsg.), Grundgesetz, 2009, Art. 21 Rn. 205; van Ooyen, in: van Ooyen/Möllers (Hrsg.), Das Bundesverfassungsgericht im politischen System, 2006, S. 333.

նկատմամբ: 46-րդ հոդվածի 4-րդ մասով կուսակցություններին տրված առանձնահատուկ դատավարական պաշտպանության ու գոյության երաշխիքը գիտության մեջ կոչվում է **կուսակցական արտոնություն**:³

2. ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության փաստակազմի նախապայմանները

ա) Քաղաքական կուսակցություն հասկացությունը

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի երկրորդ մասը գործածում է «**կուսակցություն**» հասկացությունը՝ առանց սահմանելու: Սահմանադրության մակարդակում սահմանում տալն անհրաժեշտ է թվում, որովհետև միայն քաղաքական կուսակցություններին է վերապահված ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելու խնդիրը (ՀՀ Սահմ. 8-րդ հոդվածի 3-րդ մաս): Բացի այդ՝ միայն ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի իմաստով քաղաքական կուսակցությունները կարող են օգտվել 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության մեջ ամրագրված կուսակցական արտոնությունից: Քաղաքական կուսակցություն հասկացության պահանջները չբավարարող կազմակերպությունների դեմ ձեռնարկվող միջոցառումներն ընկնում են բացառապես ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 4-րդ մասի գործողության տակ:

Քաղաքական կուսակցություն հասկացության սահմանումը չպետք է թողնել **հասարակ օրենսդրին**: Նրա այդ իրավասությունը կարող է հանգեցնել կուսակցություն հասկացության նեղացման, ինչն անօգուտ կդարձնի կուսակցությունների համար սահմանադրորեն ամրագրված երաշխիքները: Հակառակը՝ հասարակ օրենսդիրն ինքն է կաշկանդված կուսակցության՝ Սահմանադրությունից բխող հասկացությամբ:⁴

բ) Սահմանադրական կարգի բռնի տապալման քարոզը

Ըստ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության՝ հակասահմանադրական են այն կուսակցություն-

ները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով:

46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության իմաստով **սահմանադրական կարգը** իրավական պետության սկզբունքին համապատասխանող իշխանակարգ է, որը գործում է ժողովրդի ինքնորոշման և ազատության ու հավասարության սկզբունքների հիման վրա՝ ժողովրդի մեծամասնության կամքին համապատասխան՝ բացառելով ցանկացած բռնի ու կամայական իշխանություն: Այդ կարգի հիմնարար սկզբունքների թվին առնվազն պատկանում են՝

- Սահմանադրության մեջ կոնկրետացված մարդու իրավունքների, ամենից առաջ՝ կյանքի (Սահմ. 24-րդ հոդ.) և մարդու ազատ գործելու իրավունքի (Սահմ. 39-րդ հոդ.) նկատմամբ հարգանքը,
- ժողովրդաիշխանությունը (Սահմ. 2-րդ հոդ.),
- իշխանությունների բաժանումը (Սահմ. 4-րդ հոդ.),
- կառավարության հաշվետվողականությունը (Սահմ. 156-րդ հոդ.),
- վարչարարության իրավաչափությունը (Սահմ. 6-րդ հոդ.),
- դատարանների անկախությունը (Սահմ. 164-րդ հոդ. 1-ին մաս),
- բազմակուսակցականությունն ու բոլոր քաղաքական կուսակցությունների համար հնարավորությունների հավասարությունը (Սահմ. 8-րդ հոդ.) և Սահմանադրությանը համապատասխան ընդդիմություն կազմելու իրավունքը:

Ազատախոհ ժողովրդավարությունում պետական կարգի խնդիրն է ամենից առաջ բաց պահել քաղաքական հարցերի բոլոր հնարավոր լուծումների ուղիները և թույլ տալ ժողովրդի **փաստացի մեծամասնության** կամքի իրականացումը, բայց, միաժամանակ, ստիպել այդ մեծամասնությանն արդարացնել իր որոշումներն ամբողջ ժողովրդի ու նաև փոքրամասնության առջև:⁵ Այդ պատճառով ՀՀ Սահմա-

³ Hillgruber, in: Merten/Papier (Hrsg.), Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, 2013, S. 497.

⁴ Sten Ipsen, in: Sachs (Hrsg.), Grundgesetz, 62011, Art. 21 Rn. 16.

⁵ BVerfGE 5, 85, 198; 69, 315, 347.

նադրության և դրանով իսկ՝ նրա սահմանադրական կարգի չգրված, սակայն *ֆունդամենտալ նախապայմաններից է*, որ քաղաքական իշխանության համար պայքարում ոչ մի կուսակցություն չփակի տարբեր սոցիալական ու քաղաքական նպատակների լուծման ուղիները՝ իրեն և իր քաղաքական նպատակները համարելով բացարձակ, այնպես որ նրա կողքին այլևս ոչ մի լեգիտիմ քաղաքական հակառակորդ չլինի:

Սահմանադրական կարգը տապալելու **քարոզը** ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության իմաստով հակասահմանադրական քաղաքական գաղափարների ու կարծիքների դիտավորյալ և սիստեմատիկ տարածումն է գրավոր, բանավոր կամ այլ ձևով, մեր ժամանակներում նաև էլեկտրոնային եղանակով (ինտերնետ)՝ հասարակական գիտակցության վրա որոշակի ձևով ներազդելու և հասարակության անդամների վարքը կուսակցությանը ցանկալի ուղղությամբ, այն է՝ սահմանադրական կարգի բաղադրիչներից թեկուզ մեկը վնասելու ուղիով տանելու նպատակով:

46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության իմաստով պարտադիր չէ, որ կուսակցության հակասահմանադրական նպատակները **բացահայտ** քարոզվեն: Կուսակցությունը հակասահմանադրական է, եթե նա իր նպատակաուղղվածությամբ կամ **իր հետևորդների վարքով** նպատակ է հետապնդում տապալելու սահմանադրական կարգը: Հակասահմանադրական նպատակներ է հետապնդում այն կուսակցությունը, որը ցանկանում է սասանել ազատախոհ ժողովրդավարական սահմանադրական պետության բարձրագույն արժեքները:⁶ Կուսակցությունը, որը **գիտակցված, տևականորեն ու պլանավորված ձևով** մերժում ու ծաղրում է սահմանադրական կարգի հիմնարար արժեքները, նպատակ է հետապնդում տապալելու դա:⁷ Ոչ մի նշանակություն չունի, թե արդյոք նա կարող է տեսանելի ապագայում իրականացնել իր հակասահմանադրական մտադրությունը: Անգամ մարտավա-

րական նկատառումներով հակասահմանադրական նպատակի իրականացումը ժամանակավորապես հետաձգելը խոչընդոտ չէ կուսակցության՝ 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության իմաստով հակասահմանադրականությունը ճանաչելու համար: Այնուամենայնիվ, կուսակցությունը հակասահմանադրական չէ արդեն այն ժամանակ, երբ նա չի ընդունում սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքները: Անհրաժեշտ է, որ կուսակցությունն **ակտիվ մարտնչող, ագրեսիվ** վերաբերմունք ունենա գոյություն ունեցող սահմանադրական կարգի հանդեպ:

Կուսակցության նպատակները ճանաչելի են, որպես կանոն, նրա ծրագրից և խորհրդարանական հայտարարություններից, կուսակցության քաղաքական գաղափարախոսության վերաբերյալ նրա կողմից հեղինակավոր համարվող հեղինակների աշխատություններից, կուսակցության ղեկավար կազմի ճառերից, կուսակցության կողմից օգտագործվող քարոզչական նյութերից, ինչպես նաև կուսակցության կողմից հրատարակվող թերթերից ու ամսագրերից:⁸

Սահմանադրական կարգի տապալման կամ դրան ուղղված մտադրության մասին կարող է խոսք լինել հատկապես այն դեպքում, երբ հարցականի տակ են դրվում ՀՀ Սահմանադրության 203-րդ հոդվածի, այսպես կոչված, **«հավերժության երաշխիքով»** պաշտպանվող, օրինական սահմանադրական փոփոխության ոչ ենթակա դրույթները:

Նույնը վերաբերում է նաև կուսակցությունների ներքին կառուցվածքին: Թեև ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 4-րդ մասն արգելում է, որ կուսակցությունը կազմակերպվի ժողովրդավարական սկզբունքներից շեղմամբ, սակայն կարելի է ենթադրել, թե կուսակցությունը, որը հակաժողովրդավարական ներքին կառուցվածք ունի, չի ընդունում նաև ժողովրդավարությունն իբրև պետական կառուցվածքի սկզբունք (Սահմ. 1-ին և 2-րդ հոդվածներ):

Սահմանադրական կարգի **տապալումը** ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված խորհրդ-

⁶ BVerfGE 2, 1, 12.

⁷ BVerfG 5, 85, 389.

⁸ BVerfG 5, 85, 144.

դարանական կառավարման համակարգն այնպիսի կառավարման համակարգով փոխարինելն է, որն իրեն կաշկանդված չի զգում ժողովրդավարական սահմանադրական կարգի բաղադրիչներ համարվող հիմնարար սահմանադրական սկզբունքներով:

Հակառակ 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության բառացի տեքստի՝ կուսակցության հակասահմանադրականության համար պարտադիր չէ, որ նա քարոզի անպայման սահմանադրական կարգի **բռնի** տապալում: Սահմանադրական կարգի տապալման ցանկացած քարոզ բավարար է կուսակցության հակասահմանադրականությունը ճանաչելու համար:

գ) Սահմանադրական կարգը տապալելու նպատակով բռնություն կիրառելը

Ընդհանուր առմամբ՝ իբրև **բռնություն** բնորոշվում են այն գործողությունները, գործընթացները և սոցիալական կապերը, որոնցում կամ որոնց միջոցով ազդեցություն են գործում մարդկանց, կենդանիների կամ առարկաների վրա:

Բռնության **իրավաբանական սահմանման** համաձայն՝ բռնությունը ֆիզիկապես ազդող հարկադրանք է՝ ուժ գործադրելու կամ այլ ֆիզիկական ներգործության միջոցով, որն իր ուժգնությամբ ի վիճակի է խաթարելու մեկ ուրիշի ազատ կամ քի ձևավորումը կամ ազատ կամահայտնությունը:⁹ Պարզ ասած՝ բռնությունը հարկադրանքի միջոց է՝ մեկ ուրիշի կամ քի ազատության վրա ներգործելու նպատակով:

Սովորաբար տարբերում են բռնության տարբեր ձևեր՝ *ֆիզիկական* կամ *հոգեբանական*, *սրատիկ* կամ *դինամիկ*: ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության փաստակազմի համար ոչ մի նշանակություն չունի գործադրվող բռնության տեսակը: Նշված նորմի փաստակազմի այս երկրորդ հատկանիշի առկայության համար բավարար է, որ կուսակցությունը կիրառի ցանկացած ձևի բռնություն՝ գործող սահմանադրական կարգը տապալելու համար:

դ) Հակասահմանադրականությունը

Եթե քաղաքական կուսակցությունը բավարարում է ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության փաստակազմը, ապա նա **հակասահմանադրական** է: Հակասահմանադրականության փաստակազմը, այսպիսով, վրա է հասնում ինքնին (*ipso iure*), փաստակազմի հատկանիշներում նկարագրված արարքները դատապարտվում են Սահմանադրության ուժով: Այլ կերպ ասած՝ հակասահմանադրականությունը 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության նորմի **իրավական հետևանքը** չէ, որը պիտի վրա հասնի փաստակազմի հատկանիշների առկայության դեպքում: Նյութական առումով տվյալ նորմի իրավական հետևանքը **կուսակցության արգելումն** է, որը պիտի կիրառվի Սահմանադրական դատարանի կողմից, եթե առկա են 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության փաստակազմի հատկանիշները:

II. Կուսակցությունների գործունեության կասեցումը

ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասությունը նախատեսում է կուսակցության գործունեությունը **կասեցնելու** հնարավորություն կրկին Սահմանադրական դատարանի միջոցով՝ կասեցման հիմքերի սահմանումը թողնելով հասարակ օրենսդրի կարգավորմանը: 46-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասության այս պահանջը, սակայն, անհասկանալի է 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության լույսի ներքո: Հայերենում «կասեցնել» նշանակում է «որևէ բանի ընթացքը՝ կատարումը ժամանակավորապես դադարեցնել»,¹⁰ «դադարեցնել, կանգնեցնել, սառեցնել, որևէ բանի կատարումը ժամանակավորապես հետաձգել»:¹¹ Կուսակցության գործունեության կասեցումը ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասության իմաստով նշանակում է, հետևաբար, նրա **գործունեության ժամանակավոր արգելում**: Բայց 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության ուժով կուսակցության գործունեությունը կարող է արգելվել (լինի դա ժա-

⁹ Fischer/Schwarz/Dreher/Tröndle, in: Strafgesetzbuch, ⁶⁴2016, §240 Rn. 8.

¹⁰ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 697:

¹¹ Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 500:

մանակավորապես, թե մշտապես) միայն նրա գործունեության հակասահմանադրականության դեպքում: Հետևաբար՝ մինչև Սահմանադրական դատարանի կողմից կուսակցության գործունեությունը հակասահմանադրական ճանաչելու և արգելելու մասին որոշում ընդունելը կուսակցությունն ու նրա գործիչներն իրավունք ունեն **անարգել** գործելու, անգամ եթե կուսակցության գործունեությունն իրոք հակասահմանադրական է: Ուստի, բացի կուսակցության գործունեության հակասահմանադրականությունից՝ չի կարող գոյություն ունենալ նրա գործունեությունը (ժամանակավորապես) արգելելու որևէ այլ հիմք:

Կուսակցության՝ որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստող կազմակերպության համար (Սահմ. 8-րդ հոդ. 3-րդ մաս) բացասական հետևանքներ կարող է առաջացնել միայն նրա հակասահմանադրականությունը և միայն այն ժամանակ, երբ Սահմանադրական դատարանը համապատասխան վարույթում ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությանը համապատասխան որոշում է ընդունել կուսակցությունն արգելելու մասին: Սահմանադրական դատարանի՝ 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված մենաշնորհից բխում է, որ մինչև Սահմանադրական դատարանի կողմից կուսակցությունն արգելելու մասին կոնստիտուտիվ որոշում ընդունելը լիովին բացառվում է որևէ կուսակցության գոյության ու գործունեության դեմ վարչական կամ դատական որևէ այլ միջոց ձեռնարկելու հնարավորությունը, ինչքան էլ որ կուսակցությունը թշնամական վերաբերմունք ունենա գործող սահմանադրական կարգի նկատմամբ:

Անգամ ծայրահեղական, բայց (դեռ) չարգելված կուսակցության գործունեության ազատության, հատկապես՝ հավաքների ազատության (Սահմ. 44-րդ հոդ.) որևէ սահմանափակում անթույլատրելի է: Չարգելված, աջ արմատական կուսակցությունների հանրահավաքներն ու ցույցերը պաշտպանվում են նաև կարծիքի արտահայտման ազատությամբ (Սահմ. 42-րդ հոդ.), քանի դեռ այդ ընթացքում արված

հայտարարությունները չեն խախտում օրենքը: Քաղաքացիներն սկզբունքորեն ազատ են հարցականի տակ դնել Սահմանադրության հիմնարար արժեքները, քանի դեռ նրանք դրանով չեն վտանգում ուրիշների իրավական բարիքները: Միայն սահմանադրական կարգն առանձնահատուկ կերպով վտանգելու նախապայմանի պարագայում է, որ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը նախատեսում է նման վտանգի կանխման հատուկ միջոց՝ կուսակցության արգելումը: Մինչև 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կանխարգելիչ միջոցի կիրառումը՝ կուսակցությունը պետք է իր քաղաքական գործունեության մեջ ազատ լինի ցանկացած իրավական խոչընդոտից:

III. Կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վարույթը

1. Իրավասու դիմումատուները

Կուսակցությունների գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վարույթում¹² **իրավասու դիմումատուներ** են ՀՀ Ազգային ժողովը (Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ) և ՀՀ կառավարությունը (Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 5-րդ կետ): Նրանք կարող են դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան, որպեսզի դատարանը որոշի, թե արդյոք կոնկրետ կուսակցությունը հակասահմանադրական է ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության իմաստով:

Ո՛չ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասը, ո՛չ 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ու 5-րդ կետերը թույլ չեն տալիս միանշանակ հասկանալ, թե դիմումատուները, ովքեր համոզված են որևէ կուսակցության հակասահմանադրականության հարցում, պարտավոր են արդյոք դիմել Սահմանադրական դատարան, թե՛ կարող են, քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, ձեռնպահ մնալ Սահմանադրական դատարանում կուսակցությունների գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վարույթ հարուցելուց: Հայկական իրավաբանական գրականության մեջ և Սահմանադրական դատարանի պրակտիկայում գոյություն չունի այս հարցի վերաբերյալ որևէ դիրքորոշում: Կարծում եմ,

¹² Կուսակցությունների գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վարույթի մանրամասները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկա են (Սահմ. 169-րդ հոդ. 5-րդ մաս):

որ Սահմանադրական դատարան դիմելու հարցը պետք է գտնվի դիմումատուների **արդար հայեցողության** շրջանակում: Այդ հայեցողությունը, սակայն, չի կարող անսահմանափակ լինել: Եթե կուսակցության հակասահմանադրականությունը կասկածելի չէ, և այդ կուսակցությանը քաղաքական քննարկումների միջոցով քաղաքական լուրջ դերակատարությունից հեռացնելու և դրանով իսկ նրանից բխող քաղաքական վտանգները կանխելու ջանքերը բավականաչափ հաջող չեն եղել, ապա այդ պայմաններում իրավասու դիմումատուների **հայեցողությունը պիտի նվազի մինչև զրո**:¹³ Այս պարագայում կուսակցությունն արգելելու խնդրանքով Սահմանադրական դատարան դիմելը դառնում է պարտականություն: Եթե իրավասու դիմումատու մարմիններն այս վիճակն այդպես թողնում են, ապա հենց նրանց պետք է մեղսագրել **տևող հակասահմանադրականությունը**, այլ կերպ ասած՝ Ազգային ժողովն ու կառավարությունն այսպիսի դեպքերում իրենց **անգործությամբ** խախտում են Սահմանադրությունը:

Գործնական կարևորություն ունի Սահմանադրական դատարան դիմելու **պարտականությունը**, այնուամենայնիվ, միայն այն դեպքում, երբ այդ պարտականության խախտումը կարող է վիճարկվել Սահմանադրական դատարանում, այսինքն՝ այդ պարտականության կատարումը կարելի է հարկադրել դատական կարգով: Օրինակ՝ հնարավոր է հետևյալ դեպքը: Ազգային ժողովի փոքրամասնությունը դիմում է Սահմանադրական դատարան՝ ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ 168-րդ հոդվածի 4-րդ կետի համակցությամբ՝ ընդդեմ Ազգային ժողովի՝ իբրև ամբողջական մարմնի, և պնդում է, որ Ազգային ժողովն իր անգործությամբ (այն է՝ կուսակցության գործունեությունն արգելելու հարցով Սահմանադրական դատարան չդիմելով) խախտել է փոքրամասնության իրավունքներն այն իմաստով, որ համապատասխան կուսակցության գործունեությունն արգելելու դեպքում նրա անդամները կկորցնեն իրենց մանդատները, ինչը կարող է Ազգային ժողովում փոխել ուժերի հարաբերակցությունը հօգուտ դիմումատուի:

Կուսակցությունների գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վարույթում **պատասխանող կողմն** այն կուսակցությունն է, որին վերագրվում է իր գործունեության հակասահմանադրականությունը:

2. Կուսակցությունն արգելելու մասին Սահմանադրական դատարանի որոշման բովանդակությունն ու գործողությունը

ա) Սահմանադրական դատարանի որոշման իրավական բնույթը

Կուսակցությունն արգելելու մասին Սահմանադրական դատարանի որոշումը **ճանաչման որոշում** է, որը, սակայն, քաղաքական կուսակցությունների առանձնահատուկ դատավարական պաշտպանության երաշխիքի պատճառով ունի ոչ թե զուտ դեկլարատիվ, այլ՝ **կոնստիտուտիվ** բնույթ: Մինչև Սահմանադրական դատարանի կողմից որոշում ընդունելը կուսակցությունն ու նրա գործիչները, չնայած կուսակցության գործունեության հակասահմանադրականությանը, իրավունք ունեն անարգել գործելու:

Կուսակցության հակասահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումը չունի հետադարձ ուժ: Կուսակցության գործիչների ու հետևորդների գործունեությունը կուսակցությունը հակասահմանադրական ճանաչելու մասին որոշումից առաջ ընկած ժամանակահատվածում պաշտպանված է կուսակցական արտոնության դրույթով (Սահմ. 46-րդ հոդ. 4-րդ մաս) նաև այն դեպքում և չի կարող դառնալ քրեաիրավական սանկցիայի առարկա, երբ իրենց կուսակցությունն ավելի ուշ հակասահմանադրական է ճանաչվում Սահմանադրական դատարանի որոշմամբ:

բ) Կուսակցության կարգավիճակի կորուստը

Սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական ճանաչված կուսակցությունը **կորցնում է** ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով ամրագրված իր առանձնահատուկ սահմանադրաիրավական կարգավիճակը և դրանով իսկ դուրս է մնում ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի երաշխիքի շրջանակից: Սահմանադրական դատարանի որոշման հրապարակումը դադարեցնում

¹³ Streinz, in: von Mangoldt/Klein/Starck (Hrsg.), Kommentar zum Grundgesetz, 62010, Art. 21 Rn. 242; Klein, in: Maunz/Dürig (Hrsg.), Grundgesetz, Kommentar, 2015, Art. 21 Rn. 547.

է կուսակցության իրավական գոյությունը: Այս իրավական հետևանքը վրա է հասնում *ipso iure* և չունի ի կատար ածելու կարիք: Սահմանադրական դատարանի որոշման հետևանքով պետք է կուսակցությունը լուծարվի:

գ) Հետնորդ կազմակերպությունների արգելքը

Պետք է նաև արգելվի մեկ այլ կազմակերպության անվամբ նույն գործունեության իրականացումը, քանի որ հակառակ դեպքում կիմաստազրկվի կուսակցությունն արգելելու միջոցով հետապնդվող նպատակը, այն է՝ արգելված կուսակցությանը քաղաքական կյանքից հեռացնելը: Հետնորդ կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որը շարունակում է Սահմանադրական դատարանի կողմից արգելված կուսակցության փոխարեն հետապնդել նրա հակասահմանադրական նպատակները:

IV. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջները կուսակցությունների արգելման ազգային վարույթի ձևավորման առնչությամբ

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նշանակությունը սահմանադրական իրավունքի մեկնաբանման համար

Թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) որպես այդպիսին ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից կիրառելի ստուգման մասշտաբ չէ, սակայն Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության նորմերը մեկնաբանելիս և կիրառելիս պետք է հաշվի առնի ՄԻԵԿ-ի բովանդակությունն ու զարգացման մակարդակը Հայաստանի Հանրապետության սահմանադրական և միջազգային պարտավորությունների միջև բախումից հնարավորինս խուսափելու համար: Հայաստանի կողմից ՄԻԵԿ-ին միանալու պատճառով կուսակցությունն արգելելու մասին Սահմանադրական դատարանի որոշումը նույնպես ենթակա է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վե-

րահակողությանը: Այդ վերահսկողությունը հարուցվում է ՄԻԵԴ ներկայացված անհատական գանգատի միջոցով՝ ՄԻԵԿ 34-րդ հոդվածի համաձայն: Իրավական պաշտպանության այս միջոցից կարող են օգտվել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից արգելված կուսակցությունը¹⁴ և դրա անդամները, եթե նրանք կարող են անդել, որ կուսակցության արգելումը խախտում է ՄԻԵԿ-ով կամ դրան կից Արձանագրություններով երաշխավորված իրենց իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան կուսակցությունների արգելման վերաբերյալ

ա) Ստուգման մասշտաբը

Քանի որ ՄԻԵԿ-ը, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, կուսակցությունների ազատության որևէ բառացի երաշխիք չի պարունակում, ուստի կուսակցությունների արգելման հարցով ՄԻԵԴ-ի ստուգման մասշտաբը ՄԻԵԿ 11-րդ հոդվածի անհատական իրավունքն է:¹⁵ Կուսակցությունն արգելելու ամրագրումը ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունում և «Սահմանադրական դատարանի մասին» գործող ՀՀ օրենքի 85-րդ հոդվածում բավարարում է ՄԻԵԿ 11-րդ հոդվածի այն պահանջը, որ արգելքը պետք է նախատեսված լինի օրենքով: ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը սահմանադրական այլ դրույթների հետ համակցության մեջ, որոնք ամրագրում են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը, նաև բավականաչափ որոշակի է:

ՄԻԵԿ 11-րդ հոդվածում ամրագրված այլոց հետ միավորվելու ազատության իրավունքը ներառում է նաև քաղաքական կուսակցություններին:¹⁶ Այս դրույթը պաշտպանում է քաղաքական կուսակցությունների հիմնադրումը, գոյությունն ու գործունեությունը:¹⁷ Քանի որ կարծիք

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

¹⁴ ՄԻԵԿ 34-րդ հոդվածի շրջանակում արգելված կուսակցության շարունակվող դատավարական գործունակության մասին տե՛ս Grabenwarter/Pabel, Europäische Menschenrechtskonvention, ⁵2012, §13 Rn. 14.
¹⁵ Sեն Emek, Parteiverbote und Europäische Menschenrechtskonvention, 2007, S. 137; Kontopodi, Die Rechtsprechung des Europäischen Gerichtshofs für Menschenrechte zum Verbot politischer Parteien, 2007, S. 18; Theuerkauf, Parteiverbote und die Europäische Menschenrechtskonvention, 2006, S. 253.
¹⁶ Առաջին անգամ այդ մասին ՄԻԵԴ 30.01.1998 թ. վճռում, Թուրքիայի Միավորված Կոմունիստական Կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի, RJD 1998-I, էջ 25:
¹⁷ ՄԻԵԴ մշտական պրակտիկան՝ սկսած ՄԻԵԴ 30.01.1998 թ. վճռից:

արտահայտելու ազատության (կոլեկտիվ) իրականացումը միավորումների ազատության նպատակներից մեկն է, ուստի ՄԻԵԿ 11-րդ հոդվածը պետք է մեկնաբանել ՄԻԵԿ 10-րդ հոդվածի լույսի ներքո:¹⁸ ՄԻԵԿ 10-րդ հոդվածի գործողությունը, ըստ ՄԻԵԿ-ի, տարածվում է հատկապես քաղաքական կուսակցությունների վրա, քանի որ նրանք վճռորոշ դեր են խաղում բազմակարծության երաշխավորման ու դրանով իսկ ժողովրդավարության գործունակության համար:¹⁹ Հասարակության քաղաքական կարծիքի ձևավորումը, որը պաշտպանվում է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով, ներգրավվում է, այսպիսով, ՄԻԵԿ 11-րդ հոդվածից բխող պաշտպանությունն ուժեղացնելու համար: ՄԻԵԿ 11-րդ հոդվածի պաշտպանության ոլորտը ներառում է նաև այնպիսի կարծիքները, որոնք պետությանը կամ բնակչության մի մասին նեղացնում, ապշեցնում կամ անհանգստացնում են (“offend, shock or disturb”):²⁰ ՄԻԵԿ-ը կարծիքի ազատ արտահայտման իրավունքն անվանում է «ժողովրդավարական հասարակության հիմք»:²¹

բ) Կուսակցության արգելման նախապայմանները

Նկատի ունենալով ՄԻԵԿ 11-րդ հոդվածի՝ 10-րդ հոդվածի միջոցով ուժեղացված պաշտպանությունը և ժողովրդավարության համար կուսակցությունների ազատության էական նշանակությունը՝ ՄԻԵԿ 11-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նպատակները, որոնք թուլատրում են միջամտությունը միավորման ազատության նկատմամբ, պետք է կիրառել սահմանափակ ձևով:²² Այդ պատճառով ՄԻԵԿ 11-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակում միայն համոզիչ ու ծանրակշիռ հիմքերը (“convincing and compelling reasons”) և հրատապ կարիքը (“pressing social need”) կարող են արդարաց-

նել կուսակցության արգելումը:²³ Պետությունն ունի գնահատման շատ փոքր ազատություն (“margin of appreciation”) բացառությունների հաստատման հարցում:²⁴ ՄԻԵԿ-ն ստուգում է ազգային որոշումները ոչ միայն դրանց հիմնավորումների համոզականության, այլ նաև այն տեսանկյունից, թե արդյոք միջամտությունը չափավոր (“proportionate”) է:²⁵

ՄԻԵԿ-ի պրակտիկան այս ընթացքում արդեն ստանդարտացրել է կուսակցությունն արգելելիս ձեռնարկվելիք գնահատումը: Մի կողմից՝ պետք է հաշվի առնել կուսակցության կողմից հետապնդվող **քաղաքական նպատակը**: Մյուս կողմից՝ վճռորոշ են այն **միջոցները**, որոնցով կուսակցությունը հետապնդում է իր նպատակները: Բռնությունը կամ տարրական հիմնարար սկզբունքներն արհամարհելու այլ ձևերը հակասում են ժողովրդավարությանը:²⁶

Ըստ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության՝ արգելման են ենթակա այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով: Այս նպատակն իր համապատասխանությունն է գտնում, մասնավորապես, հասարակության անվտանգության պաշտպանության իրավական բարիքում, որը հանդես է գալիս իբրև հավաքների ազատության սահման (ՄԻԵԿ 11-րդ հոդ. 2-րդ մաս), մի նպատակ, որը ՄԻԵԿ-ը ճանաչում է իբրև կուսակցությունն արգելելու լեգիտիմ նպատակ:²⁷ ՄԻԵԿ-ը պաշտպանում է այն տեսակետը, որ կուսակցությունը չպետք է արգելվի արդեն այն ժամանակ, երբ նա հանդես է գալիս այնպիսի դիրքերից, որոնք ուղղված են առանձին սահմանադրական դրույթների դեմ,

¹⁸ Այս մասին հիմնավորապես ՄԻԵԿ 30.01.1998 թ. վերոհիշյալ վճռում, էջ 42: Վերջին անգամ 12.11.2003 թ. վճռում, Թուրքիայի Սոցիալիստական Կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 26.482/95, էջ 36:

¹⁹ ՄԻԵԿ 30.01.1998 թ. նշված վճռում, էջ 47:

²⁰ ՄԻԵԿ 7.12.1976 թ. վճռում, Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 5493/72:

²¹ Grabenwarter/Pabel, Europäische Menschenrechtskonvention, ⁵2012, §23 Rn. 26.

²² Meyer-Ladewig, in: EMRK, ³2011, Art. 11 Rn. 31.

²³ ՄԻԵԿ 30.01.1998 թ. նշված վճռում, էջ 46:

²⁴ ՄԻԵԿ 30.01.1998 թ. նշված վճռում, էջ 46:

²⁵ ՄԻԵԿ 30.01.1998 թ. նշված վճռում, էջ 47:

²⁶ ՄԻԵԿ (Մեծ Պալատ) 13.02.2003 թ. վճռում, Ռեֆահ Կուսակցությունն ու այլք ընդդեմ Թուրքիայի, գանգատ թիվ 41.340/98, էջ 97:

²⁷ ՄԻԵԿ 30.01.1998 թ. վճռում, Թուրքիայի Միավորված Կոմունիստական Կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի, RJD 1998-I, էջ 40:

բայց սահմանադրական կարգը չեն վնասում: Կուսակցության նպատակադրումը գնահատելու համար ՄԻԵԴ-ը հիմք է ընդունում կուսակցության առաջնորդների քաղաքական գործողությունները, օրինակ՝ նրանց ծրագրային ելույթները, ինչպես նաև նրա անդամների քարոզչական և արտախորհրդարանական գործունեությունը:²⁸ Այնուամենայնիվ, անգամ եթե արտաքինից ընկալելի գործունեությունը համահունչ է ժողովրդավարության հիմնարար արժեքներին, կուսակցությունը չի կարող վայելել Կոնվենցիայի պաշտպանությունը, եթե կուսակցության ծրագիրը **թաքցնում է** իր իրական նպատակներն ու մտադրությունները և միայն առերևույթ է ընդունում ազատախոհ ժողովրդավարության արժեքները:²⁹

ՄԻԵԴ-ը կուսակցությունն արգելելու թույլատրելիությունն զգալիորեն կախման մեջ չի դնում նաև ժողովրդավարական կարգին սպառնացող կոնկրետ վրանգից:³⁰ Ըստ ՄԻԵԴ-ի՝ հասարակական հանդուրժողության պահանջի իրավունքը կորցնում է այն կուսակցությունը, որը մերժում է ուրիշների ազատությունը:³¹ Կուսակցությունն արգելելու հարցում չպետք է սպասել, մինչև կուսակցությունն ուժ հավաքի ու ի վիճակի լինի իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք հակադրվում են ժողովրդավարությանը:³²

Բռնություն կիրառելը կամ բռնություն գործադրելու կոչը՝ իբրև հակաժողովրդավարա-

կան միջոց, վկայում է, ըստ ՄԻԵԴ-ի պրակտիկայի, հոգուտ կուսակցությունն արգելելու թույլատրելիության:³³

V. Կուսակցությունների արգելումն այլ երկրներում

Եվրոպական Միության երկրներից Գերմանիայի և Դանիայի Սահմանադրություններն են պարունակում իրավակարգավորումներ, ըստ որոնց՝ կուսակցությունների արգելման հարցով դիմում կարող է ներկայացվել Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարան և Դանիայի Թագավորության Բարձրագույն դատարան:³⁴ Եվրոպական Միության արևելյան ընդարձակումից հետո Լեհաստանն³⁵ ու Չեխիայի Հանրապետությունը³⁶ հաջորդ երկու անգամ պետություններն են, որոնք կուսակցությունների արգելումն ամրագրել են սահմանադրական մակարդակով: Էստոնիայում կուսակցությունն արգելելու լիազորությունը նույնպես պատկանում է Սահմանադրական դատարանին,³⁷ թեև կուսակցությունները նյութական առումով համարվում են միավորումների ենթատեսակ, որոնց համար լրացուցիչ գործում է նաև միավորումների իրավունքը:³⁸ Եվրոպական Միության մյուս երկրներում կուսակցությունների արգելումը կարգավորված է կան միավորումների մասին օրենսդրությամբ,³⁹ կան կուսակցությունների մասին օրենսդրությամբ:⁴⁰ Միայն Իտալիան

²⁸ Նույն տեղում, էջ 58:

²⁹ ՄԻԵԴ 9.04.2002 թ. վճռում, Յազար Կարտաշ Ակոյն ու Աշխատանքի ժողովրդական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի, RJD 2002-II, էջ 395; ՄԻԵԴ (Մեծ Պալատ) 13.02.2003 թ. վճռում, Ռեֆահ Կուսակցությունն ու այլ ընդդեմ Թուրքիայի, RJD 2003-II, էջ 267:

³⁰ Hillgruber, in: Merten/Papier (Hrsg.), Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, 2013, S. 515.

³¹ ՄԻԵԴ (Մեծ Պալատ) 13.02.2003 թ. վճռում, Ռեֆահ Կուսակցությունն ու այլ ընդդեմ Թուրքիայի, գանգատ թիվ 41.340/98, էջ 75:

³² Նույն տեղում, էջ 102:

³³ Meyer-Ladewig, in: EMRK, 32011, Art. 11 Rn. 31.

³⁴ Գերմանիայի Հիմնական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս և Դանիայի Թագավորության Սահմանադրության 78-րդ պարագրաֆի 4-րդ մաս:

³⁵ Լեհաստանի Սահմանադրության 188-րդ հոդվածի 4-րդ կետ:

³⁶ Չեխիայի Հանրապետության Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին մաս:

³⁷ Սահմանադրական վերահսկողության մասին օրենքի §§32-36:

³⁸ «Կուսակցությունների մասին օրենքի» §1: Էստոնիայում իրավիճակի մասին մանրամասն տե՛ս՝ Schmidt, Neuregelung der Verfassungsgerichtsbarkeit in Estland, in: Osteuropa Recht 49 (2003), S. 43.

³⁹ Օրինակ՝ Ֆրանսիայում («Մարտական խմբերի և մասնավոր զինված ջոկատների մասին» 1936 թ. օրենքի 1-ին հոդված), Իռլանդիայում (1939 թ. Offences against the State Act, 18-րդ հոդված), Նիդերլանդներում (Burgerlijk Wetboek, 15-րդ հոդված) և Միացյալ Թագավորությունում (1974 թ. Prevention of terrorism Act):

⁴⁰ Օրինակ՝ Պորտուգալիայում («Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքի 21-րդ հոդված, «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 103-րդ հոդվածի 3-րդ մաս, 104-րդ հոդվածի 2-րդ մաս), Իսպանիայում («Կուսակցությունների մասին» 1985 թ. օրենքի 5-րդ հոդված), ինչպես նաև Ավստրիայում («Արգելի մասին» 1947 թ. օրենքի §1): Իսպանիայում իրավիճակի մասին տե՛ս իսպանական Սահմանադրական դատարանի որոշումը Henri Batasuna կուսակցությունն արգելելու մասին:

ու Մեծ Բրիտանիան չունեն կուսակցությունների արգելման վարույթ:⁴¹ Հին ժողովրդավարությունները չեն նախատեսում ո՛չ կուսակցությունների արգելման սեփական վարույթ, ո՛չ սահմանադրորեն հատուկ երաշխավորված ազատություններ կուսակցությունների համար և, որպես կանոն, ո՛չ էլ կուսակցությունների հատուկ իրավունք, այլ ընդամենը ճանաչում են միավորումների ընդհանուր արգելք:⁴² Դրան հակառակ՝ այն ժողովրդավարությունները, որոնք դիկտատուրա են հաղթահարել, ունեն կուսակցությունների ազատությունը սահմանափակող սահմանադրական հատուկ վարույթ կուսակցությունների արգելման համար:

Թուրքիայի Սահմանադրության 68-րդ և 69-րդ հոդվածները նախատեսում են կուսակցությունն արգելելու հնարավորություն Սահմանադրական դատարանի որոշմամբ՝ գլխավոր դատախազության դիմումի հիման վրա: Կուսակցությունն արգելելու մասին որոշում ընդունվելու դեպքում բացառվում է հետնորդ որևէ կազմակերպության հիմնադրումը, և կուսակցության այն անդամներին, որոնց գործունեությունը պատճառ է դարձել կուսակցությունն արգելելու համար, հինգ տարվա ընթացքում չի թույլատրվում դառնալ կուսակցության հիմնադիր կամ անդամ:⁴³

**ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ
ԱՐԳԵԼԵԼՈՒՑ ՀԵՏՈ**

I. Մանդատները կորցնելը

Կուսակցության արգելումն **անժամկետ է** և բացառում է նույն կուսակցությանը կրկին

թույլատրելը:⁴⁴ Այդ պատճառով Արևմտյան Եվրոպայի այն երկրներում, որտեղ սահմանադրորեն նախատեսված է հակասահմանադրական կուսակցություններն արգելելու հնարավորություն, կուսակցությունը հակասահմանադրական ճանաչելը հանգեցնում է այդ կուսակցության բոլոր պատգամավորների **մանդատների կորստի** ընտրական օրենսդրության համապատասխան կարգավորումների հիման վրա,⁴⁵ և այլևս կարիք չկա այդ մասին հատուկ նշելու Սահմանադրական դատարանի որոշման մեջ: Նման մոտեցման հիմնավորումն այն է, որ հակառակ պարագայում հակասահմանադրական կուսակցությանը քաղաքական կյանքից արդյունավետորեն հեռացնելու նպատակը ձեռք չի բերվի:⁴⁶

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը գրեթե բառացիորեն վերարտադրում է Գերմանիայի Հիմնական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստը, հետաքրքրական է Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի դիրքորոշումը մանդատների կորստի հարցի վերաբերյալ: Դաշնային Սահմանադրական դատարանը Սոցիալիստական Կայզերական Կուսակցության գործով իր վճռում այն դիրքորոշումն է հայտնել, որ «մանդատների կորուստն անմիջականորեն բխում է Հիմնական օրենքի 21-րդ հոդվածից»:⁴⁷

II. Ազատ մանդատի սկզբունքը

ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով

⁴¹ Իտալիայի Սահմանադրության միայն XII հոդվածի անցումային դրույթն արգելում է ֆաշիստական կուսակցությունների նոր կազմավորումը: Sten Kontopodi, Die Rechtsprechung des Europäischen Gerichtshofs für Menschenrechte zum Verbot politischer Parteien, 2007, S. 126.

⁴² Hillgruber, in: Merten/Papier (Hrsg.), Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, 2013, S. 516.

⁴³ Hillgruber, in: Merten/Papier (Hrsg.), Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, 2013, S. 517.

⁴⁴ Kunig, in: Isensee/Kirchhof (Hrsg.), Handbuch des Staatsrechts der Bundesrepublik Deutschland, 32005, III, Rn. 327.

⁴⁵ Օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Դաշնային ընտրությունների մասին» օրենքի 46-րդ պարագրաֆի 1-ին մասի 1-ին նախադասության 5-րդ կետը և 4-րդ մասը, «Եվրոպական ընտրությունների մասին» դաշնային օրենքի 22-րդ պարագրաֆի 2-րդ մասի 5-րդ կետը: Նույն իրավական հետևանքը սահմանվում է նաև դաշնային երկրամասերի ընտրական օրենքներով. Բադեն-Վյուրթեմբերգ՝ §49-ի 1-ին նախ.; Բավարիա՝ 59-րդ հոդ. 1-ին մաս; Բրանդենբուրգ՝ §41-ի 1-ին մասի 7-րդ կետ և §45-ի 1-ին մաս; Բրեմեն՝ §35-ի 1-ին մաս; Համբուրգ՝ §12-ի 1-ին մաս; Հեսսեն՝ §41-ի 1-ին մաս; Ներքին Սաքսոնիա՝ §8-ի 1-ին մասի 4-րդ կետ; Թյուրինգիա՝ §46-ի 1-ին մասի 1-ին նախադասության 4-րդ կետը և 4-րդ մասը և այլն:

⁴⁶ BVerfG 2, 1, 73; 5, 85, 392.

⁴⁷ BVerfG 2, 1, 75.

և համոզմունքներով: Այս դրույթով հայ սահմանադիրը նույնպես ամրագրում է ազատ (ներկայացուցչական) մանդատի սկզբունքը:

Գիտության մեջ վիճելի է այն հարցը, թե արդյոք ազատ մանդատի սկզբունքը բացառում է մանդատների կորուստը կուսակցությունն արգելելու հետևանքով: Որոշ գիտնականներ մտահոգություններ ունեն մանդատների ինքնաբերական կորստի հարցում՝ պատճառաբանելով, թե չի կարելի ժողովրդի կողմից պատգամավորին տրված մանդատն առանց այլևայլության կապել նրա կուսակցության ճակատագրի հետ:⁴⁸ Բացի այդ՝ պատգամավորի կարգավիճակն անկախ է իր կուսակցական պատկանելությունից: Թեև համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները կարող են իրենց մանդատն ստանալ միայն կուսակցության կողմից համապատասխան ցուցակներ ներկայացնելու հիման վրա, սակայն նրանց լեգիտիմությունն անկախ է: Կուսակցությունից կամ խմբակցությունից դուրս գալը կամ հեռացնելը, ինչպես նաև մեկ այլ կուսակցություն կամ խմբակցություն տեղափոխվելն ամենևին չեն շոշափում պատգամավորի մանդատը: Հետևաբար՝ պատգամավորի լեգիտիմության անկախության պատճառով չի կարող վրա հասնել մանդատի կորուստ նաև Սահմանադրական դատարանի կողմից կուսակցությունն արգելելու դեպքում:⁴⁹

Հակառակ տեսակետի կողմնակիցները պնդում են, որ ազատ մանդատի սկզբունքը չի բացառում մանդատների կորուստը: Թեև ազատ մանդատի սկզբունքը երաշխավորում է պատգամավորի **հարաբերական անկախությունը** կուսակցական ապարատից, որի պատճառով ո՛չ կուսակցությունից դուրս գալը, ո՛չ կուսակցությունից հեռացնելը չեն հանգեցնում ման-

դատի կորստի, սակայն այդ անկախությունը չի նշանակում, թե ազատ մանդատի մասին սահմանադրական նորմը կուսակցական կապանքներից ազատ պատգամավորի ֆիկցիա է ամրագրում, ինչն անհրաժեշտաբար պիտի հակադրվի քաղաքական համակարգի իրականությանը: Այն հարցի որոշումը, թե կուսակցությունն արգելելու դեպքում մանդատը պետք է ավելի շուտ վերագրվի կուսակցությանը, թե՛ պատգամավորին՝ ներկայացուցչության սկզբունքի իմաստով, պատկանում է **հասարակ օրենսդրին**:⁵⁰ Բացի այդ՝ ազատ մանդատի սկզբունքն իր անմիջական սահմանադրական սահմանափակումն է գտնում Սահմանադրության կողմից ստեղծված ազատախոսի ժողովրդավարության գործունակության պայմանների երաշխավորման մեջ: Եթե ժողովրդի քաղաքական կամքի ձևավորումը պիտի զերծ պահվի հակասահմանադրական կուսակցությունների ազդեցությունից, ապա դա առավել ևս պետք է վերաբերի խորհրդարանում պետական կամքի ձևավորմանը:⁵¹

III. Մանդատները կորցնելու համապատասխանությունը ՄԻԵԿ-ին

ՄԻԵԿ-ը կուսակցությունն արգելելու հետևանքով մի թուրք պատգամավորի մանդատի ինքնաբերական կորստի մեջ անհամաչափ միջամտություն է տեսել Կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված ազատ ընտրությունների իրավունքի նկատմամբ: Մանդատի կորուստը՝ իբրև կուսակցությունն արգելելու ինքնաբերական իրավական հետևանք, պետք է մեղմվի **կոնկրետ դեպքի քննության** (կոնկրետ պատգամավորի անձնական քաղաքական ակտիվության ստուգման) հնարավորությամբ:⁵²

⁴⁸ Streinz, in: von Mangoldt/Klein/Starck (Hrsg.), Kommentar zum Grundgesetz, ⁶2010, Art. 21 Rn. 249.

⁴⁹ Hesse, Grundzüge des Verfassungsrechts der Bundesrepublik Deutschland, ²⁰1999, S. 256-257.

⁵⁰ Ipsen, in: Sachs (Hrsg.), Grundgesetz, ⁶2011, Art. 21 Rn. 199.

⁵¹ Hillgruber, in: Merten/Papier (Hrsg.), Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, 2013, S. 504-505.

⁵² ՄԻԵԿ, 11.06.2002 թ. վճռում, Սելիմ Սադակն ու այլք ընդդեմ Թուրքիայի, գանգատ թիվ 25.144/94, էջ 37:

ԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ,
հայցորդ

**ՆԱԽԱՊԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՆՎՈՍԱՔՍՈՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Նախադեպի առաջացումը՝ որպես քաղաքական իրավական ինստիտուտ, կապված է եղել պետական իշխանության մարմինների ստեղծման հետ: Հաստատուն իրավական համակարգի բացակայության պատճառով վերջիններս, ելնելով հանրային շահերից, ընդունել են սեփական որոշումները:

Հնագույն դատարանն ունեցել է նախադեպային բնույթ, բայց այնուամենայնիվ, հիմնականում չի հետևել նախկինում ընդունած սեփական որոշումներին: Բաբելոնի արքա Համուրաբի օրենքների ժողովածուն (դատաստանագիրքը)¹ առաջարկել է պրակտիկայում հաճախակի հանդիպող գործերով ներկայացված լուծումներ, որոնք կիրառվել են պետական կառավարման ստորադաս մարմինների կողմից և դրանով վերադասներին ազատել լրացուցիչ հարցերի խնդիրներից: Նախադեպը, որպես կանոն, կոնկրետ ոլորտում դադարել է իր գործողությունն այն ժամանակ, երբ ընդունվել է համապատասխան օրենք:

Նախադեպը լատիներենից (praecedens, praecedentis) թարգմանվում է «նախորդող»²: Ներկայումս նախադեպ է համարվում կոնկրետ գործով կայացված դատական որոշումը, որի պատճառաբանությունը դառնում է կանոն նույն ատյանի կամ ստորադաս դատարանների համար նմանատիպ գործեր քննելիս: Դատավորը դատական նախադեպ ստեղծելիս չի ստեղծում նոր իրավական նորմ, այլ ընդհանրացնում է այն, ինչը ելնում է մարդկային էությանն առընչվող իրավունքի ընդհանուր սկզբունքներից: Իրավաբանական գրականության մեջ դատական նախադեպի վրա հիմնված պետության իրավունքն անվանվում է դատավորների կողմից ստեղծված իրավունք:

Անգլիայում նախադեպային իրավունքի զարգացման ընթացքը տեղի է ունեցել մի քանի փուլով, որոնցից առաջինը եղել է դատական որոշումների միջոցով ընդհանուր իրավունքի ձևավորումը: Դրա սկիզբը հստակեցված չէ, երբեմն համարվում է XI դարը, երբ սկսվել է նորմանդական նվաճումը (1066 թվականը): Ընդհանուր իրավունքի ձևավորումն ավարտվել է XIV դարում, երբ սկսվել է դրա առաջին խոշոր ճգնաժամը: Երկրորդ փուլը կապված է ընդհանուր իրավունքի վերաձևավորման հետ և տևել է մինչև XIX դարի կեսը: XIX դարից սկսած մինչև ներկա ժամանակաշրջանը նախադեպային իրավունքը գտնվում է իր զարգացման երրորդ փուլում: Այս փուլին բնորոշ է նախադեպային իրավունքի դերի փոփոխությունը՝ ստատուտային իրավունքի զարգացման հետևանքով:

Առաջին փուլի ուսումնասիրությունն ընդգծում է այն հանգամանքները, որոնք հանգեցրել են Անգլիայում ընդհանուր իրավունքի ձևավորմանը: Այդ ժամանակ Անգլիայում գոյություն են ունեցել բազմաթիվ տեղական սովորույթներ: Ժամանակի ընթացքում այդ սովորույթները ենթարկվել են որոշակի փոփոխությունների և ձևավորել նոր համակարգ: Հասարակությունը ձգտել է վեճերը լուծել հաշտության համաձայնության միջոցով: Դատարանի նկատմամբ ձևավորվել է մի վերաբերմունք, որի համաձայն՝ դատարանը համաձայնության հասնելու համար միջնորդ մարմին է հանդիսացել:

Նորմանդական նվաճումից հետո Վիլիելմ Նվաճողը մշակել է առավել արդյունավետ մարտավարություն այնպիսի բարդ հասարակության կառավարման համար, ինչպիսին եղել է

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

¹ Մանրամասն տե՛ս История государства и права зарубежных стран. Том 1, М., 2015:

² Слов Современный словарь иностранных слов, М., Русский язык, 1922, էջ 488-489:

Անգլիան այդ ժամանակաշրջանում³: Վիլիելմ Նորմանդացին մասնակիորեն ընդունել է ձևավորված իրավունքը: Նորմանները տիրապետել են հռոմեական և եկեղեցական իրավունքը, բայց այնուամենայնիվ, սկսել են ուսումնասիրել և իրենց պրակտիկայում կիրառել անգլոսաքսոնական իրավունքը: Նորմանդական կառավարությունը հաջողության է հասել երկրի ողջ տարածքում, հաստատել է կենտրոնացված կառավարում, անգլիական իրավունքին հաղորդել որոշակի հատկանիշներ՝ իրավունքի մյուս ձևերից տարբերվող:

Անգլիայի ընդհանուր իրավունքի առաջացման մեջ մեծ դեր են կատարել թագավորական դատարանները: Այդ ժամանակաշրջանում վեճի ծագման դեպքում անձը դիմել է համայնքի դատարան, որտեղ գործել է սովորական իրավունքը, եկեղեցական դատարան, որտեղ վեճերը լուծվել են եկեղեցական իրավունքով, քաղաքի դատարան, որը կիրառել է առևտրային իրավունքը, և այլն: Անգլիական ընդհանուր իրավունքը կանխապես զարգացել է թագավորական դատարանների կողմից⁴, և խորհրդարանական կառավարումն առաջացել է թագավորական դատարանների ստեղծումից հարյուր տարի անց: Դատարանները դադարել են տեղաշարժվել և լուծել վեճերը՝ թագավորին ուղեկցելով: Այդ դատարանների դատավորները բնակվել են Լոնդոնում, որտեղից էլ ուղևորվել են տարբեր վայրեր՝ որոշում կայացնելու համար: Արդարադատություն իրականացնելիս դատավորները հաշվի են առել տվյալ վայրի տեղական սովորույթները: Նշվածին աջակցել է թագավորական դատարանների երդվյալ ատենակալների ինստիտուտը: Տեղացի բնակիչների շարքից ընտրվել են երդվյալ ատենակալներ, ովքեր սեփական կարծիքները հիմնել են իրենց հայտնի սովորույթների վրա: Այսպիսով՝ Լոնդոն վերադառնալիս դատավորները, ովքեր արդեն իսկ տեղեկացված են եղել տարբեր սովորույթների մասին, մյուս դատավորների հետ համատեղ քննարկել են իրենց գործերը, համեմատություններ արել նմանատիպ գործերով կայացված որոշումների միջև: Նման պրակտիկան

աջակցել է նմանատիպ գործերով դատավորների ընդհանուր դիրքորոշման ձևավորմանը: Դատական պրակտիկայի զարգացման և դրա դերի ամրապնդման համար կարևոր է եղել այն հանգամանքը, որ այդ ժամանակ թագավորական դատարաններում նիստերը վարել են մասնագետ իրավաբանները: Վերջիններս արտահայտել են մասնագիտական սեփական կարծիքները: Ընդհանուր իրավունքը նախապես ձևավորվել է որպես «իրավաբանների իրավունք»:

XIV դարի սկզբին գործող իրավաբանների կողմից ստեղծվել են մասնագիտական միավորումներ (կորպորացիաներ), որոնք նպաստել են իրավաբանական գործունեության բարձր որակական մակարդակի պահպանմանն ու հեղինակությանը, իրավունքի մոտեցմանը, հաջորդականության ձևավորմանը, ազգային միասնական իրավունքի զարգացմանն ու պաշտպանվածությանը: Դատարանները ստեղծել են իրավունք և, միաժամանակ՝ հետևել սեփական նախկին որոշումներին:

Անգլիական իրավունքի տեսաբանների միջև գոյություն չունի միասնական կարծիք այն մասին, թե կոնկրետ երբ է ստեղծվել ընդհանուր իրավունքը:

Միջնադարյան ընդհանուր իրավունքում գոյություն չի ունեցել նախադեպ հասկացություն: Ձևավորված պրակտիկան վերլուծելու հնարավորության առկայության նպատակով դատավորները, 1282 թվականից սկսած, թողարկել են տարեգրքեր: Տարեգրքերում դատական որոշումները շարադրվել են նորմական ֆրանսերենով: Այդ տարեգրքերը ժամանակակից դատական զեկույցների նախատիպերն են: Դատական որոշումների միջոցով ընդհանուր իրավունքի զարգացումը ձևավորել է իրավական համակարգի ինքնատիպություն և դրանով տարբերվել հռոմեական իրավունքի վրա հիմնված մայրցամաքային իրավական համակարգերից: Անգլիական իրավունքում գերակայել է դատավարական իրավունքը: Դա պայմանավորված է եղել թագավորական դատարանների այն իրավասությամբ, որ նյութական իրավունքն ստեղծվել է դատական պրակտի-

³ Մանրամասն տե՛ս История Англии, М., 2017:

⁴ Տե՛ս Богдановская И. Ю., Источники права на современном этапе развития “общего права”: дис. ...д-ра юрид. наук, М., 2007:

կայի միջոցով: Ի սկզբանե վերջիններիս իրավասությունը չի եղել հստակեցված և հաստատվել է երկար ժամանակի ընթացքում:

Միջին դարերի ընթացքում ընդհանուր իրավունքի մրցակիցն է համարվել լորդ կանցլերի դատարանում զարգացող արդարության իրավունքը: Թագավորին շարունակաբար ներկայացվել են հրահանգներ ստանալու միջնորդություններ, սակայն դրանք փոխանցվել են կանցլերական (գրասենյակային) բաժանմունք: Կանցլերը գործել է թագավորի անունից և գործերի քննության ընթացքում արդարադատություն իրականացնելիս պարտավորված չի եղել ընդհանուր իրավունքի դրույթներով: Նա հեշտությամբ չի հետևել ընդհանուր իրավունքի դատական որոշումներին, եթե համարել է, թե դրանք հակասել են իրավունքին և խելամտությանը: Սեփական որոշումներում եզրակացություններ է արել տրամաբանությամբ, ինչպես նաև ղեկավարվել է քաղաքական խնդիրներով, քանի որ գրասենյակի անդամ էր, և զբաղվել քաղաքական գործունեությամբ: Արդարության իրավունքն առաջացել է ընդհանուր իրավունքի մեկնաբանման հետևանքով, և որոշ անգլիացի գիտնականներ չեն ընդունում արդարության իրավունքի ինքնուրույն բնույթը: Սակայն արդարության իրավունքը մշակել է ինստիտուտներ, որոնք անգլիական իրավունքում անհայտ են եղել նախկինում:

Նախադեպային իրավունքի վերջնական ձևավորումն ու հետագա ձևափոխությունը տեղի է ունեցել XIX դարի կեսից սկսած և շարունակվում է մինչ այսօր: XIX դարը նախադեպի ինստիտուտի լիարժեք ճանաչման ժամանակաշրջան է: Նախադեպի ինստիտուտի հաստատմանը նպաստել են դատական բարեփոխումները: Դրանց շնորհիվ ստեղծվել է զարգացած դատական համակարգ:

Անգլոսաքսոնական իրավական ընտանիքի իրավունքի բազմաթիվ և բազմատեսակ աղբյուրների միջև դատական նախադեպը առավել նշանակալից է: Ստեղծված լինելով դատական իշխանության կողմից՝ նախադեպը հանդես է գալիս որպես բարձրագույն դատական ատյանների իրավաստեղծ գործունեության արդյունք:

Անգլիայի դատարանների, ինչպես ընդհանուր իրավունքի այլ երկրների դատարանների, իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության իրականացումն ու արդյունավետությունն ապահովվում են ամենատարբեր միջոցներով՝ քաղաքական, նյութական-ֆինանսական, իրավաբանական և այլ: Այստեղ հարկ է հատուկ առանձնացնել դատավորների շրջանում բավականին նյութական և իրավական հնարավորությունների առկայությունը՝ դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքն ապահովվելու, ինչպես նաև վերջիններիս բոլոր որոշումների կատարումն ապահովվելու համար: Իսոսքը վերաբերում է ոչ միայն կոնկրետ գործով կիրառման ենթակա որոշումներին, այլ հաճախ նաև տվյալ գործի շրջանակներից դուրս որոշումներին, որոնք որոշ պայմանների առկայության դեպքում կազմում են նապադեպ, որին այնուհետև հարկ է հետևել:

Նախադեպերի պարտադիրության (հարկադրանքի) սկզբունքն ընդհանուր իրավունքի համակարգի համար սովորութային է: Ինչպես նշվել է՝ Անգլիայում այս սկզբունքը վերջնականորեն հաստատվել է XIX դարի սկզբին, այսինքն՝ այն ժամանակ, երբ ստեղծվել է ավելի հստակ դատական համակարգ, առավել լիարժեք և որակյալ նախադեպերի հավաքածուներ:

Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ռ. Քրոսի նկատառումով՝ Անգլիայում նախադեպի դոկտրինայի խիստ պարտադիր բնույթը եզրափակվում է այնքանով, որ Անգլիայի դատավորները հաճախակի պարտավոր են հետևել նախկինում ընդունված որոշմանը, և նույնիսկ այն դեպքում, երբ գոյություն ունեն բավականաչափ համոզիչ փաստարկներ, որոնք այլ հանգամանքների դեպքում թույլ կտային այդպես չվարվել⁵:

Նախադեպային իրավունքի պահանջներին խիստ հետևելու՝ դատավորների պարտականությունը ելնում է տարբեր ձևական-իրավաբանական աղբյուրներից, որոնցից գլխավորը նախադեպի դոկտրինն է: Դրա հիմքում ընկած են նախադեպի կիրառման որոշակի դրույթներն ու սկզբունքները՝ ձևավորված Անգլիայի բազմադարյան դատական պրակտիկայի հետևանքով:

⁵ Stu Cross R. and Harris J., Precedent in English Law, Fourth Edition, Clarendon Press-Oxford, 2004, էջ 25-26:

Պարտադիրության սկզբունքը կարևորագույն սկզբունքներից մեկն է, բայց այնուամենայնիվ, չի սպառում նախադեպի դոկտրինի կանոնների կիրառումը: Գոյություն ունի այլ պատմականորեն ձևավորված և դրա բովանդակությունը կազմող սկզբունքների մի ամբողջ շարք: Որպես օրինակ՝ դրանց միջև կարելի է հատկորոշել այն դրույթները, որոնք ձևակերպվել են դեռևս XVIII-XIX դարերում Անգլիայի իրավաբանների կողմից: Վերջիններին համաձայն՝ 1) միայն դատական որոշումը հիմնավորող սկզբունքն է այն պարտադիր մասը (ratio decidendi), որը նախադեպ է համարվում հաջորդ դատավորի համար, 2) որոշման հիմքում չներկայացված կարծիքը դատական կարծիք չէ: Իրավաբանական տեսակետից՝ դա դիտարկվում է ոչ այլ կերպ, քան կամավոր դիմում (gratis dictum), 3) որոշման կայացման ընթացքում արտահայտված բոլոր ընդհանուր դրույթները, որոնք չեն կիրառվել գործի առանձնահատկությունների նկատմամբ, պարտավորեցնող ուժի բացակայությամբ արտադատական դրույթներ են, 4) այն դեպքում, երբ դատական որոշումը հիմնավորվել է ոչ թե մեկ՝ հիմնական, ինչը հատկանշական է ընդհանուր իրավունքին, այլ՝ երկու փաստարկով, երկուսն էլ պարտադիր են նմանատիպ հաջորդող գործերի քննության ընթացքում, 5) իրավակիրառման ընթացքում բոլոր դատական որոշումները պետք է մեկնաբանվեն այն հանգամանքների հաշվի առնմամբ, որոնց կապակցությամբ ընդունվել են, 6) յուրաքանչյուր դատական որոշում պետք է կարդացվի նախադեպային որոշումների լույսի ներքո, 7) արդարություն իրականացնելիս հարկ է դեկավարվել այն սկզբունքով, որ նմանատիպ գործերը պետք է լուծվեն նմանաձև⁶:

Նախադեպային իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում նշված վերջին դրույթին տրվում է հատուկ նշանակություն: Դա, որպես կանոն, համարվում է հիմնական սկզբունք, որը պետք է պահպանվի արդարադատություն իրականացնելիս: Ենթադրվում է, թե յուրաքանչյուր դատարանում դատավորը հակված է գործը լուծելու ճիշտ այնպես, ինչպես լուծվել է նմանատիպ գործն այլ դատավորի կողմից:

Տվյալ սկզբունքն ունի շատ կարևոր նշանակություն ոչ միայն նախադեպի դոկտրինի և փիլիսոփայության տեսանկյունից, այլ նաև հենց նախադեպի կառուցվածքի և բովանդակության յուրացման տեսանկյունից: Ի վերջո՝ նախադեպն իր ներքին կառուցվածքով և բովանդակությամբ բարդ, բազմակողմանի և ոչ միանշանակ երևույթ է:

Այն պարագայում, եթե անդրադարձ չի կատարվում նախադեպի կառուցվածքին ու բովանդակությանը վերաբերող իրավունքի նեղ մասնագիտական, խիստ կիրառական խնդիրներին, ապա հարկ է նշել, որ գործնականում ընդունված է մի տեսակետ, որի համաձայն՝ նախադեպը ձևավորվում է երեք հիմնական գործողությունների հետևանքով: Առաջինը քննվող գործին վերաբերող փաստերի ուսումնասիրությունն է և դրանցից առավել նշանակալիցների առանձնացումը: Երկրորդը դատավարության եզրափակիչ մասի, այսինքն՝ որոշում կայացնելու համար փաստարկների մշակումն է, ինչպես նաև այդ ընթացքում կիրառման ենթակա նախադեպերին վերաբերող վիճելի հարցերի լուծումը: Եվ երրորդը բուն որոշման կայացումն է, որտեղ շոշափվում են կոնկրետ գործով կողմերի շահերը:

Դասական տեսակետի համաձայն՝ նախադեպը, որպես իրավունքի աղբյուր, կազմված է երկու հիմնական կառուցվածքային մասերից: Առաջին մասը դատավորի իրավական դիրքորոշումն է, որն արտահայտվել է կոնկրետ գործի քննության արդյունքով և հիմնավորել տվյալ գործով դատական որոշումը: Դատական ակտի այս մասը կոչվում է ratio decidendi: Երկրորդ մասը կազմում են կոնկրետ գործով որոշումն ընդունելու անհրաժեշտությունը հիմնավորող և դրանով իսկ այդ որոշման կարևորությունն ու համոզիչ ուժը մատնանշող փաստարկները: Կառուցվածքային այդ մասը չի համարվում պարտադիր՝ դատական որոշման համար և սովորաբար դիտարկվում է որպես համատեղ ասված, այսինքն՝ obiter dictum:

Հավաստելով այն փաստը, որ նախադեպի կանոնը պահանջում է նախկինում կայացված դատական որոշումների մանրակրկիտ վերլուծություն, հետազոտող և համեմատող ի-

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 24-25:

րավաբանները հիմնավոր կերպով են մատնանշում, որ ընդունվող որոշումների հիմնավորման համար տրված պատճառաբանություններում ընդհանուր իրավունքի յուրաքանչյուր դատավոր պարտավոր է տարբերակել, մի կողմից՝ այն, ինչը որոշման անհրաժեշտ հիմքն է, իսկ մյուս կողմից՝ համատեղ ասվածը: Այստեղ ենթադրվում է, թե ratio decidendi-ն պարզապես այն կանոնն է, որը ներառված է ընդհանուր իրավունքի մեջ, որին հետագայում հարկ է հետևել: Իսկ ինչ վերաբերում է համատեղ ասվածին՝ obiter dictum-ին, դա չունի համապարտադիր նշանակություն: Դրա հիմնական նպատակը որոշման համոզիչ ուժի հիմնավորումն է, որը մեծ մասամբ կախված է ինչպես դատավորի հեղինակությունից, այնպես էլ ձեռք բերված փաստերի վերլուծությունից և ներկայացված պատճառաբանություններից⁷:

Թեև որոշումն ընդունող դատավորը չի սահմանում, թե որոշման մեջ ինչն է հիմնական իրավական դրույթ, և ինչը՝ համատեղ ասված, այնուամենայնիվ, դա կարևոր է հաջորդող դատական գործերի համար⁸:

Հարկ է հաշվի առնել, որ շատ դեպքերում նախադեպի ձևավորումը չի կատարվում մեկ, կարճաժամկետ ակտի միջոցով, այլ՝ երկարատև ստեղծագործական ընթացքի շնորհիվ: Մեծ մասամբ նախադեպն ստեղծվում է մի քանի դատական որոշումներով: Միայն նմանատիպ բոլոր գործերի և համապատասխան որոշումների ուսումնասիրության շնորհիվ են դատավորները կողմնորոշվում իրենց ընտրության վերաբերյալ և հանգում միասնական կարծիքի այն մասին, թե ինչը պետք է համարել ընդհանուր սկզբունք կամ նորմ, և հաջորդող գործերի քննության ընթացքում շարունակաբար զարգացնել և հետևել դրան:

Մի շարք հիմնախնդիրների և դրանց առանձին մասերի վերաբերյալ տարբեր կարծիքների առկայության պայմաններում գոյություն չունի լիովին ակնհայտն ապացուցելու անհրաժեշտություն: Տվյալ դեպքում դատավորի հստակ ձևակերպված և լավ պատճառաբանված կարծիքը նախադեպային իրավունքի համակարգում ունի ահռելի գործնական նշանակություն: Դա վերաբերում է ոչ միայն Անգլիային, այլ նաև ընդհանուր իրավունքի բոլոր մյուս երկրներին, որտեղ հաշվի է առնվում նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուր, նշանակությունը, զարգացման առանձնահատկությունները, պարտադիրության աստիճանը:

Տարբեր ազգային իրավական համակարգերի նախադեպային իրավունքի զարգացման մեջ առկա են միանման շատ առանձնահատկություններ և զարգացման ուղիներ: Այս նմանության պատճառը թաքնված է ոչ միայն այն իրողությունում, որ դրանք բոլորը ծագում են անգլիական իրավունքից, այլ նաև, որ բոլոր ժամանակակից նախադեպային համակարգերը զարգանում են անգլիական, ամերիկյան իրավունքի և միջազգային դատարանների (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի) ուժեղ ազդեցության ներքո: Սակայն տարբեր երկրներում նախադեպային իրավունքի զարգացման ընթացքում, ընդհանուրի հետ մեկտեղ, գերակշռում է նաև առանձնահատուկը: Վերջինս առաջացել է ինչպես տարբեր երկրների պատմական առանձնահատկությունների զարգացման, այդպես էլ տվյալ երկրի ինքնաձև իրավական մշակույթի, կրոնի, քաղաքականության, տնտեսության, ազգային, էթնիկական և այլ սովորույթների ու ավանդույթների ազդեցության հետևանքով:

⁷ Տե՛ս Давид Р., Жоффре-Спинози К., Основные правовые системы современности, М., 2011, էջ 258:

⁸ Տե՛ս Capuletti M., The Law-making Power of the Judge and its Limits, A Comparative Studies, Monash University Law Review, 1981, №8, էջ 15-21:

ԱՐԹՈՒՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական Համալսարան Հիմնադրամի
Իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՍՈՒՊՐԱՆԱՅԻՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՋ
ՄՇԱԿՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՆԿՈՐՊՈՐԱՅԻԱՆ ԵՎ
ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

*Կառավարության առաջին լիազորությունը
մարդկանց պաշտպանելն է, ոչ թե կառավարելը
նրանց կյանքը:*

Ռոնալդ Դեյզան

Սուպրանացիոնալիզմը (լատ. supra – վեր, national – ազգային) սուպրանացիոնալիստական կազմակերպության (հասկացությունը կտանք ավելի ուշ) կողմից ներպետական իշխանության նկատմամբ ուժի կամ ազդեցության գերազանցումն է, որը դրսևորվում է պետությունների կողմից մշակված և վերահսկվող քաղաքականությամբ: Մի կողմից՝ սուպրանացիոնալիզմը ցույց է տալիս միջազգային համագործակցության աստիճանը պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև, մինչդեռ, մյուս կողմից՝ եվրոպական գիտության մեջ համարվում է ինստիտուցիոնալ համակարգի ձև: Ավելի լայն մոտեցմամբ՝ դա համագործակցության մակարդակ է, որը կախված է սուպրանացիոնալ մակարդակով միջազգային փոխազդեցությունների թիրախավորումից¹: Սուպրանացիոնալիստական քաղաքականությունը իրականացնելու համար անհրաժեշտ էր ձևավորել սուպրանացիոնալիստական կամ վերագային իրավունքը, ինչպես նաև այն համակարգը, որը կիրառործեր այդ իրավունքը:

Սուպրանացիոնալիստական իրավունքը միջազգային իրավունքի ձևերից մեկն է, որտեղ սուվերեն ազգերի իրավունքները սահմանափակված են՝ մեկը մյուսի նկատմամբ սուպրանացիոնալիստական կազմակերպությանը միանալու պահից սկսած: Դա տարբերվում է հան-

րային միջազգային իրավունքից, քանի որ սուպրանացիոնալիստական իրավունքում պետություններն ակնհայտորեն ընդունում են իրենց պարտականություն՝ կատարել իրենց մասնակցությամբ, միջազգային համաձայնագրով ստեղծված դատարանի որոշումները: Պատմականորեն սուպրանացիոնալիստական իրավունքը զարգացել է երկու ուղղությամբ՝ *ամերիկյան* և *եվրոպական*: Երոպական իրավունքում տարբերակվում են սուպրանացիոնալիզմի երկու տեսանկյուն՝ *նորմատիվ* և *որոշումալի*²: Նորմատիվ սուպրանացիոնալիզմը, մի կողմից՝ կարգավորում է հանրային քաղաքականության և իրավական միջոցառումների մեջ առկա հարաբերությունները և աստիճանակարգությունը, իսկ մյուս կողմից՝ կարգավորում է որևէ կազմակերպության մեջ առկա մասնակցի պետությունների առաջարկած քաղաքականությունները և իրավական միջոցառումները, օրինակ՝ միջազգային համաձայնագրերի ընդունումը: Փաստորեն, նորմատիվային սուպրանացիոնալիզմը ունի երկու կողմը՝ արտաքին և ներքին: Նորմատիվային սուպրանացիոնալիզմի արտաքին կողմը ցույց է տալիս այն հարաբերությունները, որոնք առկա են առհասարակ որևէ հասարակության մեջ, իսկ ներքին կողմը ցույց է տալիս քաղաքականության և իրավական միջոցառումների կարգավորու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

¹ Տե՛ս “Supranationalism between the nation-state and international cooperation” Janusz Ruzskowski, Journal of public administration and policy research Vol. 1(1) pp. 004-010 May, 2009, էջ 1:
² Տե՛ս Supranational Law and the Supranational System: Legal Structure and Political Process in the European Community, Joseph H. H. Weiler, 1982, էջ 51-52:

մը որևէ սուպրանացիոնալիստական կազմակերպության ներսում: Որոշումային սուպրանացիոնալիզմը կապված է ինստիտուցիոնալ շրջանակների և որոշումների ընդունման գործընթացի հետ, որտեղ հանրային քաղաքականությունը և իրավական միջոցառումները, առաջին հերթին, նախաձեռնվում, քննարկվում և ձևակերպվում են, այնուհետև հրապարակվում և կիրառվում են:

Ինչպես արդեն նշել ենք՝ սուպրանացիոնալիստական իրավունքը մշակվում և իրականացվում է իրեն բնորոշ համակարգի միջոցով: Այդ համակարգի բովանդակությունը կազմում են սուպրանացիոնալիստական կազմակերպությունները: Սուպրանացիոնալիստական կազմակերպություններն, այն բոլոր հաստատություններն ու կազմակերպություններն են, որտեղ ներառված են մեկից ավելի անդամ երկրներ, կամ առնվազն երկու ոչ պետական կազմավորումներ, որոնք ներկայացնում են ազգային պետությունները, և որոնք ներգրավված են քաղաքական և սոցիալական գործընթացներում³: Այս տեսակի կազմակերպությունները բազմաթիվ են աշխարհում, առաջիններից են՝ Եվրոպական Միությունը (ԵՄ) և Եվրոպայի Խորհուրդը (ԵԽ): Ներկայումս այսպիսի կազմակերպությունների թիվը գնալով մեծանում է, օրինակ՝ Եվրասիական Տնտեսական Միությունը (ԵՏՄ): Հիմնական տարբերությունը միջազգային կազմակերպություններից այն է, որ, ի տարբերություն միջազգային կազմակերպությունների, որտեղ պետությունները համագործակցում են միասնական նպատակի համար, և որտեղ յուրաքանչյուր անդամ պետությունը ներկայացնում է իր սեփական կամքը, սուպրանացիոնալիստական կազմակերպությունը բարձր է պետական իշխանությունից և արտահայտում է իր սեփական կամքը: Այսպես, օրինակ՝ անդամ երկրները, անդամակցելով Եվրոպական Միությանը, համաձայնվել են փոխանցել իրենց ինքիշխանության մի մասը, որը նրանք իրացնում էին որոշակի քաղաքականության շրջա-

նակներում: Ինքնիշխանության փոխանցմամբ հնարավոր է դառնում, որ Եվրոպական Միության կառավարման կառույցները կայացնեն վերազգային պարտավորեցնող որոշումներ⁴: Եվրասիական տնտեսական միությունը միջազգային կազմակերպություն է, որն ուղղված է տարածաշրջանային տնտեսական ինտեգրմանը, և որն ունի միջազգային իրավասուբյեկտություն⁵:

Վերոնշյալ կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում մշակում և ընդունում են իրավական ակտեր, իսկ անդամ երկրներն ինկորպորացնում են այդ ակտերն իրենց ներպետական իրավունքում:

Ներպետական իրավունքը կարգավորում է անձանց միջև և անձի ու պետության միջև ծավալվող իրավահարաբերությունները, մինչդեռ միջազգային իրավունքը կարգավորում է պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև պետությունների ու միջազգային կազմակերպությունների միջև առկա իրավահարաբերությունները⁶: Իրավունքի տեսության մեջ միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի միջև կապը մեկնաբանվում է երկու մոտեցմամբ: Դուալիստները պնդում են, որ միջազգային իրավունքը և ներպետական իրավունքը գործում են իրարից անկախ և չեն կարող ազդեցություն ունենալ մեկը մյուսի վրա: Մոնիստներն իրենց մոտեցումը հիմնում են իրավունքի միասնության տեսության վրա և պնդում են, որ ներպետական իրավունքը հետևում է միջազգային իրավունքին: Այս երկու մոտեցումն էլ ազդում են միջազգային իրավունքի ինկորպորացիայի վրա: Ընդհանուր կանոնն այն է, որ պետությունը, չկիրառելով միջազգային իրավունքը, չի կարող վերջինս արդարացնել՝ հղում կատարելով ներպետական իրավունքին⁷: Վիեննայի 1969 թվականի համաձայնագիրը շատ պարզ է արտահայտվել այս հարցում: Կիրառելով *pacta sunt servanda* սկզբունքը՝ պետությունը, ունենալով միջազգային պարտավորություններ, անհրաժեշտության դեպքում

³ Տե՛ս, Nationalism, Sovereignty, and Supranational Organizations, Michael R. Lucas, Hamburg, April 1999, էջ 7:

⁴ Տե՛ս Եվրոպական Միության պաշտոնական կայքէջի խորհրդանամի վերաբերյալ բաժին, http://www.europarl.europa.eu/atyourservice/en/displayFtu.html?ftuId=FTU_1.4.1.html, 2017

⁵ Տե՛ս ԵԱՏՄ պաշտոնական կայքէջ, <http://www.eaeunion.org/#about>, 2017

⁶ Տե՛ս SHAW N. Malcolm, International Law, 4th Ed., Cambridge University Press, 1998, էջ 100:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 102:

պետք է փոխի իր ներպատական իրավունքը՝ համաձայնեցնելով իր միջազգային պարտավորությունների հետ: Սա, ըստ էության, բնորոշ է մոնիստական մոտեցմանը: Այլ է պատկերը դուալիստների շրջանում, ովքեր պնդում են, որ միջազգային իրավունքը և ներպետական իրավունքը գործում են իրարից առանձին, և պետությունը պետք է դրանք առանձին կերպով ներառի ներպետական իրավունքի մեջ, որպեսզի ապահովվի դրանց կիրառությունը: Ընդհանրացնելով վերոնշյալը՝ պետք է փաստենք, որ միջազգային իրավունքի ինկորպորացիան կատարվում է երկու եղանակով: Առաջինի դեպքում պետությունը (առավել հաճախ օրենսդիր մարմինը՝ պառլամենտը), ստորագրելով և վավերացնելով միջազգային համաձայնագիրը, թույլ է տալիս դրա կիրառությունը իրավահարաբերությունների կարգավորման համար, իսկ երկրորդ դեպքում պետության կողմից համաձայնագիր ստորագրելը և վավերացնելը բավարար չեն վերջինս անմիջապես կիրառելու համար. պետք է դա նաև առանձին կերպով ինկորպորացնել կամ, պարզ ասած՝ ներառել ներպետական իրավունքում: Հաշվի առնելով, որ դուալիստական մոտեցումն ավելի բնորոշ է անգլոսաքսոնական իրավական համակարգին՝ սույն հոդվածի շրջանակներում իրավունքի ինկորպորացիայի գործընթացը կդիտարկենք մոնիստական մոտեցման տեսանկյունից:

Ինչպես նկատում ենք՝ իրավունքի ինկորպորացիան բարդ գործընթաց է, որը սուպրանացիոնալիստական կազմակերպություններում դրսևորվում է երկու կողմով՝ նորմատիվային և որոշումային: Իրավունքի ինկորպորացիայի գործընթացում որոշիչ դեր ունեն երկու սուբյեկտ՝ սուպրանացիոնալիստական կազմակերպությունները և անդամ երկրների պառլամենտները: Սուպրանացիոնալիստական կազմակերպություններում նախ բոլոր անդամ երկրների մասնակցությամբ մշակվում են իրավական ակտերը, քննարկվում և ընդունվում, այնուհետև հրապարակվում և կիրառում, բայց շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում, որ յուրաքանչյուր անդամ երկիր վավերացնի իրավական ակտը՝ կիրառելու համար: Վավերացման գործընթացը դրվում է օրենսդիր մարմնի՝

պառլամենտի վրա: Այստեղ հարց է առաջանում թե ինչ լիազորություններ ունի գործադիր իշխանությունը սուպրանացիոնալիստական կազմակերպությունների կողմից մշակված իրավական ակտերի ինկորպորացիայի գործընթացում, և ի՞նչ է այդ լիազորությունների բովանդակությունը:

Ընդհանուր առմամբ՝ գործադիր իշխանության լիազորություններն իրավունքի ինկորպորացիայի ոլորտում սահմանափակ են: Գործադիր իշխանությունն իր լիազորությունները, որպես կանոն, սկսում է կիրառել միայն միջազգային իրավունքի ինկորպորացիայից հետո՝ ապահովելով միջազգային իրավական ակտերի կիրառումը: Կառավարության նմանատիպ լիազորությունը բխում է իր գործառույթների ընդհանուր բնութագրից, որոնք իրենց բնույթով առավելապես գործադիր են: Ներկայումս նկատվում են միտումները, երբ գործադիր իշխանության մարմինները՝ ի դեմս կառավարության, լուրջ դերակատարում են ստացել իրավաստեղծ գործընթացում: Մասնավորապես՝ խորհրդարանական կառավարման կարգ ունեցող երկրներում կառավարությունն ինքն է մշակում իրավական ակտերի նախագծերը և ներկայացնում խորհրդարանին և, որպես կանոն՝ այդ իրավական ակտերը փակ են լինում հանրության համար⁸: Այլ է իրավիճակը միջազգային իրավունքի ինկորպորացիայի բնագավառում: Բացառությամբ միջկառավարական պայմանագրերի՝ կառավարությունները, որպես կանոն, մասնակից չեն դառնում մյուս տեսակի պայմանագրերի ինկորպորացիայի գործընթացին: Միջազգային իրավունքի ինկորպորացիայի գործընթացին կառավարությունների մասնակցությունը դրսևորվում է երկու ուղղությամբ՝ միջազգային պարտավորությունները ստանձնելուց հետո և մինչև միջազգային պայմանագիր ստորագրելը: Միջազգային պարտավորությունների կատարման մասով, եթե բացակայում է հատուկ համաձայնագիրը, ապա պետությունն ինքն է որոշում, ինչպես կատարել դա: Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում դաշնային կառավարությունն ինքն է որոշում՝ արդյոք միջազգային պայմանագիրը կարճ է ինքնուրույն կերպով

⁸ Տե՛ս “THE LEGISLATIVE BODIES IN THE LAW - MAKING PROCESS”, I.Bogdanovskaia, 2017, էջ 24:

կիրառվել, թե՛ առկա է պահանջ օրենսդրի կողմից դա կիրառելու կամ գործադիր իշխանության կողմից համապատասխան քայլեր ձեռնարկելու⁹: Միջազգային պարտավորությունները ինքնուրույն կերպով չեն կիրառվում նաև Հնդկաստանում: Անհրաժեշտ է նախ և առաջ դրանք ինկորպորացնել ներպետական իրավունքում, այնուհետև կառավարությունը որոշում է մեթոդները կատարելու ստանձնած միջազգային պարտավորությունները¹⁰: Փաստորեն, ինչպես նկատում ենք՝ սուպրանացիոնալիստական կազմակերպությունների կողմից մշակված իրավական ակտերը կիրառվում են երկու ձևով. կամ դրանք կիրառվում են առանց ինկորպորացվելու ներպետական իրավունքում, կամ դրանց կիրառման համար անհրաժեշտ է դրանք ինկորպորացնել ներպետական իրավունքում, ինչից հետո գործադիր մարմինը (առավել հաճախ կենտրոնական մարմինը՝ կառավարությունը) մշակում է այն մեթոդները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում կատարել ստանձնած միջազգային պարտավորությունները:

Տեսության մեջ խնդրահարույց է գործադիր իշխանության դերը սուպրանացիոնալիստական կազմակերպությունների կողմից իրավական ակտերի մշակման և ընդունման գործընթացում: Ինչպես արդեն նշել ենք՝ սուպրանացիոնալիստական իրավունքն ունի երկու կողմ՝ նորմատիվային և որոշումային: Նորմատիվայի սուպրանացիոնալիզմը խնդիրներ չի ստեղծում, քանի որ յուրաքանչյուր սուպրանացիոնալիստական կազմակերպությունում անդամ երկներից յուրանքանչյուրն ունի իր ներկայացուցիչը, ով արտահայտում է իր պետության դիրքորոշումներն ընդունվող իրավական ակտերի մասին: Այդօրինակ դիրքորոշումները, վերջին հաշվով, արտահայտում են նաև պետության գործադիր իշխանության կարծիքն իրավական ակտի վերաբերյալ: Ավելին՝ հաճախ սուպրանացիոնալիստական կազմակերպություններում պետությունը ներկայացնում են գործադիր իշխանության կողմից լիազորված ներկայացուցիչները:

Այլ է պատկերը որոշումային սուպրանացիոնալիզմի դեպքում: Մեծ մասամբ սուպրանացիոնալիստական կազմակերպությունների անդամ երկների գործադիր մարմինները որպես առանձին սուբյեկտ չեն մասնակցում կազմակերպության կողմից մշակվող իրավական ակտերի գործընթացին: Այս դեպքում սուպրանացիոնալիստական կազմակերպությունը համարվում է այն միակ սուբյեկտը, ով մշակում, ընդունում և հրապարակում է իրավական ակտերը: Այս առումով տարբեր սուպրանացիոնալիստական կազմակերպություններ տարբեր կերպ են փորձել մասնակից դարձնել անդամ երկների գործադիր իշխանություններին իրենց կողմից իրավական ակտերի մշակման գործընթացին: Օրինակ՝ Եվրոպական Միությունում օրինաստեղծ գործունեությանը մասնակցում են երկու սուբյեկտ՝ Եվրոպական պառլամենտը և Եվրոպական Միության խորհուրդը¹¹: Ըստ էության՝ նախ Եվրոպական պառլամենտը քննարկում և ընդունում է իրավական ակտերը և ուղարկում է Խորհրդի հաստատմանը: Եվրոպական միության խորհուրդը, որի կազմի մեջ ընդգրկվում են անդամ պետությունների կառավարությունների կողմից լիազորված անձինք՝ հաստատում կամ մերժում են Պառլամենտի կողմից ընդունված իրավական ակտը: Այս ձևով, փաստորեն, Եվրոպական Միությունը փորձ է կատարում հաշվի առնել անդամ երկների գործադիր իշխանությունների կարծիքը՝ ընդունվող իրավական ակտերի վերաբերյալ: Ընդունելով այս մոտեցման առավելությունները՝ կարծում ենք՝ նմանատիպ մոտեցման հիմնական թերությունն այն է, որ անդամ երկների կարծիքը մեծ մասամբ հաշվի է առնվում միայն իրավական ակտի մշակումից և ընդունումից հետո: Նմանատիպ մոտեցման հետևանքով՝ օրենսդիր մարմինը՝ Եվրոպական պառլամենտը ծախսում է նյութական և ժամանակային միջոցներ իրավական ակտի մշակման, քննարկման և ընդունման համար, սակայն դա կարող է մերժվել ԵՄ խորհրդի կողմից:

⁹ Տե՛ս ՄԱԿ-ի պաշտոնական կայքէջ, <http://www.un.org/esa/socdev/enable/comp101.htm>, 2017

¹⁰ Տե՛ս Dean Maxwell & Isle Cohen Doctoral Seminar in International Law Hans & Tamar Oppenheimer Chair in Public International Law Faculty of Law, McGill University, By Dr. Sunil Kumar Agarwal, Work-in-progress, 2017, էջ 34:

¹¹ Տե՛ս ԵՄ պաշտոնական կայքէջ, https://europa.eu/european-union/about-eu/institutions-bodies/council-eu_en, 2017

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք նշել, որ.

1. Սուպրանացիոնալիստական իրավունքը դրսևորվում է երկու տեսանկյունով՝ նորմատիվային և որոշումային, որոնք իրենց ամբողջության մեջ կազմում են սուպրանացիոնալիստական կազմակերպություններում օրենսդրության մշակման գործընթացը:

2. Ռոմանագերմանական իրավական համակարգում միջազգային իրավունքի ինկորպորացիան կատարվում է՝ հիմք ընդունելով իրավունքի միասնության վերաբերյալ տեսությունը:

3. Միջազգային իրավունքի ինկորպորացիայում գործադիր իշխանության դերը կարևորվում է երկու դեպքում: Մի կողմից՝ գործադիր իշխանությունը ինկորպորացված իրավական ակտի իրականացման հիմնական սուբյեկտն է, մյուս կողմից՝ իր ներկայացուցչի միջոցով մասնակցում է իրավական ակտի քննարկման և ընդունման գործընթացներին:

4. Գործադիր իշխանությունն օժտված չէ լիազորությամբ՝ սուպրանացիոնալիստական կազմակերպության կողմից մշակված իրավա-

կան ակտի վերաբերյալ արտահայտել կարծիք, որն իրավական նշանակություն կունենա իրավական ակտի ընդունման գործընթացի վրա:

Հաշվի առնելով վերոնշյալը առաջարկում ենք՝

հնարավորություն տալ սուպրանացիոնալիստական կազմակերպությունների անդամ երկների գործադիր իշխանություններին՝ այդ կազմակերպությունների կողմից ընդունվող իրավական ակտերի մշակման փուլում ներկայացնել եզրակացություններ, որոնք կկցվեն իրավական ակտին և պարտադիր կերպով քննարկման կարժանանան իրավական ակտը քննարկելիս և ընդունելիս: Գործադիր իշխանությունները կարող են կատարել առաջարկություններ իրենց ներկայացրած եզրակացություններում: Դրանցում առկա առաջարկությունները մերժելու պարագայում կազմակերպությունը պարտադիր կերպով պետք է գրավոր բացատրություն ուղարկի անդամ պետության գործադիր իշխանությանը, թե ինչո՞ւ է մերժում առաջարկությունները:



ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր, Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ԽՄԲԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հոդվածը նվիրված է անչափահասների խմբային հանցավորությանն առնչվող խնդիրներից մեկի՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի սոցիալ-ժողովրդագրական բնութագրի ուսումնասիրությանը:

Հոդվածում ներկայացվում է 2010-2015 թվականների քրեական գործերի հետազոտության արդյունքով խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների սոցիալ-ժողովրդագրական բնութագիրն ըստ տարիքային, սեռային և կրթական հատկանիշների: Յուրաքանչյուր հատկանիշի հիման վրա վեր են հանվում անչափահասների բնութագրի առանձնահատկությունները և դրա վատացման միտումները:

Բանալի բառեր. խմբի կազմում հանցանք կատարած անչափահաս, սոցիալ-ժողովրդագրական բնութագիր, անչափահասի անհատականություն, քրեական ակտիվություն, բնութագրի վատացման միտում:

РИПСИМЕ ХАЧАТРИАН

Старший преподаватель кафедры уголовного права и криминологии факультета правоведения Академии Образовательного комплекса Полиции РА, майор полиции, соискатель кафедры уголовного права ЕГУ

СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА НЕСОВЕРШЕННОЛЕТНЕГО, СОВЕРШИВШЕГО ПРЕСТУПЛЕНИЕ В ГРУППЕ

Статья посвящена исследованию социально-демографической характеристики несовершеннолетнего, являющейся одной из проблем групповой преступности среди несовершеннолетних. В статье представляются возрастно-половые и образовательные особенности несовершеннолетних, совершивших преступления в группе по результатам исследования уголовных дел на 2010-2015 годы. На основе каждого признака, выясняются особенности характеристики несовершеннолетнего и тенденции к ее ухудшению.

Ключевые слова: несовершеннолетний, совершивший преступление в группе, социально-демографическая характеристика, индивидуальность несовершеннолетнего, уголовная активность, тенденции к ухудшению характеристики.

HRIPSIME KHACHATRYAN

Senior lecturer at Police Academy of Police Educational Complex of RA, Department of Law, Chair of Criminal Law and Criminology, Police Major.

THE TYPOLOGY OF JUVENILE CRIMINAL GROUPS BY THE FEATURE OF STABILITY

The detailed study of juvenile criminal groups' types is important for group juvenile criminality prevention. The typology of juvenile criminal groups by the feature of stability has been presented in the article. The notion of stability has been discussed in the article. Based on it an analysis has been performed by proposing to classify juvenile criminal groups into three types - unstable, stable and organized.

Keywords: juvenile criminal groups, typology, criminal activity, feature of stability, public danger.

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԳԼՈԲԱԼԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածում հանգամանորեն լուսաբանվում են անձի ընդհանուր իրավական և քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները՝ արդի ժամանակաշրջանում գլոբալացման պայմաններում: Հոդվածում անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանությունը դիտարկվում է որպես պետության իրավական քաղաքականության նոր ուղղություն, որի առաջնային նպատակն է մարդուն պաշտպանել ցանկացած, այդ թվում նաև հանցավոր ոտնձգություններից՝ ոչ միայն քրեական պատիսանատվության միջոցով, այլև կանխարգելման և օրենքով չարգելվող այլ միջոցներով:

Բանալի բառեր. քրեական օրենսդրություն, անձի անվտանգություն, իրավական անվտանգություն, հանցավոր ոտնձգություն, հանցագործությունների կանխարգելում:

АЙК МКРТЧЯН

Аспирант Института Философии, социологии и права НАН РА

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ БЕЗОПАСНОСТИ ЛИЧНОСТИ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

В научной статье детально изучены общеправовые и уголовно-правовые проблемы защиты личности в современных условиях глобализации. В статье уголовно-правовая защита безопасности личности рассматривается как новое направление правовой политики государства, первостепенной целью которого является защита человека от всякого, в том числе – преступного посягательства при применении уголовной ответственности, а также предотвращение и использование других средств, не запрещенных законом.

Ключевые слова: уголовное законодательство, защита личности, правовая защита, криминальное посягательство, национальная безопасность, гарантия прав человека.

ՆԱՅԿ ՄԿՐՏՅՈՒՆ

Post-graduate student in the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

THE PROTECTION OF THE PERSONS SECURITY WITHIN THE RANGES OF CRIMINAL LAW IN THE GLOBALIZATION

The article covers the issues of general legal and criminal-legal protection of the person in the modern era in globalization. In the article the criminal-legal protection of person's security is being observed as a new way of state legal policy, the main purpose of which is to protect the person from any, including criminal encroachment not only through criminal liability but also by preventing and other means that are not prohibited by law.

Keywords: criminal legislation, person's security, legal security, criminal encroachment, prevention of crimes.

ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության մագիստրոս,
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկին՝ մրցակցությանը, և դրա ապահովման գործում առանցքային մասնակցին՝ պաշտպանին:

Հոդվածում փորձ է արվել վեր հանել պաշտպանի ակտիվ մասնակցության կարևորությունը քրեական դատավարության դատական քննության փուլում՝ որպես գործի քննության մինչդատական փուլում առկա անհավասարության հաղթահարման միջոց: Հոդվածում անդրադարձ է կատարվել նաև դատարանին՝ կարևորելով վերջինիս՝ որևէ կողմում հանդես չգալու հանգամանքը որպես մրցակցության սկզբունքի ապահովման կարևորագույն երաշխիք:

Բանալի բառեր. մրցակցություն, պաշտպան, դատարան, մեղադրող, քրեական հետապնդում, Եվրոպական դատարան, կոնվենցիա:

ГАЯНЕ МЕЛИКЯН

Магистр юридических наук,
помощник заместителя генерального прокурора РА

СОСТЯЗАТЕЛЬНОСТЬ В СУДЕБНОМ ПРОЦЕССЕ

Статья посвящена состязательности как одному из фундаментальных принципов уголовного судопроизводства и адвокату-защитнику как ключевому участнику в процессе обеспечения этого принципа.

В статье рассмотрены вопросы, касающиеся важности активного участия адвоката-защитника на стадии судебного производства как способ преодоления неравенства на досудебной стадии судебного разбирательства. В статье также затрагивается важность того факта, что суд не должен выступать в пользу ни одной из сторон, как важнейшая гарантия обеспечения принципа состязательности.

Ключевые слова: состязательность, защитник, суд, обвинитель, уголовное преследование, Европейский суд, конвенция.

GAYANE MELIKYAN

Master of studies in law,
Assistant of Deputy Prosecutor General of the RA

ADVERSARIAL TRIAL

The article is devoted to the principle of adversarial trial as one of the fundamental principles of criminal proceedings and the core participant therein – the defense.

The author strives to elucidate how prominent place holds the active participation of defense in the trial stage of criminal proceedings which serves as a means for overcoming the inequality occurred at pre-trial stage. Besides, the role of court is discussed that should refrain from acting in favor of one of the sides of criminal proceedings and guarantee an adversarial trial.

Keywords: adversariality, defender, court, accuser, criminal prosecution, European Court, Convention

ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի
Քրեական և քրեադատավարական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն գիտական հոդվածի սահմաններում կքննարկվեն համացանցում տեղակայված ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվության ձեռքբերման առանձնահատկություններին վերաբերող հարցերը: Աշխատանքի ծավալի մեջ ներառված է զննության օբյեկտների օրենսդրական ցանկից տեղանքի հասկացության և վիրտուալ տարածության հասկացության հարաբերակցության (համադրելիության) հարցի վերաբերյալ քրեադատավարական օրենսդրության և գիտական գրականության վերլուծություն:

Բանալի բառեր. զննություն, զննության օբյեկտ, տեղանք, վիրտուալ տարածություն, վիրտուալ տեղանք:

ЗОРАЙР АРУТЮНЯН

Соискатель кафедры уголовного и уголовно-процессуального права
Института права и политики РАУ

ПРОЦЕССУАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СОБИРАНИЯ ИНФОРМАЦИИ, РАСПОЛОЖЕННОЙ В СЕТИ ИНТЕРНЕТ

В рамках настоящей научной статьи будут рассмотрены вопросы, относящиеся к особенностям собирания информации, имеющей доказательственное значение, расположенной в сети Интернет. В объем настоящей работы включен анализ уголовно-процессуального законодательства и научной литературы относительно вопросов соотношения понятия виртуального пространства и понятия местности, в качестве одного из предусмотренных законодательным списком объектов осмотра.

Ключевые слова: осмотр, объект осмотра, местность, виртуальное пространство, виртуальная местность.

ZORAYR HARUTYUNYAN

Applicant of the criminal and criminal procedural law department of the
Institute of Law and politics RAU

PROCEDURAL FEATURES OF COLLECTING INFORMATION LOCATED IN THE INTERNET

In the framework of current scientific article the issues related to the specifics of collecting information with evidentiary value located on the Internet will be analyzed. Comparative analysis of criminal procedural legislation and relevant scientific literature, regarding the questions of ratio of the virtual space concept and concept of terrain as one of the inspection objects stipulated by the legislative list, is presented in the scope of current work.

Keywords: Inspection, inspection object, terrain, virtual space, virtual terrain.

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ Կառավարման ակադեմիայի
գիտական աստիճանի հայցորդ

**ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ (ՆՊԱՏԱԿԻ) ԼՈՒԾՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ
ՀՆԱՐԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ: ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ,
ԹՃ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ**

Հոդվածում, հիմնվելով երկրի պաշտպանական գործառույթի տեսական կառուցվածքի ավանդական մեկնաբանության և դուրս բերված թերությունների վրա, առաջարկվում է նոր տեսական մոտեցում՝ պաշտպանողականության սկզբունք՝ որպես խնդրի լուծման առավել համարժեք տեսական միջոց:

Բանալի բառեր. գլխավոր նպատակ, գործառույթ, գործառութային մոտեցում, սկզբունք, սոցիալական պետություն, իրավական պետություն, պաշտպանունակ պետություն:

ЛУСИНЕ БАРСЕГЯН

Соискатель ученой степени Академии
государственного управления РА

**ВОЗМОЖНЫЕ КОНСТИТУЦИОННЫЕ ПУТИ МЕХАНИЗМА РЕАЛИЗАЦИИ ЗАДАЧИ (ЦЕЛИ)
ОБОРОНЫ СТРАНЫ. ФУНКЦИЯ ОБОРОНЫ ИЛИ ПРИНЦИП ОБОРОНОСПОСОБНОСТИ?**

В статье на основе анализа традиционных толкований теоретической конструкции функции обороны и выявления ее недостатков, предлагается заменяющее ее новое теоретическое решение: принцип обороноспособности, как более адекватное теоретическое средство решения задачи обороны страны.

Ключевые слова: главная цель, функция, функциональный подход, принцип, социальное государство, правовое государство, обороноспособное государство.

LUSINE BARSEGHYAN

Correspondence Degree Seeker of the
Public Administration Academy of the RA

**POSSIBLE CONSTITUTIONAL WAYS OF THE RESOLUTION MECHANISMS OF COUNTRY DEFENSE
ISSUE (PURPOSE). FUNCTION OF DEFENSE OR DEFENSIVENESS PRINCIPLE?**

In the Article, on the basis of traditional interpretation analysis of theoretical structure “function of defense” of the country, a new theoretical approach is suggested instead of it, that is defensiveness principle as more adequate theoretical mean of the problem solution.

Keywords: main purpose, function, functional approach, principle, social state, rule-of-law state, defensive state.

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս, ամբիոնի հայցորդ

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ՝
ԸՍՏ 2015Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

2015թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի միջոցով բովանդակային և ծավալային առումով նշանակալից փոփոխություններ կատարվեցին ՀՀ Սահմանադրության մեջ: Սույն հոդվածում համառոտ անդրադարձ է կատարվել այդ փոփոխությունների շնորհիվ խորհրդարանական փոքրամասնությունների իրավունքների ընդլայնման հարցերին:

Բանալի բառեր. Սահմանադրություն, Ազգային ժողով, խորհրդարանական փոքրամասնություն, քաղաքական մեծամասնություն, քննիչ հանձնաժողով:

МАРТЫН МАНУКЯН

Международный университет Евразия,
преподаватель юридической кафедры, соискатель

**РАСШИРЕНИЕ ПАРЛАМЕНТСКИХ ПРАВ НАЦИОНАЛЬНЫХ МЕНЬШИНСТВ,
СОГЛАСНО КОНСТИТУЦИОННЫМ ИЗМЕНЕНИЯМ 2015Г.**

6 декабря 2015 года в РА посредством референдума были внесены значительные объемные и содержательные изменения в Конституцию РА. В статье как результат этих изменений дан сжатый экскурс к вопросу о расширении парламентских прав нацменьшинств.

Ключевые слова: Конституция, парламент (Национальное собрание), парламентское меньшинство, политическое большинство, Следственный комитет.

MARTIN MANUKYAN

Lecturer in the “Law” Department of the Eurasia international University

**ENLARGEMENT OF THE RIGHTS OF PARLIAMENTARY MINORITIES AS PER THE CONSTITUENT
CHANGE HELD IN THE YEAR 2015**

On December 6, 2015 substantial changes were made in the Constitution of the Republic of Armenia. In the article below there is a survey referring to the issue of expanding the rights of the parliamentary minorities based on the changes.

Keywords: Constitution, Parliament (national Assembly), Parliamentary minority, Political majority, Investigative Committee.

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Հոդվածի շրջանակներում հեղինակը կատարել է պետության կառավարման ձևի՝ որպես ազգային անվտանգության հիմնախնդրի տեսական-իրավական վերլուծություն:

Կառավարման ձևի՝ որպես պետության ձևի կազմակերպակառուցվածքային բաղադրիչի և պետաիրավական ռեժիմի հարաբերակցության լույսի ներքո հեղինակի կողմից առաջ է քաշվել կառավարման ձևի՝ պետության բովանդակային բնութագրի վրա որոշակի ազդեցություն թողնելու գաղափարը: Դրանով իսկ պայմանավորված՝ ենթադրվում է, թե կառավարման ձևն ազգային անվտանգության համատեքստում օժտված է վտանգավորության որոշակի ներուժով, և նշված հանգամանքը հաշվի առնելով՝ գնահատվել է ազգային անվտանգության ռազմավարությամբ պետության կառավարման ձևով պայմանավորված վտանգների չեզոքացմանն ուղղված միջոցառումների նախատեսման կարևորությունը:

Բանալի բառեր. պետության ձև, պետական կառավարման ձև, պետաիրավական ռեժիմ, ազգային անվտանգություն, ազգային անվտանգության ռազմավարություն, սպառնալիք, վտանգ:

АЙК АРУТЮНЯН

Аспирант кафедры теории и истории государства и права юридического факультета ЕГУ

ФОРМА ПРАВЛЕНИЯ, КАК ПРОБЛЕМА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

В рамках настоящей работы автором был сделан теоретико-правовой анализ формы государственного правления как проблемы национальной безопасности.

В свете соотношения формы правления, как структурно-организационного компонента формы государства, с государственно-правовым режимом, автором была выдвинута идея некоторого влияния формы государства на его содержательную характеристику. В связи с этим предполагается, что форма правления имеет некий потенциал опасности в контексте национальной безопасности, и с учетом указанного факта оценивается важность предусмотрения стратегией национальной безопасности соответствующих мер по нейтрализации угроз национальной безопасности, обусловленных формой правления.

Ключевые слова: форма государства, форма государственного правления, государственно-правовой режим, национальная безопасность, стратегия национальной безопасности, угроза, опасность.

HAYK HARUTYUNYAN

PhD Student at the Chair of Theory of State and Law, YSU

THE FORM OF STATE GOVERNMENT AS A PROBLEM OF NATIONAL SECURITY

In the framework of this work, the author made a theoretical and legal analysis of the form of state government as a problem of national security.

In the light of the relationship between the form of government as a structural and organizational component of the form of the state with the state-legal regime, the author put forward the idea of some influence of the form of the state on the content characteristic of the state. In this regard, it is assumed that the form of government has some potential for danger in the context of national security, and taking into account this fact, it is important to consider the national security strategy to take appropriate measures to neutralize the threats to national security conditioned by the form of government.

Keywords: form of state, form of government, state-legal regime, national security, national security strategy, threat, danger.

ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱԼ

Իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին),
կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր),
Հագենի Համալսարանի Գերմանական և
Եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի,
ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ,
Բեռլինի Տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի Ոստիկանության և
անվտանգության կառավարման բաժնի դոցենտ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄՆ ՈՒ ԱՐԳԵԼՈՒՄԸ

Սույն հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունների գործունեության կասեցման և արգելման՝ իբրև **մարտնչող ժողովրդավարության** արտահայտության հիմնահարցերը: Մանրամասն մեկնաբանվում են ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի փաստակազմի բոլոր հատկանիշները, մասնավորապես՝ սահմանադրական կարգի բռնի տապալման քարոզի և այդ նպատակով բռնություն կիրառելու հասկացությունը, հատուկ ընդգծվում է **կուսակցական արտոնության**, այն է՝ սահմանադրորեն կուսակցություններին տրված առանձնահատուկ դատավարական պաշտպանության ու գոյության երաշխիքի կարևորությունը: Հոդվածում ներկայացվում է նաև կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու սահմանադրական վարույթը, այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման բովանդակությունն ու գործողությունը: Ներկայացվում են նաև կուսակցությունների արգելման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան և այլ երկրների իրավակարգավորումները: Հատուկ վերլուծության է ենթարկվում կուսակցության գործունեության արգելումից հետո պատգամավորական մանդատների ճակատագրի հարցը հատկապես ազատ մանդատի սկզբունքի լույսի ներքո, ինչպես նաև մանդատները կորցնելու համապատասխանությունը ՄԻԵԿ-ին:

ГОР ОГАНЕСЯН

Доктор юридических наук (Берлин),
магистр административных наук (Шпайер),
доцент кафедры немецкого и европейского конституционного и административного права, а также международного права в Университете Хагена,
доцент кафедры полиции и управления безопасностью
в Берлинском институте экономики и права

ՍՏՈՒՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐՄԵՇՄԱՆ ԴԵՅԱԿԵՐՄԱՆ ՍՊՈՒՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄՆ ՈՒ ԱՐԳԵԼՈՒՄԸ

В этой статье обсуждаются вопросы, связанные с приостановлением и запретом деятельности политических партий, как выражение **воинствующей демократии** в Республике Армения. Подробно комментируются все признаки состава статьи 46 части 4 Конституции Республики Армения, в частности, понятие пропаганды насильственного свержения конституционного строя и применения насилия с этой целью, особо подчеркивается важность **партийной привилегии**, то есть конституционных гарантий для особенной процессуальной защиты и существования, предоставляемых партий. В статье также представлено конституционное производство по приостановлению или запрету партий, содержание и действие решения Конституционного суда по этому вопросу. Представлены еще и практика Европейского суда по правам человека, а также правовые нормы других стран в отношении запрещения политических партий. Особенно обсуждается вопрос о судьбе депутатских мандатов после запрета партийной деятельности в свете принципа свободного мандата, а также соответствие утраты мандатов с ЕКПЧ.

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 105 2018

GOR HOVHANNISYAN

Doctor of Laws (Berlin),
 Master of Administrative Sciences (Speyer),
 Associate Professor at the Chair of German and European Constitutional and
 Administrative Law, as well as International Law at the University of Hagen,
 Associate Professor at the Department of Police and Security Management
 at the Berlin School of Economics and Law

SUSPENSION AND PROHIBITION OF THE ACTIVITIES OF POLITICAL PARTIES

This article discusses the issues related to the suspension and prohibition of the activities of political parties as means of expression of **defensive democracy** (democracy capable of defending itself) in the Republic of Armenia. All the elements of Article 46, Part 4 of the Constitution of the Republic of Armenia are interpreted in detail, in particular the concepts of advocating violent overthrow of the constitutional order and the use of violence for that purpose. The importance of **party privilege** is emphasized - the importance of constitutional guarantees for the specific procedural protection and for their existence provided to parties by the constitution. The article also describes the constitutional proceedings for suspension or prohibition of parties, the content and effect of the decision of the Constitutional Court on that matter. The practice of the European Court of Human Rights (ECHR) is also presented as well as the legal regulations of other countries on the prohibition of political parties. The issue of the fate of deputies' parliamentary mandates after the prohibition of party activities is also considered in the light of the principle of free mandate, as well as whether the loss of mandates is in line with the ECHR.

* * *

ԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
 իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՆԳՆՍԱՔՍՈՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
 ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Սույն գիտական հոդվածը վերաբերում է անգլոսաքսոնական իրավական համակարգում նախադեպային իրավունքի հիմնախնդրի վերլուծությանը: Պատմաիրավական առումով անդրադարձ է կատարվում նախադեպային իրավունքի պատմական զարգացման փուլերին և հետևանքներին:

Հոդվածում հանգամանորեն քննարկվում են ընդհանուր իրավունքի առաջացմանը նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, և այլ հարակից հարցեր:

Նկարագրվում են հնագույն ժամանակներում վեճերի լուծման եղանակներն ու այդ կապակցությամբ դատարանների մասնակցությունն ու գործունեությունը:

Քննարկվում է նաև նախադեպի բովանդակությունը՝ դրա երկու հիմնական կառուցվածքային մասերը՝ որպես տվյալ իրավունքի աղբյուրի պարտադիրության սկզբունքի միակ որոշիչ չափանիշ:

Բանալի բառեր. Համմուրաբիի օրենքներ, նախադեպ, ընդհանուր իրավունք, անգլոսաքսոնական իրավական ընտանիք, պարտադիրության սկզբունք:

АННА АКОБЯН

Соискатель НАН РА, Института философии,
социологии и права

**ПРЕЦЕДЕНТНОЕ ПРАВО В АНГЛОСАКСОНСКОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЕ
С ИСТОРИКО-ПРАВОВОЙ ТОЧКИ ЗРЕНИЯ**

Данная научная статья относится к анализу основной задачи прецедентного права в англосаксонской правовой системе. Затронуты, в историко-правовом аспекте, исторические этапы развития прецедентного права и его последствия.

В статье обстоятельно обсуждаются объективные и субъективные факторы, способствующие возникновению общего права, и другие сопутствующие вопросы.

Описываются методы разрешения споров, причастность и деятельность судов в этой связи в древние времена.

Также обсуждается содержание прецедента, его две основные структурные части, как единственный определяющий критерий для принципа обязательности источника данного права.

Ключевые слова: законы Хаммурапи, прецедент, общее право, англосаксонская правовая семья, принцип обязательности.

ANNA HAKOBYAN

An applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

**THE PRECEDENT LAW IN THE ANGLO-SAXON LEGAL SYSTEM FROM THE HISTORICAL AND
LEGAL POINT OF VIEW**

This scientific article refers to the analysis of the main problem of precedent law in the Anglo-Saxon legal system. From historical aspects, the historical development stages and consequences of the precedent law are being examined.

The article thoroughly discusses the objective and subjective factors contributing to common law and other related issues.

The ways of dispute solution in ancient times and the courts' participation and activities in this regard are described.

The precedent's content, as well as its two main structural parts, are also discussed as the only decisive criteria for the binding principle of the mentioned source of law.

Keywords: laws of Hammurabi, precedent, common law, Anglo-Saxon legal family, binding principle.

* * *

ԱՐԹՈՒՐ ՄԻՄՈՆՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի
Իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ՍՈՒՊՐԱՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն հոդվածում հեղինակը, հիմք ընդունելով տեսության և պրակտիկայում ձևավորված հիմնադրույթները, ներկայացրել է վերազգային կազմակերպությունների կողմից մշակված իրավական ակտերի ինկորպորացիայի ձևերը և դրանցում անդամ երկրների գործադիր իշխանությունների մասնակցության տեսակները: Հոդվածի շրջանակներում քննարկվել են իրավունքի ինկորպորացիայի դուալիստական և մոնիստական մոտեցումները: Հոդվածի մեջ շեշտադրումը հիմնականում կատար-

վել է գործադիր իշխանության դերի բարձրացմանը վերազգային կազմակերպությունների կողմից մշակված իրավական ակտերի ինկորպորացիայի գործընթացում:

Բանալի բառեր. վերազգային իրավունք, մոնիզմ, դուալիզմ, Եվրոպական Միություն, Եվրասիական տնտեսական միություն, Եվրոպայի Խորհուրդ:

АРТУР СИМОНЯН

Студент юридического факультета
Французского университета в Армении

ИНКОРПОРАЦИЯ ПРАВОВЫХ АКТОВ, ИЗДАНЫХ НАДНАЦИОНАЛЬНЫМИ ОРГАНИЗАЦИЯМИ, И ИСПОЛНИТЕЛЬНАЯ ВЛАСТЬ

В данной статье автор, основываясь на положениях теории и практики, представил виды инкорпорации правовых актов, изданных наднациональными организациями, и типы участия исполнительной власти членов-государств данных организаций. В рамках статьи обсуждались дуалистический и монистический подходы правовой инкорпорации. В статье основной упор сделан на поднятие роли исполнительной власти в процессе инкорпорации правовых актов, изданных вышеупомянутыми организациями.

Ключевые слова: супранациональное (наднациональное) право, монизм, дуализм, Европейский Союз, Евразийский Экономический Союз, Совет Европы.

ARTUR SIMONYAN

Student of the Faculty of Law
French University in Armenia

INCORPORATION OF LEGAL ACTS PROCEED BY SUPRANATIONAL ORGANIZATIONS AND EXECUTIVE POWER

In this article the author presents types of incorporation of legal acts proceed by supranational organizations and the role of member states' executive power in that process. In the frame of the article author presents dualistic and monist methods of incorporation. The main accentuation of the article is the role of executive power in the process of processing of legal acts developed by supranational organizations.

Keywords: Supranational law, monism, dualism, European Union, Eurasian Economic Union, Council of Europe

ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: